3. Գործություն (60,000) : Սե-էլլը (150,000) : Գո-
տիչ (70,000), զինուորական նաւահանգիստ :
Ծերեւ (50,000) : Ճեղքության որուն ամբողջը 1704
էն 'ի վեր Անդղիացւոց ձեռքն է :

4. Կրանքու (100,000) : Հոս են Արաբացի
իշխանաց պալտափն ԱլՀամզրայի աւերակնե-
րը : Մ-ը է (110,000) երեւելի է գինին :

5. $U_{\text{max}} = 30,000$ & $q_{\text{max}} = 20,000$:

6. Վալույա (150,000), մետաքսի գործարանները ունի, Ալեքսանդր (30,000), գինին անուանի:

7. Պարչէւնս (250,000), բերդաբաղաք և զինուորական նաւահանգիստ :

8. Առաջնահանու (80,000), 1808 ին և 1809 ին
քաղաքացիամբ դիմացաւ Գաղիացոց :

9. **Բարեկելուն** (25,000), ամուր քաղաք :

40. Առաջ ետք (Ա. Յակոբ) ու զամանելը (70,000). Հոս կը ցուցուի Յակոբոս առաքելոյն գե-

բեղմանը և երեւելի ուխտատեղի է : Գործառաւ (30,000)։ Ֆերաւ (20,000), ամուր քաղաք է Աղ-լանդեան ովկիանոսի վրայ : Հոս է նաւարանը :

11. Սանտաներ (35,000), Պուրէն (25,000), Սեկուլու . հոս մօտ է ֆիլիպպոս թ. էն շինուած էստրէլ անուն երեւելի շէնքը՝ վանք, եկեղեցի, գրատուն և գերեզմանք թաղաւորաց :

12. Վալաբուլու (40,000), Լեռ, Սալահուտ (14,000), անուանի համալսարանով : Ալմարէն . ե-րեւելի է մնդկի հանքը :

Հ. Սպանիոյ կղզիներն որո՞նք են :

Պ. Սպանիոյ կղզիներն են,

1. Պալէարեան կղզիք՝ Մայորտա, գլխաւոր քաղաքը Բալմա (40,000). Մէնորտա, գլխաւոր քաղաքը Մահոն, Միջերկրական ծովուն մէջ :

2. Գանարեան կղզիք և կունիւայէ կղզիներն՝ Ափրիկէի մէջ, (300,000) բնակչօք :

3. Անտիլան մեծ կղզիներն Գուայա և Բուրտու Բէտոն, Ամերիկայի մէջ, (2,000,000) բնակչօք :

4. Փէտպէան կղզիք՝ Ասիոյ մէջ :

5. Մարտանեան կամ Աստվածայի կղզիք, Գուրունեան կղզիք և Բելւ կոչուած կղզիք՝ Աւստրալիոյ մէջ :

Հ. Անտորա ի՞նչ է :

Պ. Անտորա Պիւռենեան լերանց մէջ Սպանիոյ պաշտպանութեան ներքեւ չէզոք հանրապետութիւն է, բնակիչները (12,000) :



Դ. Ա. Ս Ի Դ.

6. ՀՈՒՍԻՏԱՆԻԱ. ԿԱՄ ԲԱՐԹՈԿԱԼ,

Հ. Բորթոկալի վրայ ի՞նչ պատմական գիտելիք կայ :

Պ. ԺԲ. Պարուն մէջ Գասդիլիոյ թագաւորը Ալֆոնս Զ. այս երկիրը տուաւ Պուրկոնտցի Հենրիկոս իշխանին : Պուրկունտի տունը տիրեց մինչեւ 1580 :

Այս փոքր տէրութիւնը երեւելի եղաւ ԺԴ. Պարէն ետքը Եւրոպայէ գուրս շատ տեղերու տիրելով: Վասդոյ տէ կամա նաւապետը գլուաւ Արեւելեան Հնդկաստանի ճամբան 1498 ին . Պրաղիլեա գտնուեցաւ 1500 ին : 1580 էն ետքը Բորթոկալ կորմցուց գուրսի երկիրներըն, և նուաճեցաւ Սպանիացիներէն : 1640 ին նորէն գտաւ իւր ազատութիւնը, ունենալով թագաւոր Պրականցայի տունէն . մինչեւ յարդ Բորթոկալի թագաւորը այս տունէն են : Գամոէնս բանաստեղծն Բորթոկալի փառաւոր ժամանակը երգած է իւր Լուսիական անուն գիւցազնականին մէջ :

Հ. Բորթոկալի բնակիչք և զօրքը ո՞րչափ են:


Պ. Բորթոկալի բնակիչք (4,500,000) են, զօրքը՝ (70,000), նաւատորմիղը՝ 40 նաւ 360 թնդանօթով :

Հ. Բորթոկալի գլխաւոր քաղաքներն ո-րո՞նք են :

Պ. Բորթոկալի գլխաւոր քաղաքներն են,

1. Հետհան (220,000), մայրաքաղաք, գլխաւոր նաև ահանգիստ է Բորթոկալի, 1755 ին հոս մեծ երկրաշարժ եղաւ :

2. Սիներ, Լիսպոնայի մօտ լեռան մը զառի վայրին վրայ գեղեցիկ քաղաք է : Մաւրի-



ՍԻՆԵՐ

տանացի թագաւորք ի սկզբան հոս կը նըստէին : Այս քաղաքին մօտ վանք մը կայ բոլոր սենեակներուն պատերը սնկով (սանթար) պատաժ, որուն համար (յնկոյ վանք) կը կոչեն :

3. Գոյքալբա (18,000), ունի համալսարան : Եւստա (12,000) :

4. Պրատինայ, բերդաքաղաք : Այժմու Բոր-

թոկալի թագաւորք այս քաղաքին հին դուքսերուն ցեղէն են :

5. Օքուտա (90,000), ունի մետաքսի գործարաններ և ընտիր Բորթոկալի կոչուած դինի :

Հ. Բորթոկալի կղզիներն որո՞նք են :

Պ. Բորթոկալի կղզիներն են :

1. Ալարեան կղզիք, 160 մղոն դէպ արեւմուտք Լիսպոնայէ :

2. Մարտեան և Կանուն էլեան կղզիներն և ուրիշ տեղեր՝ Ափրիկէի մէջ :

3. Ասիոյ մէջ կամ և Տէռ Մալապարի եղերքը • Մաքասայ՝ Զինու մէջ Քանդոնի մօտ :

Դ Ա Ա Ի Ե.

Բ Ա Խ Զ Ի Ն Ե Խ Ր Ա Պ Ա

1. ԳԱՂԻԱ ԿԱՄ ՖՐԱՆՍԱ


Հ. Գաղիոյ վրայ ինչ պատմական գիտելիք կայ :

Պ. Գաղիա հին ատեն կեղտաց կամ Գաղատաց կը վերաբերէր, յետոյ Հոռմայեցիք առին այս երկիրը : Ե. դարուն սկիզբը Գերմանական ազգերուն ֆրանք կոչուած ցեղը տիրեց Գաղիոյ : Ֆրանք թագաւորաց ցեղը կը կոչուի Մերովեան . ասոնցմէ անցաւ իշխանութիւնն կարողուեան ցեղին յորոց մեծն կարուց թ. դարուն սկիզբը բոլոր Եւրոպայի վը-

րայ տարածեց իւր իշխանութիւնը : կարող-
սի մահուանէն ետքը գաղիա զատ թագաւո-
րութիւն եղաւ : ի վերջ կոյս ժ. դարուն իշ-
խանութիւնն անցաւ Գաբեդեան ցեղին : Այս
ցեղին թագաւորներն շատ տկար էին , և եր-
կիրը բաժնուած էր այլեւայլ դրեթէ ինքնա-
գլուխ իշխաններու : Հուտովիկոս ԺԱ.Ի ժամա-
նակէն (1461) սկսաւ զօրանալ թագաւորու-
թիւնը , ինքնագլուխ իշխանութիւնը նուաճե-
ցան : ԺԷ. դարուն Պուրպոնեան ցեղը դահա-
կալեց , և Հուտովիկոս ԺԴ.Ի ժամանակը թէ զօ-
րութեան և թէ ուսման և գիտութեան կող-
մանէ գաղիոյ ծաղկեալ ժամանակն էր : ԺԲ.
դարուն գէպ ՚ի վերջը (1789) մեծ յեղափո-
խութենէն ետքը Նարոլէոն Ա. իշխանութեան
հասնելով , գաղիա եղաւ կայսրութիւն 1804:
Յետ անկման Նարոլէոնի 1815 , Պուրպոնեանք
նորէն եկան : 1830 ին Պուրպոնեանք ինկան ,
և եկաւ Լուի Ֆիլիփ Օրլէանեան : 1848 ին Լուի
Ֆիլիփ ինկաւ , և եկաւ Նարոլէոն Գ. կայսր
որ 1870 ին Գերմանացիներէն յաղթուելով
գերի ինկաւ , և գաղիա եղաւ հանրապետու-
թիւն :

Հ. գաղիոյ երկիրը ի՞նչպէս է :

Պ. Հողը բարեբեր , կիման մեղմ և գեղե-
ցիկ . ժողովուրդն է երկրագործ , ձեռագործ
և վաճառական : Երկրին բերքն է ցորեն , վար-
սակ , հաճար , գարի , գինիի համար այգե-
կութք , ձէթ , շերամնուցանելու համար թթե-
նի և ճակնդեղ (ժանճար) որմէ շաքար կը շինեն :



Հ. Գաղիոյ բնակիչք և զօրքը ո՞րչափ են և երկիրն ի՞նչպէս կը բաժնուի :

Պ. Գաղիոյ բնակիչք (36,000,000) են: Զօրքը (800,000) պատերազմի ժամանակ : Նաւատորմիդը՝ 470 նաւ 5,000 թնդանօթով: Առաջ կը բաժնուէր Գաղիա 36 գաւառ, հիմա 84 քառական կոչուած 86 մաս կը բաժնուի :

Դ Ա Ա Ի Զ .

Հ. Գաղիոյ հիւսիսային կողման երեւելիքազաքներն որո՞նք են :

Պ. Գաղիոյ հիւսիսային կողման երեւելիքազաքներն են ,

1. ԲԱՐԻՉ, մայրաքաղաք (2,000,000): Լոնտրայէ ետքը աշխարհիս հոչակաւորագոյն քաղաքն է : Երեւելիք շէնքերն են չամալսարանը. թագաւորական Գրասունը. Բանթէոնն ուր են Վոլթերի և Ժան Ժագ Ռուսոյի գերեզմաններն . Լիւքսամպուրի պալատը . Էնվալիտ կոչուած ծեր զինուորաց տունը որոյ Փառաւոր Եկեղեցւոյն մէջ է մեծին Նարոլէոնի մարմինը . զինուորական Դպրոցը . Բալէ Ռոյեալ, Թիվյլերի և Լուվր պալատներն : Երեւելիք են՝ Շան տը Մարս, Շանդ Էլիզէ կոչուած տեղերը, Թիվյլերիի պարտէզը, Գոնդորտի և Վանտոմի հրապարակներն , որոց առաջնոյն մէջ է Լուքսորի Եղիպտական կոթողը : Բարիղի մէջ

կան շատ երեւելիք դպրոցներ, տպարաններ, թանգարաններ, պարտէզներ :

2. ԱԷՆ ոբն (25,000), Բարիղի մօտ, ուր են թագաւորաց գերեզմաններ :

3. ՎԵՐԱՅՈՒ (45,000), հոս է լուի ԺԴԻ պալատը և պատկերաց թանգարան մը: ՎԵՐԱՅՈՒ (Կուլիէլմոս), Բրուսիոյ թագաւորն, 1870 ին հոս օծուեցաւ կայսր Գերմանիոյ :

4. ԱԷՆ ՔԸՆ (80,000), Փարիզէն 2 մղոն դէպ արեւմնուոք: Այս տեղի պալատը Գալիացիք այրեցին 1870 ին :

5. ՕՐԵՆ (50,000), ունի ասուի և բամբակի գործարաններ :

6. ԱՆԴ (50,000), ունի կտաւի (քթանի) գործարաններ :

7. ԹՐՈՒ (40,000), ունի գինի և պտուղ:

8. ԼԵ ՄԱՆ (40,000), անուանի է կտաւեղէնի առուտուրով :

9. Ա.ԴԻ (60,000), Երեւելիք է մետաքսի գործարաններով:

10. ՊԱ-ԼԻՆԵՐ (40,000), բերդաքաղաք և նաւահանգիստ . ունի ծովային բաղանիք :

11. ԳՐԵ (25,000), ամուր նաւահանգիստ . ասկէ կ'անցնուի Սնդ-դիա իբր 1 ¼ ժամու մէջ:

12. ԼԻԼ (150,000), բերդաքաղաք . արուեստից կողմանէ անուանի է :

13. ՎԱԼՏԻՆԻ (25,000), Երեւելիք է պանինական կոչուած կտաւի և առանելաներու կողմանէ :

14. ՏԵՇԻՆԻ (30,000), զինուորական և ռեւտրական նաւահանգիստ :

15. Բուհն (100,000), ունի բամբակեղինաց երեւելի գործարաններ :

16. Լէ Հայր (75,000), երեւելի նաւահանգիստ է :

17. Շերտուր (37,000), զինուորական ամուր նաւահանգիստ ունի :

18. Պէտք (80,000), Գաղիոյ երկրորդ զինուորական նաւահանգիստն է, կընայ 500 պատերազմական նաւ առնուլ :

19. Բէն (60,000), Գաղիոյ թագաւորներն այս քաղաքին եկեղեցին կ'օծուէին :

20. Նախարարութեան վաճառք, առաջ՝ Պուրպուր վաճառք կ'ըսուէր : Վաճառքի ժողովուրդը նշանաւոր է ԺԶ. գարուն մէջ կընօքի համար, և 1792 ին թագաւորական տան համար քաղաքական պատերազմներով :

21. Բուժութ (30,000), չորս մեծ զինուորական նաւահանգիստներէն մին է :

ԴԱՍԱԿԱՐԱ

Հ. Գաղիոյ հարաւային կողման երեւելի քաղաքներն որո՞նք են :

Պ. Գաղիոյ հարաւային կողման երեւելի քաղաքներն են,

1. Պէտք (190,000), կարօն գետին վրայ՝ երեւելի է գինուոյն և քացախին համար :

2. Պէտքէց, ունի ծովային բաղանկք և ձեկնորսութիւն :

3. Թուրքուլ (127,000), կարօն գետին վրայ՝ անուանի է երկաթեղէն գործուածներուն համար :

4. Գաղիոյ (22,000), հոս ասուի (չուխայ) կը գործուի :

5. Մանիկէլ (55,000), ունի քիմիական նիւթոց երեւելի գործարաններ . նաեւ անուանի է բժշկական ճեմարանը :

6. Նէր (60,000), ունի մետաքսեղէնի և բամբակեղէնի գործարաններ :

7. Մարտէլ կամ Մարտէլս (300,000), Միջերկրական ծովուն վրայ . այս քաղաքն հիմնեցին Յոյնք Քրիստոսէ 600 տարի առաջ: Գաղիոյ բանուկ և վաճառաշահ քաղաքներուն առաջինն է :

8. Թուրք (77,000), Գաղիացւոց պատերազմական նաւերը հոս կը կենան, նաւարանն ու նաւահանգիստը բոլոր Միջերկրականին վրայ՝ մեծութեան կողմանէ մէկ հատիկ են :

9. Ալիքէն (17,000), Պապերն 70 տարի հոս նստան :

10. Լէն (300,000), Բարիղէն ետքը Գաղիոյ երկրորդ քաղաքն է այս, և մետաքսեղինաց կողմանէ առաջին տեղը կը բռնէ, որոց համար 90,000 գործաւորք կ'աշխատին: Ոսկերչութեան գործուածներու կողմանէ եւս երեւելի է :

11. Սէնտ Լուիս (95,000), 40 գործարան ունի զինուց :

12. Պէտական (47,000), գեղեցիկ բերդա-

Քաղաք . Ժամացոյցի և այլ նիւթոց երեւելի
գործարաններ ունի : Ասոր մօտ է Օսել ան-
ուանի այլը , ուր շատ քարացած նիւթեր
կան :

43. թէս (60,000), հին և անուանի քաղաք
է. ունի ասուի և բամբակի գործարաններ :
Հոս կը շնուի նաեւ շամբաննեա կոչուած
գինին :

44. Երեւելի են նաեւ վէտ՝ ջերմուկներուն
համար, և Սեպան՝ ուր գերմանացւոց անձնա-
տուր եղաւ Նաբոլէն Գ. 84,000 դօքով 1870,
Անդամական 2 ին :

15. Գործեր կղզին (260,000) բնակչոք. մայ-
բաքաղաքն է Այսպէս : Հոս ծնաւ մեծն նա-
բոլէոն :

16. Նէ” (50,000) և Շամպէրէ (20,000), Նաբոլէն գ. Սաւոյայէն առաւ այս քաղաքներն 1860ին, խտավիոյ պատերազմէն ետքը:

Հ. Եւրոպայէ դուրս գաղիոյ երկիրներն
որո՞նք են :

Պ. Եւրոպայէ դուրս Գաղիոյ Երկիրներն են,
Ա. Ավրիկէի մէջ՝ Աֆրէք (Ճէղայիր), (3 մի-
լիոն 800,000) բնակչօք : Այս Երկիրն 1830էն
հետէ Գաղիոյ կը վերաբերի : Պուրպուր կզգին,
Մարտական կզգւոյն վրայ տեղեր :

Բ. Ասիոյ մէջ՝ Բանառէլքրէ, Մահե, Քարբաւլ,
Շանառէլնահնը, և Քօչինչինի մէջ՝ տեղեր (300,000)
Հնդկաց մէջ: (2,000,000) Հնդկա-Զինու
մէջ:

գ. Ամերիկայի մէջ՝ Ս. Պետրոս և Միւնիլա կը լ-

զիները՝ Ս. Լորան ծոցին մէջ՝ կույսներ, և Մուշ-
նիներ, ու կուսարաբերք կղզիներն (275,000):

Դ. Ովկիանիոյ մէջ՝ Նոր Քաղաքանեւութ (72,000) և Մաքութեան ու Դահլիցի կղզիներն :

ΤΥΨΥ ΤΕΛ.

2. Հելուկատիս կամ զոհեցերիս

Հ. Հելուետիոյ վրայ Բնչ պատմական գետելիք կայ :

Պ. Հովհաննես ատենով Հելուետիա կ'ըս-
ուէր : Հելուետիոյ մէջ կը բնակէին կեղտեր ,
որ նախ Հռոմայեցիներէն , ապա ֆրանքնե-
րէն , և ապա Գերմանացիներէն նուաճուե-
ցան : Յուլիոս կեսարի ատեն Հռովմայեց-
ոց տակն էր , ետքն ալ Գերմանիոյ հետ միա-
ցաւ : Հելուետիոյ տիրող գլխաւոր ցեղն ե-
ղաւ Հապսապուրկի կոմսերուն տունը : Առաջին
անգամ 1291 ին երեք գաւառ ապստամբելով
Հապսապուրկի տունէն եղան հանրապետու-
թիւն : 1315 ին նոյն կոմսերուն դէմ եղած
պատերազմներէն ետքը՝ ուրիշ հինգ գաւառ
յարեցան առաջին երեքին , այնուհետեւ մին-
չեւ ժ. գար ազատ գաւառներուն թիւն եղաւ
13 , և այնպէս տեւեց մինչեւ Գալիոյ մեծ
յեղափոխութիւնը , 1798 : Այս գարուս մէջ
ուրիշ 12 գաւառ եւս աւելցաւ մինչեւ 1833,
այնպէս որ Հելուետիական հանրապետու-

թիւնը կազմող և քանին կոչուած դաւառաց
թիւն է հիմա 25, և տէրութիւնը կը կոչուի
Հելուետիան դաշտից լին կամ հասարակ ան-
ուամբ Զուէցերը :

Օրէնսդրական իշխանութիւնն և դլխաւոր
պաշտօնեաներն ընտրելու իրաւունքը կը վե-
րաբերի Դաշտից է որ դաւառային ե-
րեսիոխաններէ կը բաղկանայ, իսկ չործառէր
իշխանութիւնը կը վերաբերի Դաշտից է իոր-
հուրդն որ 7 անդամէ կը բաղկանայ, և կը նստի
Պէոն որ այս պատճառաւ դաշնակցութեան
դլխաւոր քաղաքն համարուած է :

Հ. Հելուետիական դաշնակցութեան ընա-
կից և զօրքը որչափ է, և դաւառներն քա-
նի ցեղ ժողովուրդներէ կը բաղկանան :

Պ. Հելուետիական դաշնակցութեան եր-
կիրներուն բնակիչն է (2,700,000), զօրքը՝
(200,000), և դաւառները կը բաղկանան 3
տահմանակից ազգերու վերաբերեալ, այսինքն՝
Գերմանական, Գաղիական և Խոտալական ժո-
ղովուրդներէ : Երկրին մէջ Փրանսերէն և
Գերմաներէն կը խօսուի : Կրօնքը՝ Բողոքակա-
նութիւն և Հռովմէագաւանութիւն է : Եւ-
րոպիոյ ամենէն բարձր լեռները այս երկրին
մէջ են, ինչպէս Ալպեան հօտին, որոյ դլխաւոր
դագամներն են՝ Մօն-լու, Մօն-լուար :

Հ. Հելուետիական դաշնակցութեան դրւ-
խաւոր քաղաքներն որո՞նք են :

Պ. Հելուետիական դաշնակցութեան գրւ-
խաւոր քաղաքներն են,

Գերմանական մոսին մէջ՝

1. Պէտ. (35,000), Զուէցերի ժողովը հոս
կը դումարի : Ունի համալսարան և բազմա-
թիւ գեղեցկալայրեր : Մայր եկեղեցւոյ եր-
դէհոնն անուանի է :

2. Պաէլ կամ Պալ (40,000), Ուէն գետին
վրայ Հելուետիոյ հարուստ և առաջին վա-
ճառաշահ քաղաքն է . թուղթ շինելու ար-
հետան այս տեղ դանուած է կըսուի . ունի
համալսարան և երեւելի տպարան :

3. Ցի-ռէ+ (20,000), Համմնուն լճին վրայ
է . ունի համալսարան, բազմարուեստեան
դպրոց, երեւելի գործարաններ բամբակե-
ղինի և մետաքսեղինի . այս է Զուէցերի ամե-
նէն ճարտար արհետաւորաց քաղաքը :

4. Լուցիր (12,000) . այս քաղաքին շուրջը
շատ գեղեցիկ վայրեր կան :

5. Սէ կու (15,000), հոս է Սուրբ կալոս
անուն անձէն հիմնուած վանքն որ երեւելի
է : Ունի բամբակեղինի գործարաններ :


6. Շաֆհանէլ (9,000), ասոր մօտ է Հուե-
նոսի լուսէն անուն ջրմէժը :

Հ. Ալպեան լերանց վրայ ինչ դիտելիք
կայ .

Պ. Ալպեան լերինք մշտնջենական ձեամբ
ծածկուած են, այս լերանց սառերը երբեմն
յանկարծ վար կը գլուրին ահագին շառաջ-
մամբ և մինչեւ իսկ մարդոց կորուստ ալ կը
պատճառեն :

Եւրոպիոյ դլխաւոր գետերուն ծայրերը

Զուէշերեայ լեռներէն կ'սկսին , ինչպէս , դահուբ ,
Հաստանո , Փօ , և այլն :



ԱԼՊԵՅՆ ԼԵՐԻՆՔ ԿԱԾՄ (ՄՈՒ ԳԼՈՒ)
ՍՊԻՏԱԿ ԼԵՐ

Թաղիական եռ իտաղական մասերում մէջ՝

1. ՃՇՆԵՐԻ կամ ԺԷՆԿ (45,000) , Զուիցերիսց
ամենէն երեւելի քաղաքն է . ունի համալսա-
րան և երեւելի դպրոցներ : Արուեստներու ,
մանաւանդ ժամացուցագործութեան մէջ ան-
ուանի է :

2. Լողան (20,000) , ճէնէվրայի լճին վրայ
գեղեցիկ քաղաք է :

3. Նեղաննել կամ Նայինդուր (10,000) , ունի
ժամացուցի գործարաններ :

4. Թրերուր (11,000) , գեղեցիկ գընկք քա-
ղաք մ'է :

Դ Ա Ս Ի Թ.

3. ՀՈԼԱՆՏԱ

Հ. Հոլանտայի վրայ ի՞նչ պատմական գե-
տելիք կայ :

Պ. Քանի մը գերմանական ցեղեր կը բնա-
կէին այս երկիրն հին ատեն : Թ. գարուն մէջ ,
երբ մեծին կարողոսի տէրութիւնը բաժնուե-
ցաւ , Հոլանտա եղաւ գերմանական դքսու-
թիւն և կարողոս Են ետքը , որ գերմանիոյ
միանգամայն Սպանիոյ թագաւոր էր , երբ
Սպանիա զատ թագաւորութիւն եղաւ , Հո-
լանտա Սպանիոյ անցաւ , բայց Փիլիպոս Բ.փ.
Սպանիոյ թագաւորին բոնութիւններուն
պատճառաւ 7 Հոլանտական գաւառք ապրա-
տամբելով 1575 ին հաստատեցին հանրապե-
տութիւն մը որ եղաւ մեծ ծովային տէրու-
թիւն անուանի հարստութեամբ և վաճառա-
կանութեամբ , նաեւ գիտութեանց և գեղար-
ուեստից կողմանէ : Հոլանտայիք հաստատե-
ցին 1602 ին Արեւելեան Հնդկաստանի ընկե-
րութիւնը : Բայց մօտ ՚ի սկիզբն ժիշտ գարուն ,
1714 էն ետքը , Հոլանտա սկսաւ ծովային զօրու-
թեան և վաճառականութեան կողմանէ տեղի

տալ Անգղիոյ : Մեծին Նաբոլէսնի ժամանակ 1806 Հոլանտա կորսնցուց նաեւ իւր անկախութիւնն և 1814 ին եղաւ թագաւորութիւնն , բայց հարաւային հռոմէական կաթողիկ և արուեստագէտ մասն հիւսիսային բողոքական և վաճառական մասէն ապստամբելով 1830 ին եղաւ զատ թագաւորութիւնն որ կը կոչուի Բեղդիա (Պէլճիգա) :

Հ. Հոլանտայի բնակիչն է զորքը ո՞ր չափ է :

Պ. Հոլանտայի բնակիչն է (3,800,000), զօրքը՝ (63,000) , նաւատորմիզը՝ 122 նաւ 1245 թնդանօթով : Թագաւորին իշխանութիւնը չափաւորեալ է երկու սենեակներէ բաղկացեալ ազգային ժողովով մը :

Հ. Հոլանտայի գլխաւոր քաղաքներն ու բոնքը են :

Պ. Հոլանտայի գլխաւոր քաղաքներն են ,

1. Հայ կամ Լ Հ (100,000) , մայրաքաղաք . ունի համալսարան :

2. Ա.Մ.Ս.Տ.Ե.Ր.Ա.Մ (290,000) , Եւրոպայի հարուստ և վաճառաշահ քաղաքներէն մին է : Հիւսիսային ծովուն եղերքը Ամսդէլ գետին բերանը շինուած է 90 կղղեակներու վրայ որ 292 կամուրջներով իրարու հետ կապուած են : Ժամանակաւ հոս Հայոց տպարան կար :

3. Բ.Ռ.Շ.Է.Ր.Պ.Ա. (130,000) , Մէօղ գետին վը բայ մեծ ու վաճառաշահ քաղաք , մանաւանդ ցորենի և ծխախոսոյ :

4. Լեռն (40,000) , ունի համալսարան :

5. Ո-Ռ.Է.Խ. (60,000) , ունի մետաքսեղէնի գործարաններ և համալսարան :

6. Նէմէն (23,000) , արուեստներով ծաղկեալ անքւանի քաղաք է :

Հ. Ուրիշ Բնէ Երկիր կը վերաբերի Հոլանտայի :

Պ. Հոլանտայի կը վերաբերի նաեւ Լիւքսեմբուրկի դքսութիւնը որ Գերմանիոյ մաս է Հոլանտայի իշխանութեան ներքեւ յատուկ սահմանադրութեամբ , ունի (200,000) բնակիչ : Գլխաւոր քաղաքն է Լիւտունադուր (15,000) որոյ ամրութիւնները փլցունել տուաւ Նաբոլէսն Գ. 1867 ին :

Հ. Եւրոպայէ դուրս Հոլանտայի Երկիրներն որո՞նք են :

Պ. Եւրոպայէ դուրս Հոլանտայի Երկիրներն են :

1. Ա.սիոյ մէջ՝ Սումառուս և Ճ-Ճ 15 $\frac{1}{2}$ միլիոն բնակչօք , և Սումառեան կղղիք :

2. Ա.փրիկէի մէջ՝ Սուբբ Գէորգ :

3. Ամերիկայի մէջ՝ կույանայի մէկ մասը (90,000) և փոքր Անգլիան կղղիներէն Ա.Ե.Մ.Պ.Ա. , Ա. Մարտինոս , Սաու և Քէրուսաս :



ԴԱՍ Լ.

4. ԹԵՂԳԻԱ որ է ՊԵԼՃԻԳԱ

Հ. ԲԵՂԳԻՈյ բնակիչը և գորքը ո՞րչափ է :

Պ. ԲԵՂԳԻՅ բնակիչն է (5,000,000), զօրքը՝ 100,000, նաւատորմիզը՝ 10 նաւ 50 թնդանօթով : Թաղաւորին իշխանութիւնը չափաւորեալ է երկու սենեակներէ բաղկացեալ աղդային ժողովով :

Հ. ԲԵՂԳԻՅ գլխաւոր քաղաքներն որո՞նք են :

Պ. ԲԵՂԳԻՅ գլխաւոր քաղաքներն են,

1. ՊԵՂԳԻՆ (320,000), մայրաքաղաքը որ ՊԵՂԳԻՊԱՅԻ ամենէն մեծ, արուեստիւք և վաճառականութեամբ ծաղկեալ քաղաքն է : Ասոր մօտ է վաղերլո գեղն ուր նաբոլէոն մեծ 1814 ին յաղթուեցաւ :

2. ԱՐՄԱՆ (130,000), ամուր և վաճառաշահ բերդաքաղաք է . ունի նաւահանգիստ և նաւարան : Անուանի է մայր եկեղեցին :

3. ԿԱՆԻՐ (125,000) . Շէլտէ և լայս գետերուն բերանը ուր 27 կղղիք կը ձեւանան որ 309 կամրջով իրարու հետ կապուած են : Ունի համալսարան, բամբակեղէնի գործարաններ և տպարաններ :

4. ՊԵՐԵՎ (50,000), վաճառաշահ քաղաք է . ունի կառավագական և առանձին գործարաններ նաև գեղեցիկ ջրանցքներ :

5. ՕՐԵՆԻՐ (17,000) . ունի ծովային բաղանիք :

6. ՄԱՆ կամ ՊԵՐԻ (25,000), բերդաքաղաք՝ մեծ ածխահանք ունի . ասոր մօտ է ԺԻՄՄԱՐԻ դաշտը՝ արուեստից կողմանէ անուանի :

7. ԼԵՒ կամ ԼԵ-ՌԵԻ (105,000), ՄԷօղ գետին վրայ . ունի պողպատի և երկաթի մեծ գործարաններ, թնդանօթի ձուլարաններ . իր մօտը մեծ ածխահանք կայ և գլխաւոր առուտուրն է հանքածուխ :

8. ՆԱԴԻՐ (27,000), բերդաքաղաք . հու 1815 ին մեծ յաղթութիւն մ'ունեցաւ նարօլէօն Ա. Բրուսիացւոց դէմ :

9. ԼԱ-ՎԻՆ (33,000), ունի համալսարան : ՊԵՂԾԻՊԱՆ ՊԵՂԾԻԱՅԻՆ դուրս երկիր չունի :

ԴԱՍ Լ. Ա.

5. ԳԵՐՄԱՆԻԱ

Հ. ԳԵՐՄԱՆԻՈյ վրայ ի՞նչ պատմական գիտելիք կայ :

Պ. ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ազգը կը սկսի յիշուիլ պատմութեան մէջ Քրիստոսէ իրը դար մը առաջ : Յամի Տեառն 843 ին, երբ մեծին կարուսի կայսրութիւնը բաժնուեցաւ որդւոցը, ԳԵՐՄԱՆԻԱ զատ թագաւորութիւննեղաւ: 911 էն ետքը ԳԵՐՄԱՆԻՈյ թագաւորներն չուոմի Պապէն պատմակուելով կը կոչուէին կայսր, և ԳԵՐՄԱՆԱԿԱՆ թագաւորութիւնը կոչուեցաւ գերմանական թագաւորութիւնը:

« Սուրբ Հռոմէական կայսրութիւն » : Գերմանիոյ կայսերը մինչեւ մեծն Նաբուշոն « Հռոմէական կայսր » տիտղոսը կրեցին : 1815 ին կազմուեցաւ « Գերմանական դաշնակցութիւնը » որ 39 մեծ և փոքր տէրութիւններէ կը բազկանար , որոց մէջ դլաւոր էին Աւտորիա և Բրուսիա : Ելքուփիկ Հոլշտայնի պատճառաւ այս երկու մեծ գերմանական տէրութիւններն չկրցան իրենց մէջ միաբանել և 1866 ին ծագեցաւ Աւտորայ-Բրուսիական պատերազմը : Բրուսիա յաղթեց , և հիւսիսային գերմանիոյ փոքր տէրութեանց մէկ մասը միացուց իրեն հետ , մնացածներուն հետ դաշնակցութիւն մը կազմեց , որ կոչուեցաւ « Հիւսիսային գերմանական դաշնակցութիւն » , խոկ հարաւային գերմանիոյ տէրութիւնք , Պաւիէրա , Վիւրթէմպէրկ , Պատըն և Հէս , կազմեցին ուրիշ դաշնակցութիւն մը որ կոչուեցաւ « Հարաւային դաշնակցութիւն » : 1866 ին և 67 ին Բրուսիա առանձին դաշամբ իրեն հետ կապեց նաև վերոյիշեալ հարաւային տէրութիւններն , այնպէս որ երբ 1870 ին Ֆրանգոյ-Գերմանական պատերազմը ծագեցաւ , արդէն բոլոր գերմանիա , բաց Ավտորիոյ , ներքուստ կապուած էին իրարու հետ : Այս պատերազմին եազը , 1871 յունուար 17 ին , բոլոր գերմանական տէրութիւններն Բրուսիոյ կուիէլմոս (Վիլհէլմ) թագաւորն ընդհանուր գերմանիոյ ժառանգական կայսր ընտրեցին , և այսպէս բոլոր գերմանիա եղաւ այլ եւ այլ

Գերմանացի տէրութիւններէ բաղկացեալ կայսրութիւն մը :

Հ. Գերմանիոյ կայսրութեան մէջ քանի տէրութիւն կայ :

Պ. Գերմանիոյ կայսրութեան մէջ 25 տէրութիւն կայ , որոց գլխաւորներն են չորս թագաւորութիւնք , 1. Բրուսիա , 2. Պաւիէրա , 3. Սաքսոնիա և 4. Վիւրթէմպէրկ , և 5 Պատընի ու 6. Հէսի մեծ դքսութիւններն , և 7. Ալսաս ու Լորէնի դաւառները :

Դ Ա Ա Լ Բ .

1. ԲՐՈՒՍԻԱ.

Հ. Բրուսիոյ բնակիչներն ո՞րչափ են , գըլխաւոր քաղաքներն որո՞նք են :

Պ. Բրուսիոյ բնակիչներն են 25 միլիոն , և գլխաւոր քաղաքներն են ,

1. Պէրլին , մայրաքաղաք (1,000,000) , գեղեցիկ և կանոնաւոր կերպով շինուած : Ունի երեւելի համալսարան , գիտարան , դպրոցներ , հրապարակներ , հոյակապ շինքեր , եկեղեցիներ , պարտէզներ : Պէրլին առուտուրի , արուեստներու և գրամական գործողութեանց կողմանէ Եւրոպիոյ երկրորդ կարգի քաղաքներէն մին է :

Այս քաղաքը 1757 ին Ավտորիացւոց , 1760 ին Ռուսաց և 1806 ին ալ Ֆրանսացւոց ձեռքն անցաւ :

2. Բարեկամ (40,000), Երկրորդ արքայանիստ քաղաք : Ունի գեղեցիկ պալատ մը :
3. Պրանդէնդուրէն (26,000) :
4. Տարբերէնդուրէն (15,000), հոս է կուլիէլմնս գ. ի շիրիմը :
5. Պրեուլու (240,000), ունի համալսարան :
6. Մակրէնդուրէն (40,000) : Շնչելոյզ մեքենան հոս հնարուեցաւ 1154 ին :
7. Ընկուէտ, Երեւելի աղահանք ունի որմէտարին 800,000 կենդինարաղ կ'ելլէ :
8. Հաւէ (50,000), ունի Երեւելի համալսարան :
9. Մէնաթէր (25,000). Հոս Հռոմէականք ունին աստուածաբանական և փիլիսոփիայական ճեմարան : Հոս կնքուեցաւ 1648 ին վեսդֆալեան դաշինքը :
10. Քէօն (Քոլոնիա) (125,000) թէնոսի վրայ . ունի Երեւելի եկեղեցի մը : Թուղէնս անուանի պատկերհանն հոս ծնաւ :
11. Սոլինէն (13,000) Երկաթէ և պողպատէ դործուածներուն համար անուանի է :
12. Առէն (68,000), կարոլոս մեծին քաղաքն էր, ուր է նաեւ անոր մարմինը : Գերմանիոյ կայսերը հոս կը պսակուէին :
13. Քէնէնէնդէրէն (120,000), Պալդիկ ծովուն վրայ հին ու փառաւոր քաղաք է . սաթի (քէհրիպար) մեծ առուտուր ունի : Ունի համալսարան . Հոս ծնաւ Քանթ անուանի Գերմանացի փիլիսոփիան :
14. Տանգէն (100,000), Վիսթուլա գետին

- բերանը ամուր քաղաք է . Երեւելի է ծովային վաճառականութեամբ : Հոս ծնաւ ֆարէնհայդ բնադէտը :
 15. Ջրանժուրէ Մայն գետին վրայ (80,000) : Գերմանիոյ դաշնակցական ժողովը հոս կ'ըլլար : Դրամական մեծ դործեր կ'ըլլան հոս : Գերմանիոյ հին կայսերը հոս կ'ընտրուէին :
 16. Շէքէտ (13,000) :
 17. Քառուէլ (40,000) . ասոր մօտ է վիլհէլմանէօնէ կոչուած տեղն ուր Նաբոլէնն գ. իրրե գերի դրուեցաւ . Գերմանացւոց անձնատուր ըլլալէն ետքը :
 18. Հաննէգը (100,000) . Հոս է Լայպնից վիլսոփիային բնակարանը : Հոս ծնաւ Հէրշէլ Երեւելի աստեղագէտը :
-
- ### Դ Ա Ս Լ Գ.
2. ՊԱԼԻՒՔԱՅ
 - Հ. Պաւիէրայի բնակիչներն որչափ են :
 - Պ. Պաւիէրայի բնակիչներն են (5,000,000) :
 - Հ. Պաւիէրայի դլխաւոր քաղաքներն որո՞նք են :
 - Պ. Պաւիէրայի դլխաւոր քաղաքներն են ,
 4. Միհնիս կամ Մէնէփէն (170,000), մայրաքաղաք : Գերմանիոյ ծաղկեալ քաղաքներէն մին է . ունի համալսարան , ճարտարապետութեան այլ և այլ տեսակներուն համեմատ շնուրած հոյակապ եկեղեցիներ , պատկերնե-

ըու և արձաններու թանգարաններ և պաշտոններ :

2. Ա-կառարէ կամ Ա-կառն (50,000) . Մեծաշէն է քաղաքատունը . հոս կը հրատարակուի Գերմանիոյ երեւելի լրադիրն որ կը կոչուի « Ընդհանուր լրադիր » :

3. Բ-րէդուն (30,000) , Դանուբի վրայ . հոս է Վահալլ կոչուած մարմարիոնէ տաճարը ուր կան անուանի Գերմանացոց կիսարձաններն : Հոս ծնած է Քէրլէր աստեղադէտը :

4. Ներէնդէրէ (80,000) , Անուանի է այլ և այլ տեսակ ձեռագործներով , մանաւանդտղայոց խաղալիկներու կողմանէ :

5. Սէյէր (15,000) , Գերմանիոյ կայսերաց գերեզմանն հոս էր :

6. Վէրջպարէ (40,000) , Մայն գետին վրայ . հոս է Հռոմէականաց անուանի համալսարանը :

3. ՍԱ.ՔՍՈՒԽԱ

Հ. Սաքսոնիոյ բնակիչներն ո՞րշափի են :

Պ. Սաքսոնիոյ բնակիչներն են (2,500,000) :

Հ. Սաքսոնիոյ գլխաւոր քաղաքներն որո՞նք են :

Պ. Սաքսոնիոյ գլխաւոր քաղաքներն են ,

1. Տէլլու (150,000) , Ելպա գետին վրայ . ոնի երեւելի կամուրջ 720 կանգուն երկայն և 18 կանգուն լայն . պատկերաց , հնութեանց , պատմութեան և ուրիշ թանգարաններ , երեւելի պալատ մը « Ճարոնեան պա-

լատ » կոչուած ուր կայ հարուստ մատենագարան մը : Ծնոտիր թանգարաններուն համար կը կոչուի « Գերմանիոյ ֆիորէնցան » :

2. Լայնցէն կամ Լէբէլ (90,000) , Մէկ ու կէս ժամ հեռաւորութեան մէջ 23 զիւղ ունի բոլորտիքը՝ (50,000) բնակչօք . համալսարան մը , երեք մեծ տօնավաճառ : Տպարաններն և գրոց առուտուրն երեւելի են : Հոս ծնաւ կոյցանից վիլիսուփան :

3. Ֆրայուրէ (20,000) , Ունի արծաթի հանք :



Դ Ա Ս Լ Դ .

4. ՎիերթէՄՊէՐԿԻ

Հ. Վիերթէմպէրկի բնակիչներն ո՞րշափի են :

Պ. Վիերթէմպէրկի բնակիչներն են (1 միլիոն 800,000) :

Հ. Վիերթէմպէրկի երեւելի քաղաքներն ուրներ են :

Պ. Վիերթէմպէրկի երեւելի քաղաքներն են ,

1. Մեննէկարտ (70,000) , Մայրաքաղաք է : Ինչպէս Լայբցիկ և Պէրլին , այնպէս հոս երեւելի է գրոց առուտուրն :

2. Թէնպէնէն (9,000) , Ունի համալսարան :

3. Ռէ (20,000) , Դանուբի վրայ Գերմանիոյ ամուր քաղաքներէն մին է . 1805ին ֆրանսացիք հոս մեծ յաղթութիւն մը ըրին :

4. Լուէցպարէ (12,000) , Այս է երկրորդ թագաւորանիստ քաղաքը :



5. Պ Ա Տ Է Ն

Հ. Պատէնի բնակիչներն ո՞րչափ են :
Պ. Պատէնի մեծ դքսութեան բնակիչներն
են (1,500,000) :

Հ. Պատէնի գլխաւոր քաղաքներն որո՞նք
են :

Պ. Պատէնի գլխաւոր քաղաքներն են,
Պ. Գոստանց (9,000). Հոս է մեծ դուքսին
ամարանոցը :

2. Պատէն-Պատ (8,000), Ունի երեւելի ջեր-
մուկներ, որուն համար ամէն տարի մեծ
քաղմութիւն կ'ըլլայ հոս :

3. Գառլեւուն (30,000), Մայրաքաղաք . վո-
ղոցներուն և շէնքերուն կամոնաւորութեան
և գեղեցկութեան կողմանէ անուանի : Այս
քաղաքը շինուեցաւ 1715 ին :

4. Մանես (30,000), Ամուր քաղաք է Ուէ-
նի մօտ . ունի դպրոցներ և դիտարան :

5. Հայուելեր (20,000), Անուանի են հա-
մալսարանը և դպրոցներն :

Պ Ա Ս Լ Ե .

6. Հ Ե Ս

Հ. Հէսի մեծ դքսութեան բնակիչներն ո՞ր-
շափ են :
Պ. Հէսի մեծ դքսութեան բնակիչներն են
(880,000) :

Հ. Հէսի գլխաւոր քաղաքներն որո՞նք են :
Պ. Հէսի գլխաւոր քաղաքներն են,
1. Տարհար (40,000), Հոս կայ տպագրու-
թիւնը հնարող կուղդէմպէրկի անդրին :
2. Վայն (13,000) :
Հ. Գերմանիոյ ուրիշ երեւելի քաղաքներն
որո՞նք են :
Պ. Գերմանիոյ ուրիշ երեւելի քաղաքներն
են, Վայն (15,000), այս քաղքէն էին Շիլ-
լէր, Կէօթէ և Հէրտէ երեւելի մատենա-
գիրք : Ենա, ունի համալսարան : Գոտուրէն
(14,000) : Կոն (20,000) : Համուրէն (225,000),
Երոպայի երեւելի նաւահանգիստներէն մին.
առուտուրի կողմանէ Լոնտրայի և Լիվրուլի
կը մօտենայ :

7. Ա Լ Զ Ա Ց Ե Ւ Կ Ո Ր Ե Ն

Հ. Այս գաւառներուն բնակիչը ո՞րչափ է :
Պ. Այս գաւառներուն բնակչաց թիւն է
(1,700,000) :

Հ. Այս գաւառներուն գլխաւոր քաղաք-
ներն որո՞նք են :

Պ. Այս գաւառներուն գլխաւոր քաղաք-
ներն են,

1. Ստրատուրէն (85,000), Ուէն գետին մօտ
ամուր քաղաք է . ունի երեւելի եկեղեցի մը,
որուն զանդակատունը 142 մեթր բարձրու-
թիւն ունի : Յովհաննէս կուտաէմպէրկի այս

տեղ հնարեց տպագրութեան արհեստը 1436ին։ Նաև ունի համալսարան, գործարաններ։ Այս քաղաքը 1681, սեպտ. 28 և 30 ին առին Գաղիացիք, և 1870, գարձեալ սեպտ. 28 և 30 ին նորէն անցաւ Գերմանացւոց։

2. Մարտիրոս (12,000), անուանի է բամբակի գործուածներուն համար։ 40 հազար գործաւոր կ'աշխատին այս գործին մէջ։

3. Քոչար (24,000), արուեստներու կողմանէ անուանի։

4. Մէլեճուէն (60,000), բամբակի գործուածներուն համար անուանի։ 60 հազար գործաւոր կ'աշխատին այս գործին մէջ։

5. Մէջ (55,000), Մօղէլ գետին վրայ խիստ ամուր քաղաք է։ Հու 1872, հոկտ. 27 ին Պաղէն գաղիացի զօրապետն երկար պաշարումէ մը յետոյ անձնատուր եղաւ գերմանացւոց 170 հազար զօրքով, որոց մէջ կային 3 մարածախտ և 6 հազար պաշտօնակալ։

Դ Ա Ս Ա Լ Զ .

6. ԱԻՍՏՐՈՅ-ՌԻՆԿԱՐԱԿԱՆ ԿԱՅՍՏՐՈՒԹԻՒՆ

Հ. Աւստրիոյ վրայ ինչ պատմական դիտելիք կայ։

Պ. Աւստրիա հին ատենը Գերմանիոյ մէջ գքսութիւն էր։ Ի վերջ կոյս ժի. գարուն Զուհոց էրայի մէջ Հապսագուրիկի կոմսութեան իշխա-

նը Բոստղի զԱւստրիա Հապսագուրիկի հետ միացուց, և եղաւ կայսր Գերմանիոյ։ Անկէ ետքը Գերմանիոյ կայսերը եղան Հապսագուրկ-Աւստրիոյ տունէն։ 1806 ին ֆրանկիսկոս Ա. հրաժարելով Գերմանիոյ կայսր տիտղոսէն՝ սկսաւ կոչուիլ Աւստրիոյ կայսր։ Աւստրիայ կայսրութիւնը քանի մը տարիէ հետէ սկսաւ կոչուիլ Աւստրոյ-Ռւնկարական կայսրութիւն։ Կայսրը նոյն Հապսագուրկ-Աւստրիոյ տունէն է։ Հ. Աւստրոյ-Ռւնկարական կայսրութեան երկիրներն որո՞նք են։

Պ. Հապսագուրիկի տունէն գերմանական կայսերը առաջ շատ երկիրներ ունէին Եւրոպայի մէջ, բայց անոնց մեծ մասը կորուսին։ Աւստրիոյ այժմու երկիրներն են,

1. Ա-ստրիտ և Սաւարուտի որ գքսութիւն են և ժողովուրդը Գերմանացի։ գլխաւոր քաղաք՝ Վիեննա։

2. Ստրետ կամ Խորէտ, ժողովուրդը Ալան և Խոալացի։ գլխաւոր քաղաք՝ Կրուց։

3. Խուրէտ կամ Լէ-էրէտ, ժողովուրդը մեծաւ մասամբ Ալան։ գլխաւոր քաղաք՝ Թրէնտ։

4. Թէրուլ, ժողովուրդը Գերմանացի և Խոալացի։ գլխաւոր քաղաք՝ Խուրէտ։

5. Պոնեդէտ, Մորտէտ և Սէլէտ, ժողովուրդը մեծաւ մասամբ Ալան։ գլխաւոր քաղաք՝ Բէրն և Պէտ։

6. Ռանկարի թագաւորութիւնը, ժողովուրդը Ռւնկարացի։ գլխաւոր քաղաք՝ Փէրտ։

7. Թէրանէլշտէտ (Սիպէնպիւրկէն), ժողո-

Վուրդը խառն , Գերմանացի և Ռւնկարացի .
Գլխաւոր քաղաք՝ Հերմանշտադ :

8. Ալեսոնէտ , Խըռուտանէտ , և Զինուորական սահմաններն , ինչպէս նաեւ Պունիտ և Հերցեկովին կոչուած գաւառներն որ Թուրքիոյ սահմանակից են : Այս գաւառներուն ժողովուրդն ևս Սլաւ է :

9. Դաղձոտիտ (Տաղմացիա) . Ժողովուրդն է Սլաւ . Գլխաւոր քաղաք՝ Զորա :

10. Կութիտ , Ժողովուրդը Բոլնիացի (Լեհ) .
Գլխաւոր քաղաք՝ Լեհուրի :

11. Պուտովիտ , Ժողովուրդը խառն :

Հ. Աւստրիոյ կայսրութեան բնակիչը ո՞րշափ է :

Պ. Աւստրիոյ բնակչաց թիւն է 37 միլիոն .
9 միլիոնը Գերմանացի է , մնացեալներն մեծաւ մասամբ Սլաւ , Ռւնկարացի , և քիչ մը Հայ , Հրեայ և Գնչու :

Հ. Այս Ժողովուրդոյ մէջ քանի տեսակ կրօնք կամ դաւանութիւն կայ :

Պ. 29 միլիոն Հռոմէական կաթոլիկ .

3 ¼ » Յոյն և Հայ (ոչ Հռոմէական) .

3 » Բողոքական (մեծաւ մասամբ
Ռւնկարացի մէջ)

1 » Հրեայ :

Դ Ա. Ս Լ է .

Հ. Աւստրիոյ կայսրութեան գլխաւոր քաղաքներն որո՞նք են :

Պ. Աւստրիոյ կայսրութեան գլխաւոր քաղաքներն են ,

1. Վիենա կամ Վիենա (800,000) , Դանուբի վրայ կայսրութեան մայրաքաղաքն է , ունի անուանի սեղանաւորներ , ծաղկեալ վաճառականութիւն , ամէն տեսակ երեւելի գործարաններ , գեղեցիկ պարտէզներ որոց մէջ հոչակաւոր են Շէօնպղուն և Լիքսէնպղուրկ կոչուած կայսերական պարտէզներն : Ունի համալսարան : Վիեննա ամեն տեսակ գիւղնական , զինուուրական և արուեստական հաստատութեանց կողմանէ Եւրոպայի երեւելի մայրաքաղաքաց մին է . Երկու անգամ , 1529 և 1683 , պաշարուած է Օսմանցիներէն , բայց 1809 ին Ֆըրանսացիք առին :

2. Պատրէն , ունի ծծմբային ջերմուկներ , ուր հին ատենը Հռոմայեցիք յաճախ կ'երթային :

3. Մալթա-րէն (20,000) , Ամուր քաղաք է Պատիերիոյ սահմանագլխին վրայ իտալական ոճով շինուած . գեղեցիկ շենքերուն համար «Գերմանական Հռոմ» կոչուած է :

4. Կրոս (60,000) , Խատրիոյ գլխաւոր քաղաքը , ունի համալսարան , շատ գործարաններ :

5. Լայտոն (20,000) : Լին (30,000), Ամուր
և վաճառաշահք քաղաք է, ունի կաշիի գոր-
ծարաններ :

6. Արեւադերի, անուանի է քարացեալ ջրոյ
կաթիլներէ գոյացեալ սիւներով անձաւնե-
րուն և սուրբերկեայ ջուրերուն համար :

7. Թրէեւու (190,000), Աւատրիոյ ազատնա-
ւահանգիստ Ագրիական ծովուն եղերքը, ա-
ռուտուրը ծաղկեալ :

8. Ինոպուս (15,000), Թիրօլի գլխաւոր քա-
ղաքը, գեղեցիկ շենքեր բազմաթիւ գործա-
րաններ ունի :

9. Տէրէնու (15,000), Ուր եղած է արեւ-
մտեան եկեղեցւոյ ընդհանուր ժողովը Լու-
տերականութեան դէմ :

10. Բրուկ (150,000), Պոհեմիոյ մայրաքա-
ղաքն է . Գերմանիոյ մէջ առաջին անդամ
համալսարան հոս հաստատուեցաւ 1348 ին :

Պոհեմիա ունի յախճապակւոյ, ապակե-
ղինաց և կտաւեղինաց երեւելի գործարաններ:

11. Պրէւ (50,000), Մորաւիոյ մայրաքա-
ղաքն է . ունի բամբակեղինաց, մորթեղինաց
և շաքարի գործարաններ :

Մորաւիոյ մէջ այս տեսակ գործարաններ
շատ կան :

12. Աւադեւէջ, հոս եղած է 1805 ին մեծին
Նարովոնի դէմ անուանի պատերազմն ուր
երեք կայսերք ներկայ էին :



Դ Ա Ս Լ Ը.

13. Պուտու, Գերմաներէն Օֆէ (55,000),
Դանուրի աջակողմեան եղերքը, Ունկարական
կառավարութեան նիստն է :

14. Բէւլ (270,000), Դանուրի ձախակող-
մեան եղերքը, Պուտոյի գիմացը որուն հետ
կամրջով մը կապուած է . ունի համալսարան :

15. Բրէւուր-էն (45,000), Մաճարիստանու
հին մայրաքաղաքը Վէինայի և Պուտոյի մէջ-
տեղ :

16. Շնուռվայսէնուրէն, Հին Ունկարացի թա-
գաւորք հոս կը պատկւէին և կը թաղուէին :

17. Կրան, Ունկարիոյ եպիսկոպոսանիստ
քաղաքն է :

18. Տէպէւն (45,000), Հին Ունկարացի ո-
ճով շինուած քաղաք է , տուներն իրարմէ
բաց և միայարկ :

19. Թուտոյի, Ունկարիոյ աղնուադոյն դինին
հոս կ'ելլէ :

20. Քրէճից և Շէճից (15,000), ունին ոսկ-
ոյ և արծաթի հանքեր :

21. Քլանվանուրէ (25,000), Քրնչուտու (128,
000) և Հէրմանլուտու (20,000), Թրանսիլվանիոյ
գլխաւոր վաճառաշահք քաղաքներն են :

22. Աւրամ կամ Զարամ (12,000), Խորու-
թիոյ մայրաքաղաքն է :

23. Ֆէռու (20,000), Մովեղերեայ վաճա-
ռաշահք քաղաք է :

24. Եսահե (15,000), Սլաւոնիոյ մայրաքաղաքն է :

25. Զար (20,000) Դաղմատիոյ մայրաքաղաքը :

26. Մբալներ (7000), Բակու (6000), Տալմացիայի մէջ . ատենով հասարակապետութիւն էր : Գագառ (5000) :

27. Քրտաս կամ Քրտաչիւս (50,000), Բոլոնիոյ երեւելի քաղաքներէն մին : Մինչև 1846 այս քաղաքը անկախ մնացած էր լեհաց ձեռքը, բայց նոյն թուականին Աւստրիացիք տիրեցին : Ունի համալսարան :

28. Վելեչ (60,000), Մեծ աղաճանք ունի :

29. Շէհէց (25,000), Մաճարիստանի մէջ աղուոր քաղաք է : Անուանի են ոսկւոյ, արծաթի և կապարի հանքերը :

30. Երևանէլլուտուլիս կամ Պաշտամ (5,000), Բնակչաց ամէնն ալ չայ են :

31. Լէռերի (80,000), 30 հաղարն՝ Հրեայ . կապիցիոյ մէջ մեծ ու գեղեցիկ քաղաք է : Ունի համալսարան : Անուանի են այս քաղաքին չոռմէականաց, չայոց և Յունաց արքեպիսկոպոսարանները:

32. Զէհին (15,000), Բէտէրվարուլին (7,000), Զինուորական սահմանաց դլսաւոր քաղաքներն են :

33. Պահանակերայ (60,000), Դբանիւ (12,000), Զէրանի (10,000), Պահանակերայ (10,000), Բուրիբէզ, Անդիւարի : Այս քաղաքներն կը վերաբերին Պոսնիոյ,

որ վերջին Բուսական պատերազմէն ետքը անցաւ Աւստրիոյ, ինչպէս նաեւ Հերցեկովին, որոյ դլսաւոր քաղաքն է Մասնուր (20,000), որ ունի անուանի կամուրջ քարաշէն :

Հ. Աւստրիայինչ տեսակ կառավարութիւն է :

Պ. Աւստրիա մինչեւ 1867 բացարձակ միապետութիւն էր, այսինքն օրէնսդիր և գործադիր իշխանութիւնը կայսեր միայն ձեռքն էր, 1867 ին եղաւ սահմանադրական միապետութիւն : Հիմայ կայսեր իշխանութիւնը չափաւորեալ է երկու ազգային ժողովներով, որոց մին Բախման՝ Գերմանոյ-Ալաւական երկիրներուն համար է, միւսը Բախման՝ Հունկարիոյ համար : Իւրաքանչիւր գաւառ երեսինան կը զրկէ ազգային ժողովներուն . ասոնք կայսեր հետ մէկտեղ օրէնք կը գնեն և ընդհանուր գործերը կը հոգան . առանձին գործերու համար իւրաքանչիւր գաւառ Լանդութանի կոչուած գաւառային ժողով ունի :

Հ. Աւստրիոյ զինուորական զօրութիւնը որչափ է :

Պ. Ցամաքային զօրքը 300 հաղար է իսպաղութեան ատեն, պատերազմի ատեն 900 հաղար . ծովային զօրքը Խաղաղութեան ատեն 5 հաղար, պատերազմի ատեն 15 հաղար : Նաւատորմիզը կը բաղկանայ 50 շոգենաւէ որոնց 7 լը զրահաւոր է, և 24 լ առաջատարական ատերուն թիւը 7,850 է :

Դ Ա Ս Լ Թ .

Գ. ՀԻՒՄԱՅՈՒՆ ԱՐԵՒՄՑԵԱՆ ԵԽՐՈՊԱ

1. ՍԿԱՆՏԻՆԱԿԵԱՆ ՑԱՄԱԳԱԿՂՋԻ

Հ. Սկանտինաւեան ցամաքակղղին քանի
տէրութիւն կը պարունակէ :

Պ. Սկանտինաւեան ցամաքակղղին կը պա-
րունակէ երկու տէրութիւն, Շուէր և Նորէ-
դիս :

Հ. Այս ցամաքակղղւոյն վրայ ի՞նչ պատ-
մական տեղեկութիւն կայ :

Պ. Հին աւանդութեան մը նայելով Օտին
անուն մէկը Տոն (Ճանայիս) գետին կողմերէն
գաղթականութիւն մը բերաւ հոս : Օտին իւր
մահուանէն ետքը իբրեւ աստուած պաշտուե-
ցաւ, բայց անոր յաջորդներուն ժամանակ եր-
կիրը բաժնուեցաւ այլ և այլ թագաւորու-
թեանց որ Թ. դարուն մէջ միանալով եղան
երեք թագաւորութիւն՝ Շուէր, Նորիւեկիա
և Դամիա (Ճանիմարդա) : Ասոնցմէ էր Նորէն
կոչուած ծովագնայ ժողովուրդը որ շատ եր-
կիրներու տիրեց, գլխաւորապէս անզղիոյ,
Գաղղիոյ հիւսիսային մասին և Սիկիլիոյ : 1397
ին յիշեալ երեք տէրութիւնները միանալով
մէկ թագաւորութիւն եղան . այս միութիւնը
կը կոչուի « Քաղմարեան միութիւն » : 1520 ին
Շուէր բաժնուելով զատ թագաւորութիւն

եղաւ և շատ զօրացաւ : Կուսդաւ Վաղա ,
կուսդաւ Ատոլֆ և կարոլոս ԺԲ. Շուէտի երե-
ւելի թագաւորներ են : 1709 էն ետքը Շուէտ
կորոյս իւր մեծութիւնը : 1814 ին Շուէտ և
Նորուեկիա միանալով մէկ թագաւորութիւն
եղան , թէպէտ երկուքն ալ իրենց առանձին
սահմանագրութիւնն ունին :

Հ. Շուէտի և Նորուեկիոյ բնակիչն և զին-
ուորական զօրութիւնն որչափ էն :

Պ. Շուէտի և Նորուեկիոյ բնակչաց թիւն
է իբր վեց միլիոն, զօրքը՝ 160 հազար, նաւա-
տորմիզը կը բաղկանայ 17 շոգենաւէ , 30 ա-
ռագաստաւոր նաւէ , և 150 ուրիշ նաւերէ ,
ամէնը 660 թնդանօթով :

Հ. Շուէտի գլխաւոր քաղաքներն որո՞նք են:

Պ. Շուէտի գլխաւոր քաղաքներն են ,

1. Սիւնիոն (150,000), Մելարն լճին մէջ մէկ
քանի մանր ու մեծ կղզեաց և երկու թերա-
կըզեաց վրայ վայելուչ կերպով շինուած՝ տէ-
րութեան մայրաքաղաք է : Անուանի ուսումնա-
րաններ և բանուկ վաճառականութիւն ունի :

2. Ունիոն (11,000), Եպիսկոպոսանիստ . ու-
նի համալսարան : Այս քաղաքին մօտ անուանի
երկաթահանք մի կայ :

3. Կելֆ (13,000), Քալմար (9,000):

4. Քարլուտն (20,000), Զինուորական նաւա-
հանդիստ , շատ ամուր բերդեր ունի :

5. Կորտէմուրէ (50,000), Քաթէկաթի վրայ՝
բանուկ նաւահանգիստ մ'է արհեստիւ և վա-
ճառականութեամբ ծաղկեալ :

Հ. Շուէտի կղղիները Պալդիկ ծովուն մէջ
որո՞նք են :

Պ. Եթևնոր (50,000), Մեծ ու գեղեցիկ կղղի
է : Անուանի են անտառներն ու ոչխարները :
Գլխաւոր քաղաքն է Վահաբ (4000) :

Էթևնոր (30,000), Բարեբեր կղղի է, ան-
ուանի են ձիերը :

Հ. Շուէտի կղղիները Ովկիանոսի մէջ ո-
րո՞նք են :

Պ. Լոֆորէն կղղիք, Հեթևնոր կղղիք և Թրումէն
կղղիք : Լոֆորէն կղղեաց հարաւային կողմն է
Մալսթրէօմ հոչակաւոր յորձանքն, որուն
մէջ մեծ նաւեր ծովասոյզ կը լինին : Այս յոր-
ձանքն երթալով կ'ընդարձակի :

Հ. Շուէտի Եւրոպայէն դուրս ունեցած
կղղին ո՞րն է :

Պ. Միայն Ս. Բարենովէնէսսէ կղղին (6,000),
փոքր Աննէլուն կղղեաց մէջ :

Հ. Նորուեկիոյ երեւելի քաղաքներն որո՞նք
են :

Պ. Նորուեկիոյ երեւելի քաղաքներն են,
Քրիսթինուն (70,000). Մայրաքաղաք . տախ-
տակի և երկաթի մեծ առուտուր ունի : Տրա-
մա (15,000): Պետէն (30,000). Հոս կը շինուի
վաճառականաց նաւերը : Տրանդայ (20,000).
անուանի է գարեջուրը :

Դ Ա Ա Խ .

Զ. ԴԱՆԻՄԱՐՔԱՅԻ ՎՐԱՅ Ի՞ՆՉ պատմական գի-
տելիք կայ :

Պ. Տանիմարքայի ցամաքային մասը հին ա-
տեններ կիբրէւն քերսուեսոն կ'ըսուէր, այ-
սինքն հայրենիք կիմքրացւոց, որք Քրիստոսէ
դար մ'առաջ արշաւեցին Եւրոպայի ամէն
կողմերը : Ժողովուրդը հենութեամբ և ա-
ւազակութեամբ կ'ապրէր : Տանիմքրորդ դա-
րուն սկիզբը թագաւորութիւն եղաւ : Այնու-
հետեւ Տանիմարքայիք զօրացան, 835 էն սկսե-
լով մինչև 1042 շատ տեղերու, գլխաւորապէս
Անգլիոյ վրայ յարձակեցան և 25 տարի ամ-
բողջ տիրեցին : 1397 էն Տանիմարքա Շուէտի
հետ միացաւ, 1523 էն բաժնուելով զատ
թագաւորութիւն եղաւ, բայց տկարացաւ և
հետղիետէ շատ տեղեր կորսնցուց : 1864 էն
Դերմանայիք առին Տանիմարքացւոց ձեռքէն
նաև Շեղուիկ-Հուշթայնի և Լաւէնպուրկի
դքսութիւնները որ բուն Գերմանիոյ մաս էին :
1849 էն ՚ի վեր Տանիմարքա եղաւ Սահմանադ-
րական թագաւորութիւն, և Եւրոպայի մի
փոքր մասը կը կազմէ :

Հ. Տանիմարքայի բնակիչք և զօրքը ո՞րչափ
են :

Պ. Տանիմարքայի բնակիչն է իրը (1,800,000)-
զօրքը՝ 50,000. նաւատորմիզը կը բաղկանայ 90

Նաւէ 300 թնդանօթով, 30ը շոգենաւ, 6ը զբահաւոր :

Հ. Տանիմարքայի գլխաւոր քաղաքներն ու ըստնք են :

Պ. Տանիմարքայի գլխաւոր քաղաքներն են, Քոբենհավ (200,000), մայրաքաղաք Սէկլան ու Ամակէր կղղեաց վրայ : Ունի համալսարան և նաւարան :

Օրէնսէէ (15,000), Ջրանցքով մը ծովուն հետ կը հաղորդակցի, ասուոյ (չուխայի) և օճառի (սապոն) գործարաններ ունի :

Հելլենկօր (8,000), Սունտ նեղուցին բերանը ամուլը ու վաճառաշահ քաղաք է :

Տանիմարքա մեծաւ մասամբ կղղիներէ կը բաղկանայ : Տամաքային մասը որ թերակղղի է՝ կը կոչուի Եւ-Շլան (650,000) :

Ֆէնէտ կղղին (140,000), Լաւ մշակուած և շատ բարեբեր է :

Լուլան կղղին (50,000) գլխաւոր քաղաք Մարտէ :

Վէտուն (5,000), Անուանի է տօնավաճառը :

Ալտօն (10,000), Պարսպապատ քաղաք է :

Տանիմարքայի կը վերաբերին Ֆէրէնէ կոչուած կղղեաց խումբը Սկովտիոյ հիւսիսային դին, որ կղղիներէ կը բաղկանայ, և բնակութեան 27 կղղիներէ կը բաղկանայ, և բնակութեան յարմարագոյնն է Խուլանէ կղղին (60,000) Ատլանտեան ովկիանոսի մէջ որ մեծ կղղի է . Երկիրը լեռնային և հրաբղիսային է . հոս է Հէքլա լեռն իւր անուանի հրաբղիսով, որուն



ԽՈԼՈՒՏԻՈՑ Մէջ ԵՌԱՑՈՂ ԱՂՅԻՒՐ ՄԸ

մօտ բնական տաք ջրհորներ կան : Գլխաւոր քաղաքն է Բայթեստէ :

Հ. Տանիմարքա Եւրոպայէ դուրս ի՞նչ երկիրներ ունի :

Պ. Տանիմարքա ունի Ամերիկայի մէջ Կրէնանորէ, և Ա. Խուլ կղղիք, և Անդիլեան կղղիներուն մէջ քանի մը փոքր կղղիներ (30,000) :

Հ. Կրէօնլանտիա ի՞նչ կողմանէ անուանի է :
Պ. Եղերքներուն մօտ գ անուած կէտ ձկան
որսորդութեան կողմանէ :



ՈՐՍՈՐԴՈՒԹԻՒՆ ԱԿՏ ԶԿՅԱՆ

Դ. Ա. Ա Խ Ա.

Յ. ՄԵԾՆ ԲԲԻՏԱՆԻԱ

Հ. ՄԵծին Բրիտանիոյ վրայ ի՞նչ պատմա-
կան դիտելիք կայ :

Պ. Բրիտանիա հին ատեն վայրենի երկիր էր .
Վրիտանիական թուականէն առաջ չոռմայե-
քրիտանէական թուականէն առաջ չոռմայե-

դարուն մէջ գերմանիայէ Անկլոյ-Սաքսոններն
Անգղիա գալով քանի մը թագաւորութիւններ
հաստատեցին , որ յետոյ միանալով եղան մի
թագաւորութիւն , որ կոչուեցաւ Անգղիոյ թա-
գաւորութիւն : Անգղիացիք 1171 ին տիրեցին
իրանուայի , 1603 ին Սկովախոյ , և այս երեք
երկիրները կոչուեցան Միացեալ թագաւորու-
թիւն ՄԵծին Բրիտանիոյ : Անցեալ դարուն
ակիզրէն Բրիտանիա սկսու զօրանալ : Աշխար-
հիս գրեթէ ամէն մասերուն մէջ ունի հիմա
հարուստ և մեծամեծ երկիրներ , և առաջին
ծովային տէրութիւն կը համարուի :

Հ. Անգղիոյ օդը և հողն բնչակէս են :

Պ. Օդը ցուրտ է , ասոր համար երկիրը խա-
ղող չտար . և հողը բարեքեր չէ : Թէ և լա-
մշակուած է , երկիրն արտադրութիւնը բնակ-
չաց չբաւելուն համար միշտ գուրսէն մեծ
քանակութեամբ արմորիք կը գնուի : Անուանի
են ձին և ոչխարը : Անգղիոյ մէջ հարուստ
հանքեր կան որ տարեկան 1000 միլիոն ֆրանքի
հասոյթ կը բերէն : Գլխաւոր հանքերն են ,
հանքային ածուխ , երկաթ , կապար , անագ ,
պղինձ , և այլն :

Վաճառականնական նաւուց թիւն է աւելի
քան 40.000 , որոնք ամէն տէրութեան հետ
յարաբերութիւն ունին :

Ուսմունք զարգացած են . անուանի են Օ-
քանչօրտէ , Քէմպէնէ և Լոքհոնուրէն համալսարանները :

Բոլոր երկիրը երկաթուղիներով զարդար-
ուած է , որոց կեղունն է Լոնդոն :

Հ. Բրիտանիոյ բնակչութեան գործը ո՞քչափ են:
Պ. Մեծին Բրիտանիոյ բնակչութեան է (30 միլիոն)։

Եթէ Եվրոպայէ դուրս երկիրներն ևս մէկտեղ հաշուենք, տէրութեան բոլոր բնակչաց թիւը կը հասնի 200 միլիոնի։ Զինուորական զօրութիւնը մեծաւ մասամբ ծովային է. նաւատորմիղը կը բազկանայ 400 նաւէ 60 հազար ծովային զօրքով. նաւերուն 50ը զրահաւոր է։

Հ. Մեծն Բրիտանիա ի՞նչ տեսակ կառավաշրութիւն է։


Պ. Մեծն Բրիտանիա սահմանադրական կառավարութիւն է, օրէնսդիր իշխանութիւնը Բարլամենտ կոչուած ընդհանուր ժողովին ձեռքըն է որ քուած կոչուած երկու խորհրդարաններէ կը բազկանայ, այսինքն՝ Լորդերուն (ազնուականներուն) խորհրդարանէն և ժողովրդեան կողմէն ըստրուած երեսինեաներու խորհրդարանէն։

Հ. Մեծն Բրիտանիա ի՞նչպէս կը բաժնուի։

Պ. Մեծն Բրիտանիա կը բազկանայ երեք թագաւորութենէ, որ են Անդրէս Վալէսի կամ կալի դքսութեամբ, Անդրէս և Իրլանդա։

ԴԱՍ ԽԲ.

Հ. Անդրէսիոյ գլխաւոր քաղաքներն որո՞նք են։
Պ. Անդրէսիոյ գլխաւոր քաղաքներն են,
1. Լուսու կամ Լուսը (3,000,000), Մայրաքաղաք Դամբիլ գետին վրայ : Բազմամարդութեան, հարատութեան, մեծագործութեան
կամ կայսերական մասութեան մասութեան է։



ՈՒԵՊԴՄԻՆՍԴՔՐԻ ԱԲԲԱՅԱՐԱՆԸ

և մանաւանդ առեւտրական և սեղանաւորական գործողութեանց կողմանէ աշխարհիս առաջին քաղաքն է։ Երեք գլխաւոր մաս կը բաժնուի։

Ա. Վաճառականաց թաղ (Սէտէ)։ Հոս է գրամատունը (պանդան)։

Բ. Ազնուականաց թաղ (Ուեսթմասթեր), Ուեսթմինստերի եկեղեցւոյն մէջ կըլլայ թաղա-

ւորաց և թագուհեաց թաղաղրութիւնը և
թաղումը : Ուրիշ շատ երեւելի Անդղիացւոց
շիրիմներ եւս կան այս եկեղեցւոյն մէջ, կը ու-
ռակ Սբուեց կոչուած գեղեցիկ հրապա-
րակով :

Գ. Արհեստաւորաց թաղ :

Երեւելի շնչերն են Ս. Պօղոսի և Ուէսպ-
մինսդէրի եկեղեցին, մեծամեծ և արհես-
տիւ կառուցուած կամուզներ, հոյակապ պա-
լատներ, երկու ընդարձակ համալսարան,
Բրիտանական հարուստ թանդարանն համ-
դերձ գրատամք, թայմճող գետին տակ թըն-
նէլ կոչուած մեծագործ ճամբան և հնու-
թեանց պահարանները : Լոնտոնի մէջ կան
նաև շատ գիտնական ընկերութիւններ :

Պաքոնի, Միլտոնի և Փոփի հայրենիքն է .
Նէվոնն եւս իւր կենաց մէծ մասն հոս ան-
ցուցած է :

2. Քէւարէն (25,000), 3. Օւսֆոր (30,000),
Ասոնց համալսարանները շատ անուանի են :

4. Պէրքնէնէ (350,000), Ունի շատ երեւելի
գործարաններ պողպատի, արուրի և ապակ-
ոյ : Մօտերը հարուստ հանքեր կան :

5. Պէտքը (150,000), Բանուկ նաւահան-
դիստ :

6. Լիզբոն (500,000), Ընդարձակ նաւա-
հանդիստ և աշխարհիս ամէն կողմերուն հետ
բանուկ վաճառականութիւն ունի :

7. Մէնչէսդը (400,000), Ունի երեւելի գոր-
ծարաններ բամբակեղեն գործուածոյ. ուր հոս

չայ և Յոյն վաճառականաց տուներ եւս հաս-
տատուած են :

Մանչէսդըի մօտ են Սէւֆոր (400,000),
Բէրենա (80,000), և Պամա (80,000), բաղմա-
մարդ քաղաքները, որ նմանապէս բաղմաթիւ
գործարաններ ունին :

8. Հաւ (130,000), Լիոն (300,000), Բրդե-
ղինաց շատ գործարաններ ունի . Հաւֆոր
(100,000), Պարաֆոր (150,000), Շէֆֆել (280 հա-
ղար) . Կտրոցները անուանի են . ամէնքը ե-
րեւելի գործարաններ ունին այլ և այլ ար-
ուեստներու :

9. Եսթան-է (30,000), Բէքեն (70,000),
Բանուկ նաւահանդիստ են : Բէրբարէն
(100 հաղար), պատերազմական նաւահան-
դիստ է :

10. Տուա (25,000), Անդղիայէ Ֆրանսաց անց-
նելու սովորական կարճ ճամբան է :

11. Նէրուա (100,000), Ունի Անդղիոյ ամե-
նամեծ ածխահանքը :

12. Կրնէւ (125,000), Լոնտոնի մօտ . Երեւելի
է աստեղադիտական գիտանոցը և ծովային
հիւանդանոցը :

13. Եսթ (40,000), Հին մայրաքաղաք է :
Մայր եկեղեցին փառաւոր է :

14. Բէնրէւը (20,000), Եպիսկոպոսանիստ :

15. Մէրնէր-Թէրու-էւ (80,000), Մեծ երկա-
րահանք ունի :

16. Սուանէ (40,000), Աշխարհիս մեծագոյն
պղնձի գործարաններն հոս են :

17. Քառորդ (20,000), Բանուկ Նաւահանգիստ :

18. Պան (50,000), Անուանի հանքային ջրեր
ունի :

Հ. Ակովտիոյ գլխաւոր քաղաքներն որո՞նք
են :

Պ. Սկսվուիոյ գլխաւոր քաղաքներն են ,

4. ԷՏԻՒՊՈՒՐԿ (200,000), Մայրաքաղաք, ծովի 4 հզրմ. հեռու. ունի համալսարան և քանի մը երեւելի շէնքեր:

2. Կըսակ (100,000), Քլայտ գետին վրայ՝
անուանի է համալսարանը։ Հոս շատ երկա-
թէ շոգենաւեր կը շինուին։

Յ. ՏԵՇԻՐԵ (90,000) , ԺԱՄԱՆԱԿԱԼ ՍԿՈՎՈՒԽՈՅ
ԵՐԿՐՈՐԴ մայրաքաղաքն էր . անուանի են կը-
տաւեցնները :

4. Աղբյուրի (75,000), Նաւահանգիստ :

Հ. Իրլամնտայի Երեւելի քաղաքներն որո՞նք
են :

Պ. Խրիանտայիի երեւելիի քաղաքներն են ,

4. ՏԵՊԱԿ (320,000), ՄԱՅՐԱՔԱՂԱՔ, ունի
համայստրան. Նաև բանուկ նաւահանգիստ մք:

2. Պէտքառ (120,000) Համանուն ծովին վը-
սայ, այեւայ գործարաններով :

3. Գործ (80.000), վաճառաշահ քաղաք է .
առատ միս տալուն համար « Անգղիոյ սպան-
դանոց » կոչուած է :

4. ԶԵՐԵՒ (40,000), 5. ՎՐԱ-ՇԵՐՋԱՆ (20,000),
ԲԱՆՈՒԿ ՆԱԽԱՆԴԻՍՈՒՆԵՐ են :

ԱԵԾԻՆ ԲՐԻՄԱՆԻՈՂ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ ԱՌ

Են ամէն տեսակ գործարաններով։ Երկրագործութիւն և անասնաբուծութիւն ծաղկած են։

Հ. Բըլտանիայէ դուրս Անգղիոյ երկիրներն սռն սռո՞նք են :

Պ. Բըլիտանիայէ դուրս Անդղիոյ երկիրներըն են.

4. ԵԽՐՈՊԱՅԻ մէջ՝ ձերբար քաղաքը, Մուտակացին լրիցերկրական ծովուն փրայ և Հերուլուն

Ճետական համանուն նեղուցին վրայ 1704էն
հետէ Անդղիացոց ձեռքն է, ունի պատե-
րազմական ընդարձակ նաւահանդիստ և մեծ
ամրութիւններ :

Մալթա կղղին (120,000), պատերազմական նաւահանգիստ ունի. գլխաւոր քաղաքն է Լա-Վալեն :

Հ. Ա.ՍԻՐՅ մէջ, Ա.ՐԵՆ՝ Արարիա, Հնդկաստան
հանդերձ Սէւլըն, Սէնկոֆուր և ուրիշ կըզ-
զիներով։ Զինու մէջ՝ Հօնիքօնի կղզին Քանթօ-
նի մօս (150,000,000)։

3. Աֆրիկէի մէջ՝ Գլուխ Բարեյսոս, Նորաւեռ
ուրիշ երկիրներ Աֆրիկէի հարաւային եղերքը
և քանի մը կզգիներ որոց մին է Սուբէ Հեղուն
ուր աքսորուեցաւ և մեռաւ մեծն Նաբուն
1821ին. (1,200,000):

4. ԱՄԵՐԻԿԱՅԻ մէջ՝ Միացեալ նահանգներէն անդին բոլոր հիւսիսային մասը, ձահնէին կղզին, փոքր Արտէլուն կղզիներուն մեծ մասը և ուրիշ տեղեր :

5. ԱԽԱՏՐԱԼԻՈՅ ԱԵՂ՝ ԲՈԼՈՐ ՆՐԻ ՀԱՅՆԴՐ

կամ Առարքական, վահ-8եւն, նոր Զելանդան և ուրիշ շատ կզղիներ . (1.700,000) :

Հ. Նոր Զելանդիոյ բնակչաց վրայ ի՞նչ գիտելիք կայ :



ՀՈՐ ԶԵԼԱՆԴԻԱԿ

Գ. Առաջ վայրենի մարդակերներ եին, բայց հիմա մեծաւ մասամբ քրիստոնէութիւնը ընդունած և քաղաքակիրթ եղած են : Ունի լեռներ, մշտագալար անտառներ, և բազմաթիւ հովիտներ : Զմեռը յորդ անձրեւներ կը տեղան :

Դ. Ա. Ա Խ Գ.

Դ. Ա. Ա Խ Գ. Ե Խ Պ Պ.

Ա. Բ Ո Ւ Ս Խ Ա

Հ. Բուսիոյ վրայ ի՞նչ ողոտմական գիտելիք կայ :

Պ. Կովկասիա Սեւ ծովուն , կովկասի գօտ-
ւոյն , կասպից ծովուն , Պարսկաստանի և Ասիոյ
մէջ լեռնոտ երկիր է : Հողը բարեբեր է , և
օդը՝ բարեխառն և առողջ :

Կովկասու լերինք կը պարունակեն այլ և
այլ հանքեր . նշանաւոր է երկաթի հանքը :

Բնակիչը 4 միլիոն է , և կը բաղկանայ
Ռուս , Հայ , Վիրք (Կիւրճի) , Մնկրէլ , Ապա-
ղա , Զէրքէղ , Լէզկի , Թաթար և ուրիշ ցե-
ղերէ :

Այս երկին բնակչաց գեղեցկութիւնը
համբաւաւոր է , մանաւանդ վրաստանցւոց
և Զէրքէղներուն : Կրօնքն է Քրիստոնէութիւն ,
Մահմետականութիւն և կոավաշտութիւն :
Տեղոյն Հայերը վաճառականութեամբ
կը բարպին : Բոլոր այս երկիրը Ռուս կուսակա-
ցէ մը կը կառավարուի : Վերջին տարիներուն
մէջ կառավարութիւնը վաճառականութեան

ոյժ տալու մտօք երկաթուղիներ շինեց, և
երկրագործութիւնը քաջալերելու համար ան-
հարթ ուղիները հարթեց :

Կովկասու գօտւոյն գագաթները շատ
բարձր են և մշտնջենաւոր ձեամբ ծածկուած.
իւր բարձրութեանը համար անուանի է Էլ-
պատառ լեռը :

Հ. Կովկասու երկրին անուանի գետերն ո-
րո՞նք են :

Պ. Կուռ և Երասի, որ միանալով կը թափին
կասպից ծովը : Ուստի Սեւ ծովը :

Հ. Կասպից ծովը Սեւ ծովուն հետ հա-
ղորդակցութիւն ունի :

Պ. Կասպից ծովը երկրիս երեսէն Սեւ ծո-
վուն կամ ուրիշ ծովերու հետ հաղորդակցու-
թիւն չունի, բայց շատ փորձերով հաստա-
ռած է թէ Սեւ ծովուն և Արալու ծովակին
հետ կը հաղորդակցի երկրիս տակէն : Կայ
նաեւ Սեւանայ ծովակն երեւանու մօտ :

Հ. Կովկասու գլխաւոր քաղաքներն որո՞նք
են :

Պ. Գլխաւոր քաղաքներն են Կովկասէ ան-
դին դէպ ՚ի հիւսիս,

Սուսանու (17,000), Վաճառաշահ քա-
ղաք է :

Կովկասէ ասդին դէպ ՚ի հարաւ ,

Տֆուս կամ Թիալիս (70,000), Կուր գետին
վրայ վրայ մայրաքաղաքն է . հոս կը նստի
երկրին ընդհանուր կուսակալը : Այս երկրին
նոր շինուած մասը շատ գեղեցիկ է : Ունի

հանքային ջուրեր, բանուկ վաճառականու-
թիւն : Տեղայն Հայերուն, որ բազմաթիւ են,
շատը վաճառականութեամբ կ'զբաղի : Հայք
ունին հոյակապ եկեղեցիներ, անուանի գըպ-
րոցներ և տպարաններ :

Երևան (10,000), Հայաբնակ քաղաք, 1828 էն
հետէ Ռուսաց ձեռքն անցած է . ամուր բերդ
է, և շատ հնութիւններ ունի . ասոր մօտ է Էջ-
միածնայ վանքը, ուր են մեր կաթողիկէ եկե-
ղեցին և կաթողիկոսարանն ուր կը նստի ծայ-
րագոյն Պատրիարքը կամ կաթողիկոսն Հա-
յաստանեայց Եկեղեցւոյ : Նաեւ վանուց մէջ
կայ հարուստ գրատուն մի և տպարան ուր
կը հրատարակուի Արարատ անուն ամսաթերթն:

Շամբէ (25,000), Հին և անուանի քաղաք :

Մշտիւ (10,000), Վրաստանի հին մայրա-
քաղաքն է, որոյ մեծ մասն աւերակ է : Ա-
սոր մօտերը պաղեղի և երկաթի հանքեր կան :

Պատու (15,000), Կասպից ծովուն վրայ բա-
նուկ նաւահանգիստ է : Ասոր քովերը նաւթի
ջրհորներ և տղմոտ հրաբուղիներ կան :

Գանձակ կամ Եղիսաբէտուպոլիս (12,000), Հին ա-
տենը Աղուանից թագաւորութեան մայրաքա-
ղաքն էր . մօտերը շատ աւերակներ կան :

Ակեցիս (20,000), Ամբապատ քաղաք է .
անուանի է նաեւ Սուլթան Ահմէտի մղկիթը
Պօլսոյ Այա-Սօֆիայի ձեւով շինուած :

Խուճակ (3,000), Ատենով իմէրէթի թա-
գաւորաց մայրաքաղաքն էր, այժմ մեծ մասն
աւերակ է :

Կէմբէ կամ Ալեւանդրոսովուէս (12,000), Արփա շային վրայ շինուած նոր և ամուր քաղաք է :

Նուբան (3,000), Պարսպապատ քաղաք է, որոյ մեծ մասն աւերակ է այժմ։ Շահ-Աբբաս կործանեց այս քաղաքը 17թդ դարուն և բնակիչները բռնի Պարսկաստան տարաւ։ Նախճուան 1830 ին Երկրաշարժէ շատ վնասուեցաւ :

Արտաշետ (10,000), Անուանի քաղաք է, մետաքսի և մեղրի առեւտուր ունի :

Բօթէ (8,000), Սեւ ծովուն վրայ կովկասեան գաւառաց գլխաւոր նաւահանդիստն է, որ Երկաթուղարք թիֆլիզի հետ կապուած է։ Այս նաւահանդիստը վերջի տարիներս մեծ կարեւորութիւն ստացաւ իրեւ Երթեւեկութեան ճամբայ Պարսկաստանէ ի կոստանդնուպոլիս :

Դ Ա Ս Ծ Դ .

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՍԻԱ

Ս Ի Պ Ե Ր Ի Ա

Հ. Սիպերիոյ վրայ Բնչ պատմական դիտելլք կայ, և ո՞ր տէրութեան կը վերաբերի :

Պ. Մինչև 15թդ դարուն վերջերը Եւրոպացւոց անծանօթ էր Սիպերիա, յետոյ Ոռուսիա

կամաց կամաց այս Երկրին մօտենալով տիրեց, և մինչև Զինու սահմանագլուխն հասաւ։ Սիպերիա կ'աքսորէ տէրութեան դէմ յանցաւոր անձինք :

Հ. Սիպերիոյ ընդարձակութիւնը ո՞րչափ է։
Պ. Սիպերիա մեծ է քան ամբողջ Եւրոպա, բայց բնակիչք քիչուոր են. Հիւսիսային կողմերը տափարակ և ջրով ծածկուած են, Հարաւային կողմերը՝ լեռնոտ :

Հողն անբեր, քիչ մշակուած և ըստ մեծի մասին անապատ է :

Հ. Օդն ի՞նչպէս է :

Պ. Օդը շատ ցուրտ է. այս Երկրին մէջ կան բաղմատեսակ հանքեր. աքսորեալ անձինք այս հանքերուն մէջ կ'աշխատին :

Հ. Երկրին բնակչաց թիւը ո՞րչափ է :

Պ. Բնակչաց թիւն է 4,000,000, մեծ մասը Մոնկուեան և Թաթար, շատերը վրանարնակ են, հովուութեամբ և որարդութեամբ կ'ապրին :

Տեղացւոց մեծ մասին կրօնքն է կռապաշտութիւն

Հ. Սիպերիա քանի մաս կը բաժնուի :

Պ. Սիպերիա կը բաժնուի Երկու գլխաւոր մասերու .

Արեւմտեան Սիպերիա, և Արեւելեան Սիպերիա :

Հ. Գլխաւոր քաղաքներն որո՞նք են :

Պ. Սիպերիոյ գլխաւոր քաղաքներն են՝ Թիուլ (15,000), Զինու և Եւրոպայի վաճա-

ուաց փոխանակութեան գլխաւոր տեղն է . Հոս
կաշւոյ մեծ գործարաններ կան :

Օ՞ս+ (25,000), Հոս կը նստի Սիպերիոյ կու-
սակալը :

Իրութեան (60,000), Պայքալ ծովակին քով
վաճառաշահ քաղաք է . ապակւոյ , թղթի և
ասուոյ (չուխայի) գործարաններ ունի :

Օ՞ս+ (3,000), Հոս կ'աքսորուին ոճրադործ-
ները :

Թո՞ս+ (20,000), Քովերը մեծ ածխահանք
ունի :

Թէ-էն (10,000), Վաճառաշահ քաղաք է :

Պա՞նսո՞ւլ (10,000), Քովերը հարուստ հանք
ունի :

Ենէ-էյ+ (6,000), Անուանի է տօնավաճառը :

Ներկէն+ (5000), Զինու սահմանադլիմին մօտ
վաճառաշահ քաղաք է . արծաթի և կապարի
հանք ունի :

Սիպերիոյ կը վերաբերի Քամիշադրա թերա-
կըզին :

Հ. Սիպերիոյ մէջ նշանաւոր գետեր որո՞նք
են :

Պ. Օպէ, Ենէ-էյ և Լէնոս որ կը թափին սառուց-
եալ ովկիանոս . Անսորէ՝ Պէհրինկայ ծովը :

Ա՞ս-ը, Սիպերիոյ և Զինու սահմանադլիմին
վրայ , կը թափի խաղաղական ովկիանոս :

Հ. Գլխաւոր ծովակներն որո՞նք են :

Պ. Գլխաւոր ծովակներն են Պայքալ և Պաւուլ :

Դ Ա Ս Ծ Ե .

Դ. Ա. ՐԵՒԵԼԵԱՆ Ա. ՍԻԿԱ

1. Զ Ի Ն

Հ. Զինու վրայ Բնչ պատմական գիտելիք
կայ :

Պ. Զին երկրիս վրայ գտնուած մեծա-
դոյն և ծաղկեալ տէրութեանց մին է : Զի-
նացիք 40 դարէ հետէ աշխարհիս և ոչ մի
կողմին հետ յարաբերութիւն ունէին . Թա-
թարաց յարձակումներէն ապահով մնալու
համար երկրին հիւսիսակողմը պարսպով պա-
տած են . բայց Մանչու-Թաթարք 1787 դա-
րուն տիրեցին երկրին , և այժմու թագաւորն
անոնց ցեղէն է :

Հ. Զինաստանու սահմաններն որո՞նք են :

Պ. Զինաստանու սահմաններն են , Հիւսի-
սէն՝ Սիպերիա . Արեւելքէն՝ Խաղաղական ով-
կիանոս . Հարաւէն՝ Զինաց ծով և Հնդկաս-
տան . Արեւմուտքէն՝ Թուրքաստան :

Հ. Զինաստանի կլիման Բնչպէս է :

Պ. Զինաստան ընդարձակ երկիր է , և
բնութեան ամէն տեսարանն կընծայէ :

Զինաստանի կլիման , հիւսիսակողմը յուրտ
իսկ միւս կողմերը բարեխառն է :

Հ. Զինու բնակիչը ո՞րչափ է :

Պ. Զորս հարիւր վաթսուն միլիոն , որո՞նք ար-

ուեստդիտութեամբ , երկրագործութեամբ և
փոքր ինչ վաճառականութեամբ կ'ապրին :

Հ. Զինու Երկրագործութեան վրայ Բնչ
դիտելիք կայ :

Պ. Երկրին ամէն կողմը մշակուած է , և երկ-
րագործք մեծ ջանքով կ'աշխատին այս գործին :

Հ. Զինու մասնաւոր բերքն Բնչ է :

Պ. Թէյ , որ աշխարհիս ամէն կողմը կը
դրկուի :

Հ. Ի՞նչ կառավարութիւն ունին Զինացիք :

Պ. Կառավարութիւնն է ազատ միապե-
տական , որոյ գլուխն է կայու , և իշխանները՝
Մասնաւորէն կը կոչուին :

Հ. Զինացւոց կրօնըն Բնչ է :

Պ. Զինացիք կը հետեւին Պուտուայի կրօն-
քին , որ կ'ըսուի թոյն աղանդ . կայսրը և
քուրիք կոմիտուկիոսի աղանդին կը հետեւին .
կայսրը որ Զինաց լեզուաւ թէն չէ , Երկնից
որդի , և Հոռակ դէ , բարձրագոյն իշխան կը
կոչուի , տէրութեան հայրը և մայրն է :

Հ. Զինացւոց Երկրին մէջ օտարականներ
կան :

Պ. Զինացիք ՚ի սկզբանէ ոչ օտար Երկիր
կ'Երթային , և ոչ իրենց Երկրին մէջ օտարա-
կան կ'ընդունէին . բայց հետզհետէ Երրողա-
ցիք Զինաստանի այլ և այլ կողմերը սկսան
մուտ գտնել :

Հ. Զինու կայսրութիւնը քանի՞ դիմաւոր
մասանց կը բաժնուի :

Պ. Հինգ դիմաւոր մասանց կը բաժնուի :

1. Բուն Զինաստան , 2. Մանչուրիա , 3. Մոն-
կոլիա , 4. Թիպէդ , 5. Կղզիներ :

Հ. Բուն Զինաստան ինչ երկիր է :

Պ. Բուն Զինաստան ընդարձակ , բարեբեր
և լաւ մշակուած դաշտ է :

Հ. Զինու դիմաւոր քաղաքները որո՞նք են :

Պ. 1. Փէքին (1,500,000) , Բէհօ գետին վը-
րայ , որ մայրաքաղաք է և ունի համալսարան ,
աստեղագիտական դիտարան , գրատուն՝ 300
հազար հատոր գրենով , կայսերական տպա-
րան մը , զօրանոցներ : Փէքին Երկու մասանց
կը բաժնուի . միոյն մէջ թաթարները , և
միւսին մէջ Զիները կը բնակին . արքայական
պալատն իրեն կից շատ շէնքեր ունի : Զինաց
կայսրը Երկրագործութիւնը քաջալերելու հա-
մար ամէն տարի հանդիսիւ քիչ մը տեղ կը
հերկէ :

2. Նուգէն (1,000,000) , Զինացւոց Աթէնքը .
հոս կը նստի Հռոմէական կաթոլիկ եպիսկո-
պոս մը : Մինչև 1421 Զինաստանի մայրաքա-
ղաքն էր . անուանի է աշտարակը որ ունի 9
յարկ և 78 մեդր բարձրութիւն յախճապակ-
ւով զարդարեալ :

3. Շանչան (1,000,000) , Վաճառաշահ քա-
ղաք : Մեծ քանակութեամբ չայ կը զրկէ եւ-
րոպա և Ամերիկա : 60,000 բնակիչ քաղաքին
քովէն անցնող գետին վրայ նաւերու մէջ կը
բնակին :

4. Շանկ Հայ (200,000) , Աշխարհիս ամէն
կողման հետ առուտուր ունի :

5. Քինդկան (1,000,000), Հոս աղէկ յախ-
ճապակի կը շինուի :

6. Թինդան (500,000), Բէհօ գետին վրայ
Փէքինի մօտ քաղաք է :

7. Հոնիտոն (100,000), Քանթոնի ծոցին
մէջ կղզեալ է . 1842 էն հետէ Անդ-դիացւոց
ձեռքն ինկաւ . վաճառաշահ քաղաք է :

8. Լնասս , Կրօնատեղի թիպէթի մէջ :

9. Մատա (30,000), Փորթոկալցւոց ձեռ-
քը . վաճառաշահ քաղաք է :

10. Աճ (300,000), Ջուլոս , Նենիս , Իէ ,
Մատաէն , Քաշէտ և Եարիտանդ անուանի քաղաք-
ներ են :

Ճ. Մանչուրիա Բնչ երկիր է :

Պ. Վայրի անասուններով լի ընդարձակ
անտառներ ունի . Ժողովուրդը թափառական
հովիւ է , և Թաթմար կը բարուի :

Ճ. Մոնկոլիա Բնչ երկիր է :


Պ. Մոնկոլի երկրին մեծ մասը կողէ կամ
Շանյ ըսուած անապատով ծածկուած է , և
եղերքը կան լեռներ և բարեբեր տեղեր :

Ճ. Թիպէթ Բնչ երկիր է :

Պ. Թիպէթի երկիրն բարձր լեռներով
ծածկուած է : Զինու և Հնդկաստանի քանի
մը մեծագոյն գետերուն ակունքն այս երկ-
րին մէջ են :

Ճ. Զինաստանի բարձր լեռները որո՞նք
են :

Պ. Բուն Զինաստանու մէջ է Եսաւին լերան
գօտին :



ԲՈՒՆ ԿԱԱ ՄԵԾ ՄԵԾ Ի ՓԱՓԱՐԱՅԱ

ՆԱԽԳԻՆ ԿԱԱԾԱԿԱՆ ՊԱՐԵՏԱ

Մանչուրիայի մէջ՝ Եսպանաս և Խօնան լերանց գօտիները :

Մոնկոլի մէջ՝ Ալա լերան գօտին :

Թիպէթի մէջ՝ Հինայալ լերան գօտին . թիպէթ աշխարհիս բարձրագոյն երկիրն է . դաշտերը 6,000 հզմ. բարձրութիւն ունին ծովուն երեսէն :

Հ. Գլխաւոր ծովակներն որո՞նք են :

Պ. Գլխաւոր ծովակներն են Թիւնինէնէն, Բայ-էնէն, Հիւրէն, Փէր, Քիւտա, Քոտօնօր, Թիւնինօր, Ան :

Հ. Զինաստանու մեծ գետերն որո՞նք են :

Պ. Զինաստանու մեծ գետերն են Եսանցէնէնէն որ Թիպէթէ բղխելով կը թափի Դեղին ծով :

Հօտնէ՝ որ կը թափի Արեւելեան ծովը :

Ա. Հուռ՝ Ճարոնի ծովը :

Դ Ա Ս Ծ Զ .


Զ. ՃԱՐՈՆ

Հ. Ճարոնի վրայ ի՞նչ պատմական գիտելիք կայ :

Պ. Ճարոնները Զինաց ցեղէն կը կարծուին, Մինչեւ 1854 բաց ՚ի Հօլանտացիներէն ուրիշ օտարաց արգելուած էր Ճարոն մտնել, բայց հիմա ըստ նոր դաշնադրութեանց ամէն ազգ աղատ առուտուր կրնայ ընել Ճարոնցւոց հետ, որ քաղաքակրթութեան մէջ ևս զգալի յառաջադիմութիւն կ'ընեն :

Հ. Ճարոն ի՞նչ երկիր է, և բնակիչը ո՞րշափի է:

Պ. Ճարոն Զինու արեւելեան հարաւային կողմը Խաղաղական Ովկիանոսի մէջ տէրութիւն մի է բաղկացեալ չորս գլխաւոր կղզիներէ, Նէտչն, Սէտու, Քէտու-Սէտու և Եսանց : Երկիրը լեռնոտ և հրարդիսային է, այս պատճառաւ շատ երկրաշարժ կ'ըլլայ հոն : Հարուստ հանքեր



ՃԱՐՈՆԱՅԻՈՅ ԲՆԱԿՄԱՆԸ

ունի ոսկւոյ, արծաթոյ, անագի, հանքային ածխոյ, աղնիւ և մեծագին քարերու :

Երկաթուղիներ շինուած են և Եւրոպական կանոններ հաստատուած, շատ դըպրոցներ բացուած են, որոց շատին մէջ Եւրոպական լեզուներ կ'ուսուցուին :

Երկրին բնակիչն է 20,000,000 :

Հ. Ճարոնի գլխաւոր քաղաքներն որո՞նք են :

Պ. Գլխաւոր քաղաքներն են՝

Երա (1,500,000) Նիֆօն կղղւոյն մէջ . Ասիոյ մեծ և գեղեցիկ մայրաքաղաքներէն մին է :

Մէտոյ կամ Քէտոյ (500,000), Այժմու մայրաքաղաքն է :

Օլու (400,000), Վաճառաշահ նաւահանգիստ է :

Նանկաստէ (50,000), Բանուկ նաւահանգիստ :

Եստօհաբա (40,000), Ազատ նաւահանգիստ ,

Ետոյ քաղաքին հետ երկաթուղով կը միանայ :

Լիոն-Քէո կղղիներն եւս ձարոնի մասը կը համարուին , բայց առանձին թագաւորութիւն ունին Զինաստանու և ձարոնի հարկատու :

Հ. ձարոնի կղղւոյն վրայ Բնչ դիտելիք կայ :

Պ. Նիֆօն կղղին բարձր լեռներ ունի և մեծ գետ մը Էտ-Լաստ անուն :

Հ. ձարոն քանի նեղուց ունի և որո՞նք են :

Պ. ձարոն երկու նեղուց ունի , մին հիւսային արեւելեան կողմը՝ Բերուշա , իսկ միւս Եսոյի և Նիֆօնի մէջ՝ Սանկա :

Հ. ձարոն Բնչ տեսակ կառավարութիւն է :

Պ. ձարոն բացարձակ միապետութիւն է , և գերագոյն իշխանութիւնը Մէտոյ կոչուած

իշխանին ձեռքն է : Մէտոյոն առաջ երկրին իշխանին ձեռքն է :

Հ. իշխանութիւնը էր միայն , աշխարհական իշխանը զատ էր և դաշտուա կը կոչուէր : Վերջին իշխանը գատ էր և դաշտուա կը կոչուէր : Վերջին ատեններս Միդատոն , կրօնական գլուխը , երկու իշխանութիւնը միացուց , և աշխարհական իշխանը քաշուեցաւ Եղյ կղղին : Հիմա

ձարոնի կառավարութիւնը կը ջանայ այն երկրին մէջ Եւրոպական կրթութիւն տարածել :

Մօտերս շատ երիտասարդներ կառավարութեան ծախիւք Ամերիկա և Եւրոպա դրկուեցան ուսում և դիտութիւն սորվելու :

ԴԱՍ ԾԵ.

Ա. Փ Ր Ի Կ Ե

Հ. Ափրիկէ որ կիսագունտին վրայ է , որոնք են անոր սահմաններն , և բնակչաց թիւն մըշափ է :

Պ. Ափրիկէ հին ցամաքը պարունակող կիսագունտին հարաւային արեւմտեան կողմն է : Մեծ թերակղզի էր , բայց Սուէզի ջրանցին բացուելին հետէ ընդարձակ կղզի մը ձեւացաւ : Սահմաններն են , հիւսիսէն՝ Միջերկրական ծով , արեւմուտքէն՝ Աղլանդեան Ովկիանոս , հարաւէն՝ Հարաւային Ովկիանոս , արեւելքէն՝ Կարմիր ծով և Հնդկաց Ովկիանոս :

Բնակչաց թիւն է 120 միլիոն :

Հ. Ափրիկէ քանի մաս կը բաժնուի :

Պ. Ափրիկէ կը բաժնուի Ա. Հիւսիսային Ափրիկէ և Հարաւային Ափրիկէ :

Հ. Հիւսիսային Ափրիկէ Բնչ երկիրներ կը պարունակէ :

Պ. Հիւսիսային Ափրիկէ կը պարունակէ

1. Երեսոս , 2. Նոբէտ , 3. Հապէլ , 4. Պերուէրէսոսն ,
5. Սահարա , 6. Սէնէկամպէտ , 7. Սուարան :

Ավրիկէի մէջ են այն լնդարձակ աւազուտ
դաշտերն , զորս Անապատ կը կոչեմք , դարձեալ
այս անապատներուն մէջ են Ուսուի ըստած
պտղաբեր դաշտերն :

Հ. Երկրին արտադրութիւններն ի՞նչ են :

Պ. Ավրիկէի մշակուած երկիրները հետեւ-
եալ բերքը կ'արտադրեն . արմաւ , ժանտա-
թուղ , քոքոյ , կասիա , խէժ , խնկեղէնք , աղ-
նիւ փայտեր , բրինձ , շաքար , պղպեղ , խահ-
ուէ և լեղակ :

Հ. Ավրիկէի հանքաց վրայ ի՞նչ տեղեկու-
թիւն կայ :


Պ. Ավրիկէ հարուստ հանքեր ունենալ կը
կարծուի , բայց այս մասին հետազօտութիւն
եղած չէ , բայց որովհետեւ գետերուն աւազը
ոսկով խառն է , տեղացիք այս աւազը ժող-
վելով եւրոպական նիւթոց հետ կը փոխա-
նակեն :

Հ. Ավրիկէի մէջ ի՞նչ տեսակ կենդանիներ
կան :

Պ. Կենդանեաց սոսկալիներն հոս են , ինչ-
պէս , վագր , առիւծ , ինձ , ոնդեղջիւր ,
(քէրքէտան) , փիղ , ընձուղտ (զիւրաֆէ) ,
գէպը , կոկորդիլոս , ձիագետի (ալժ պալը-
գէպը) , տեսակ տեսակ կապիկ , ջայլամն (տէվէ-
գուշու) , թութակ և կռունկ :

Հ. Հարաւային Ավրիկէ ի՞նչ երկիրներ կը-
պարունակէ :

Պ. Հարաւային Ավրիկէ կը պարունակէ ,
1. Արևելքան ծովերը , 2. Քամ Բարեյուասայ երկի-
րը , 3. Արևմտեան ծովերը կամ կունիւս , 4. Կոռիներ :



ՔԵԶՓԹԱՈՒՆ ԳԱՂԱՔԸ ՀԱՐԱԽԱՅԻՆ ԱՓՐԻԿԻ ՄԵՋ

Երկրին ներսերը այլ և այլ ցեղեր կան ո-
րոնք շատ անդամ իրարու դէմ կը կռուին :

Հ. Ավրիկէի մէջ քանի՞ ցեղ մարդկի կան :

Պ. Ավրիկէի բնակիչք երեք ցեղ ճանչուած
են , այսինքն՝ 1°. Արաբացի , Խորէ , Կուստունեան որը
հիւսիսային կողմերը կը բնակին :

2°. Քաֆէրտ , Օբէնունտ , Հարաւային կող-
մերը և

մէջ, Տէհէկա՝ Հապէշի մէջ, Նէռնց՝ հասարակածին տակ:

Հ. Ափրիկէի գետերն որո՞նք են:

Պ. Եդիպտացիք, Պէրպէրիստանցիք և Նուպիացիք Մահմէտական են, Եթովպացիք՝ Քրիստոնեայ, մնացեալները՝ Կուապաշտ:

Հ. Ափրիկէի ծովերն որո՞նք են:

Պ. Ափրիկէի ծովերն են՝ Մէջորիսկան ծով, Արևոտեան Ովկիանոս, Մէծ Ովկիանոս և Հնդկաց ծով:

Հ. Ափրիկէի ծոցերն որո՞նք են:

Պ. Ափրիկէի ծոցերն են՝ Կուբնեայի ծոցն՝ Աղլանդեան Ովկիանոսի մէջ, Արևոտեայ ծոցը կամ Կուբնեայ ծով՝ Հնդկաց ծովուն մէջ, Մէրտ և Քուբեա՝ Միջերկրականին մէջ:

Ափրիկէի Հրուանդաններն են՝ Գլուխ Պռա և Սւեր, Պէրպէրիստանի եղերքը, Գլուխ Սպառակ, Սահարայի եղերքը, Կանաչ Գլուխ՝ Սենեկամպիոյ եղերքը, Բալճ և Լոքեն՝ Կուինէայի եղերքը, Գլուխ Բարեյսուս և Տէհէտոյ՝ Մոզամպիքի հիւսիսային եղերքը, Նորա Մատակասկարի հիւսիսային եղերքը:

Հ. Ափրիկէի լեռներն որո՞նք են:

Պ. Ափրիկէի լեռներն են,

Արևոտ Պէրպէրիստանի մէջ՝ Քռնէ Կուինէայի մէջ. Լուսանց լեռներ՝ Հապէշի մէջ. Լուսադագոտին՝ Ափրիկէի հարաւային կողմը, և Մասակասկարի գոտին:

Հ. Ափրիկէի լիճերն որո՞նք են:

Պ. Ափրիկէի լիճերն են, Զար՝ Մուտանի

Դ Ա Ս Ծ Ը.

Ա. Հիմնական ԱՓրիկէ

1. Ե Գ Ի Պ Տ Ո Ս

Հ. Եգիպտոսի վրայ ինչ պատմական գիտելիք կայ:

Պ. Հին ատենը Եգիպտոս արհեստից և գիտութեանց կողմանէ շատ ծաղկած էր, բայց երթալով տկարացաւ: 7րդ դարուն Արաբացիք տիրեցին. յետոյ Մեմլուք կոչուած Զէրքէզներուն անցաւ. 18րդ դարուն վերջերը Ֆրանսացիք տիրեցին, բայց քիչ ժամանակէն թողուցին: 1811ին Մէհմէտ-Ալի փաշան Մեմլուքներուն ձեռքէն առաւ, և Օսմանցւոց կողմէ Փոխարքայ անուանեցաւ: Այժմ նորաժառանգորդական կը կառավարեն ստորին, միջին և վերին Եգիպտոսի երկիրներն, իբրեւ հարկատու իշխան ընդ հովանաւորութեամբ Սուլթանին:

Հ. Եղիպատոսի սահմանն Բնչպէս կ'որոշուի :

Պ. Եղիպատոսի սահմանն է, Հիւսիսէն՝ Միջերկրական ծով. Արեւելքէն՝ Սուեղի ջրանցքը և կարմիր ծով. Հարաւէն՝ Նուբիա, Արեմուտքէն՝ Պէրպէրիստան և Մեծ Անապատը :

Հ. Երկրին արդասաւորութիւնն Բնչպէս է :

Պ. Նեղոսի բերանը, որ Տէլտան կը կազմէ, աշխարհիս պտղաբերագոյն տեղն է և առատ բամբակ կ'արտադրէ :

Հ. Ի՞նչ տեսակ բերք ունի :

Պ. Գիշաւոր բերքն է, որիդ, արմատ, եղիպացորեն, բամբակ, շաքար և ներկի քանի մը նիւթեր :

Հ. Կենդանեաց տեսակներն որո՞նք են :

Պ. Պիտանի կենդանեաց մէջ կան եղն, գումէշ, ոչխար, էշ, ձի, հաւ, մեղու և ուղտ :

Վայրենի կենդանիք են՝ կոկորդիլոս (գաղն ծովային), շատ տեսակ օձեր, ձիադետի (աթ պալըղը), հիլոս կոչուած մուկը և վայրենի շուներ :

Հ. Եղիպատոս Բնչ տեսակ հանք կը պարունակէ :

Պ. Եղիպատոսի հանքաց մէշ անուանի են մարմարինն ու կրանիթ քարը, նաև նախքան ըսուած աղը, որ օճառ և ապակի շինելու կը ծառայէ :

Հ. Երկրին կիման Բնչպէս է :

Պ. Օդը շատ տաք է, և գիշերահաւասարի ատեն Սէմուն ըսուած հովը բոլոր օդն աւազով կը լեցնէ : Երբեմն եւս սոսկալի ախտեր

Երեւան ենելով մեծ կոտորածներ կ'ընէ :

Հ. Եղիպատոսի մէջ նշանաւոր Բնչ շէնք կայ:

Պ. Եղիպատոսի մէջ յիշուելու արժանի է Սուեղի ջրանցքը որ Գաղիական ընկերութեան մը ջանքով բացուեցաւ, և է Եւրոպայէ Հնդկաստան երթալու կարճ ճամբան. այս ջրանցքը Բորթ-Սայիտէ մինչև Սուեղ կ'երթայ, երկայնութիւնը 100 մլոն է : Նաև նշանաւոր են հոյակալ բուրդերը, մեծեանները, սիւները, արձանները և շիրիմները,



ՀԱՐԱԿԱՑԻՆ ԵԳԻՊԵՏԻ ՄԵՋ ԱԿԵՐԱԿ
ՄՐԱՀԻ ՄԸ ՄԻՒՆԵՐԸ

որոնք 4,000 տարի աւելի առաջ են շնուած :


Հ. Եգիպտոս ո՞ւր է , բնակիչը ո՞րչափ է ,
դլիսաւոր քաղաքներն որո՞նք են :

Պ. Եգիպտոս Ափրիկէի հիւսիսային արեւել-
լեան կողմն է , բնակիչն 4^{1/2} միլիոն է , յորոց
200,000ը խպտի , որ հին Եգիպտացիք են , և
մնացեալները՝ թուրք , Հայ , Հրեայ , Յոյն ,
Արաբացի և Եւրոպացի են :

Գլխաւոր քաղաքներն են ,

1. Ալ-Ֆարայիր (կամ Իսկառերէէ) (250,000) ,
Հոռվմայեցւոց և Պտղոմեանց ժամանակ Ե-
գիպտոսի մայրաքաղաքն էր , ուսմանց և գի-
տութեանց կեղեցնն . այժմ ևս վաճառաշահ
քաղաքներէն մին է : Քանի մը թաղ շատ կա-
նոնաւոր և գեղեցիկ շինուած է Եւրոպական
ոճով , Երեւելի նաւահանգիստ է :

2. Գահէրէ կամ Մբար (250,000) , կոստանդ-
նուպոլսէ Ետքը թուրքիոյ մեծագոյն քաղաքն է .
ունի 400 մզկիթ (ճամի) , 30 եկեղեցի , 1,300
վաճառատեղի : Երկաթուղով կապուած է Ա-
ղեքսանդրիոյ և Սուէզի հետ , առուտուրը
ծաղկած : Գահիրէի մօտ են հին Եգիպտոսի
Մեմիխ քաղաքին աւերակներն , և Բէքամի
կոչուած բրդունք : Այս քաղաքին հին մասին
փողոցները նեղ և տիսուր են , բայց նոր շին-
ուած մասը Եւրոպայի քաղաքաց նման շատ
գեղեցիկ է . շէնքերուն մէջ անուանի են
փոխարքային պալատն և քանի մը Երեւելի
մզկիթ : Գահիրէի մօտ են այն Երեք ան-
ուանի բուրդերն , որոց մեծագունին բարձրու-
թիւնն է 146 մէջը , նոյնպէս և մեծ գետնա-



ԵԳԻՊՏՈՍԻ ԲՈՒՐԳԵՐԸ

փոր գերեզմաննոցն որոյ մէջ 3000 տարուան
մոմիաներ կան հետաքրքրութեան արժանի :

Տագէն (30,000) , Բանուկ նաւահանգիստ է :

Ուշէր կամ Ռաքիր (15,000) , նեղուցին
բերանը բանուկ նաւահանգիստ է : Անուանի
է որիզը :

Միւս (15,000) , Ափրիկէի ներսերը գացող
կարաւանի այս տեղէն կը մեկնին :

Սուեւ (4,000) , Զրանցքին բացուելէն
հետէ կարմիր ծովուն վրայ նոր նաւահանգիստ
եղաւ և մեծ կարեւորութիւն ստացաւ :

Փուր—Սայէր (40,000) , Նոր քաղաք է Միշ-

Երկրական ծովուն վրայ Սուէդի ջրանցքին
ծայրը :

Ա. Դուռածէր Աղեքսանդրիոյ մօտ գիւղ է :

Պատրիա + } Վերին Եգիպտոսի մէջ Նեղոսի
Հունածը } մօտ գիւղեր են, չն թէ՛կ հըռ-
չակաւոր քաղաքին աւերակաց վրայ շինուած :

Հ. Եգիպտոսի լերինք որո՞նք են :

Պ. Եգիպտոսի մէջ լեռ չկայ, միայն կար-
միր ծովուն և Նեղոսի միջոցը գոտի մը կայ,
որ Գահիրէի և Թէրէի մօտ կ'անցնի :

Հ. Որո՞նք են գետերը :

Պ. Գլխաւոր գետն է Նեղոս որոյ բղխման
տեղն է Զանկէպարի սահմանին մօտերը չա-
սարակածէն լայնութեան 40 աստիճանաւ-
դէպ ի հարաւ, և Երկայնութիւնը 4000 հզմի
կը հասնի : Նեղոսի ջուրը թեթև և առողջա-
րար է, և շատ ջրանցներ շինուած են Երկ-
րագործութիւնը զարգացնելու համար :

Հ. Գլխաւոր ծովակներն որո՞նք են :

Պ. Պէրէն-իւ-իւ-բէրուն, Պուրլու, Մէնշլէն, որոյ
մէջէն կ'անցնի Սուէդի ջրանցքը :

Հ. Եգիպտոս քանի՞ մաս կը բաժնուի :

Պ. Երեք մաս կը բաժնուի .

1º. Ստորին Եգ. գլխ. քաղաք Գահիրէ .

2º. Միջին » » » Ապու ձիտուէ

3º. Վերին » » » Սիութ

Հ. Եգիպտոս ինչ տեսակ կառավարու-
թիւն է :


Պ. Եգիպտոս ազատ կառավարութիւն է
արդի Երոպական սկզբանց համեմատ : Երկ-

ըն կրօնքն է Մահմէտականութիւն, սակայն
Խպտիք ընդհանրապէս Քրիստոնեայ են : Իշ-
խանն որ առաջ Փափար+այ կը կոչուէր՝ հիմա
Խըրէ-Լը-Մասր կ'անուանի՝ որ թարգմանի իշ-
խան Եգիպտոսի, և Եգիպտոսի անուանի կու-
սակալին Մէհմէտ Ալիի ցեղէն է, հարկատու
Բարձրագոյն Դրան : Եգիպտոս, ՚ի բնէ ար-
գասաւոր, Մէհմէտալեան ցեղին անցնելէն
հետէ շատ ծաղկած է :

Զ. Ն Ո Ւ Բ Ի Ա.

Հ. Նուբիոյ բնակիչն ո՞րչափ է, գլխաւոր
քաղաքներն որո՞նք են :

Պ. Նուբիոյ բնակիչն Յ միլիոն է, գլխաւոր
քաղաքներն են,



ՆՈՒԲԻՈՅ ՄԷԶ ՄԱՍԻՄ ՄԸ ԱԿԱԶՈՎ ՄԱՆԿՈՒԱՆ ՄԵՀՆԱՆ,
ՈՒՐ 60 ՈՏԲ ԲԱՐՁՐ ԿՈՒՌՔԵՐ ԿԱՆ

Պերէր (8,000), Խոստում (45,000) :
Նուբիա հիմա եղիպտոսի կը վերաբերի :

Յ. ՀԱՊԷԾ ԿԲՄ ԵԹՈՎՊԻԱ

Հ. Հապէշի բնակիչն ո՞րչափ է, գլխաւոր
քաղաքն ո՞րն է :

Պ. Հապէշի բնակիչն 3 միլիոն է, գլխաւոր
քաղաքն է Կառար (40,000): Անդղիացիք 1868ին
այս Երկրին քրիստոնեայ թագաւորին թէո-
դորոսի վրայ յարձակեցան քանի մը Անդղիա-
ցի բանտարկեալներ ազատելու համար :

Հիմա Հապէշ քանի մը ինքնագլուխ իշխա-
նութիւններու բաժնուած է :

Դ. Ա. Ս Ծ Թ.

4. ՊԵՐՊԵՐԻՍՏԱՆ

Հ. Պէրպէրիստանի վրայ ինչ պատմական
դիտելիք կայ :

Պ. Պէրպէրիստան աշխարհը հին ատեն
կարքեղոնացւոց ձեռքն էր, յետոյ Հռովմա-
յեցւոց անցաւ, և ապա՝ Արաբացւոց այժմ
մի մասն այլ և այլ իշխանութեանց ներքեւ
է, և միւս մասը՝ Գաղիացւոց :

Հ. Պէրպէրիստանի կիման ինչպէս է :

Պ. Օդը ամարան մէջ շատ տաք է, բայց
ձմերան մէջ բարեխառն, երբեմն եւս ցուրտ :

Հ. Երկիրն ինչ յառաջադիմութիւն ունի :
Պ. Ուսմունք և արուեստք կը պակսին, միայն
ձէղայիր քիչ մը յառաջացած է, ուր դըպ-
րոցներ և երկաթուղիներ շինուած են :

Հ. Բնակիչք ինչ ցեղէ են :

Պ. Բնակիչք են Պէրպէր, Մարօք (Մուղի),
Թուրք, Հրեայ և Գաղիացի : Կարծիք կայ թէ
ձէղայիրցւոց մեծ մասը Հայաբնակ գաւառ-
ներէ գաղթած են :

Հ. Երկրին կրօնքն ինչ է :

Պ. Մահմէտականութիւն :

Հ. Գլխաւոր գետերը որոնքն են :

Պ. Մէճերու՝ թունուզի մէջ, Ֆէլլէ+ և Ա-
գուսէ՝ ձէղայիրի մէջ, Մալու, Սըրու, Թէն-
գիր, Կունչ, Ջէլու Մարու՝ Մարօքի մէջ :

Հ. Երկրին մէջ ծովակ կայ :

Պ. Այս Երկրին մէջ շատ ծովակներ կան.
ոմանց ջուրն աղի է և ամառը կը քաշուի :

Հ. Պէրպէրիստան Ափրիկէի ո՞ր կողմն է և
քանի՞ տէրութիւն կը պարունակէ :

Պ. Պէրպէրիստան կը կոչուի Ափրիկէի հիւ-
սիսային եղերքը՝ Եգիպտոսի արևմուեան սահ-
մանէն մինչեւ Աղլանդեան Ովկիանոս, և կը
պարունակէ չորս տէրութիւն, Ա. Թէքէրէւ կամ
Թարապուլասու, Բ. Թաւանուզ, Գ. Ալճէրէ և Դ. Մ-
րությու :

Դ. Թիֆոնի կամ Թարապուլաս

Հ. Այս Երկիրը որո՞ւ կը վերաբերի :

Պ. Թարապուլուս թուրքիոյ պետութեան

կը վերաբերի , կուսակալի մը իշխանութեամբ կը կառավարուի և երկու վեցէն կը կազմէ :

1°. Թարապետութեան .

2°. Պէնէտագէ .

Հ. Թրիբուլիի բնակիչն ո՞րչափ է , դլսաւոր քաղաքներն որո՞նք են :

Պ. Թրիբուլիի բնակիչն (1,500,000) է , ընդհանրապէս Արարացի ցեղէ և Մահմետական . կայ նաև փոքր մաս մը Հրեայ :

Յերշան ըսուած երկիրը Թարապութուսի փաշային հարկատու է :

Գլխաւոր քաղաքներն են .

Թարապետութեան կամ Թէքուլ (30,000) , Միջերկրական ծովուն վրայ Աֆրիկէի ներսերուն հետ մեծ առուտուր ունի :

Մուրզու (10,000) , Սուտան երթալու համար կարավանք ասկէ կը մեկնին : Ֆէզզան գաւառին գլխաւոր քաղաքն է Պէտական (7,000) , Միջերկրական ծովուն վրայ :

2. Թունուզ

Հ. Թունուզի բնակիչն ո՞րչափ է , դլսաւոր քաղաքներն որո՞նք են :

Պ. Թունուզի բնակիչն (1,200,000) դլսաւոր քաղաքն է Թունուզ (100,000) , Հին կարգեղոնի աւերակաց մօտ մեծ քաղաք է , վաճառականութիւն և արուեստ հոս ծաղկած են : Ասկէ մինչեւ կուէն ըսուած փոքր նաւահանգիստը երկաթուղի մը շինուած է : Քա-



ԹՈՒՆՈՒԶ ՔԱՂԱՔԸ

ուն (25,000) , Միջերկրականի վրայ փոքր նամահանգիստ է : Քէրուն (400,000) , Այս է թունուզի երկին ներքին նշանաւոր քաղաքը , ուխտատեղի Աֆրիկէի Մահմետականաց :

Թունուզ քիչ ժամանակ առաջ Օսմանեան տէրութեան հարկատու էր , բայց մօտ ժամանակներս դաշինքով մը գաղիոյ տէրութեան յանձնուեցաւ :

3. Ալճերի կամ ձեզայիր

Հ. Ալճերիի բնակիչն ո՞րչափ է, դլխաւոր քաղաքներն որո՞նք են :

Պ. Ալճերիի բնակիչն իբր 3 միլիոն է, դլխաւոր քաղաքներն են,

Ալճերի (50,000), Միջերկրական ծովուն վըրայ գեղեցիկ նաւահանգիստ է : Գաղիացիք այս քաղաքը շատ ծաղկեցուցին, կանոնաւոր փողոցներով և շինքերով : Քառանուննեն (30,000) Ամուր քաղաք է : Պառա . Օրու (30,000), Այս քաղաքները երկար ատեն Սպանիացւոց իշխանութեան տակ էին :

Ալճերի 1830 էն հետէ Գաղիոյ կը վերաբերի :

4. Մարոք կամ Մարոքոյ

Հ. Մարոք ինչպիսի կառավարութիւն է :

Պ. Մարոք ինքնագլուխ տէրութիւն է, որոյ գլուխը կ'ըսուի Մուլիան և բացարձակ իշխանութեան տէր է : Ժողովուրդը Մահմետական է : Երկրին մէջ բաւական չըեայ կայ որո՞նք վաճառականութեամբ կ'ապրին :

Հ. Մարոք.քոյի բնակիչն ո՞րչափ է, դլխաւոր քաղաքներն որո՞նք են :

Պ. Մարոք վեց միլիոն բնակիչ ունի :

Դլխաւոր քաղաքներն են,
Ֆէ (100,000), Որ տէրութեան դլխաւոր քաղաքն է :

Մարոք (50,000), Սուլթանը տարւոյն մեծ մասը հոս կ'անցունէ :

Թանհէր (20,000), Ճիպրալթարի նեղուցին վրայ, Ափրիկէի հին քաղաքներէն մին է : Եւրոպացի դեսպանք հոս կը նատին :

Մուստաք (60,000), Ադլանդեան Ովկիանոսի վրայ վաճառաշահ նաւահանգիստ է :

5. ՍԱՀԱՐԱ (անապատ)

Հ. Սահարայի վրայ Բնչ գիտելիք կայ :

Պ. Այս ընդարձակ անապատին ներսի կողմերը դեռ աղէկ ճանչցուած չեն :

Հ. Սահարայի բնակիչք որո՞նք են և ո՞րչափ :

Պ. Սահարայի բնակիչք կը բաղկանան Մարտ, Թունտէր և Թէպուտ կոչուած աղգերէն, որք ընդհանրապէս վրանաբնակ են, երկիրը հինգ միլիոն բնակիչ ունի :

Հ. Սահարա երկրագնտիս ո՞ր կողմը կ'ենայ :

Պ. Սահարա անապատը Պէրպէրիստանի հարաւային կողմը կ'ինայ . շատ ովասիներ ունի, ուր գիւղ կամ քաղաք, ջուր և բոյս կը գտնուին :

Աւազուտ անապատին մէջ տաք ժամանակ ոչ ջուր կը գտնես և ոչ բոյս, շատ տեղերը ժայռուտ են : Այս երկրին մէջ երբեմն փոթորիկք զաւազն մինչեւ երկինք բարձրացնելով ամբողջ կարաւաններ կը խեղդեն : Տեսակ տեսակ գիշատիչ գաղաններ եւս անպակաս են :

Հ. Գլխաւոր քաղաքը ո՞րն է :

Պ. Գլխաւոր քաղաքն է Թէպու : Ժողովուրդը վայրենի է :



6. ՍԵՆԵԿԱՄՊԻԱ

Հ. ՍԵՆԵԿԱՄՊԻԱ վրայ Բնչ պատմական գիտելիք կայ :

Պ. ՍԵՆԵԿԱՄՊԻԱ Սահարայի արեւմոռեան կողմը կ'իջնայ , անունը ՍԵՆԵԿԱԼ և կամպիա գետերէն առնուած է :

Հ. ՍԵՆԵԿԱՄՊԻԱ մէջ Բնչ տեսակ ժողովուրդներ կը բնակին և ո՞չչափ են :

Պ. ՍԵՆԵԿԱՄՊԻԱ 12 միլիոն բնակիչ ունի զանազան ժողովուրդներէ բարկացեալ որոնք իրարմէ անկախ տէրութիւններ կը կազմեն :

Ծովեղերաց մի մասը գաղիացւոց , Սնդ-ղիացւոց և Փորթոկալցւոց ձեռքն է :

Հ. ՍԵՆԵԿԱՄՊԻԱ թէ՛ երկրին և թէ՛ կիմային վրայ Բնչ տեղեկութիւն կայ :

Պ. ՍԵՆԵԿԱՄՊԻԱ ծովեղը տափակ և վատառողջ է . իսկ ներսերն ընդհանրապէս աւազուտ անապատներ , և տեղ տեղ մեծ լեռներ և բարեբեր հովիսներ կան :

Օդը շատ տաք է , Յուլիսէ մինչև Հոկտեմբեր շարունակ կ'անձրեւէ զարհուրելի վորթորիկներով : ՍԵՆԵԿԱՄՊԻԱ մէջ շատ բարձր բոյսեր կան , որոց մէջ նշանաւոր է Պատուադարձար ծառը որոյ թանձրութիւնը 30 մէթր է :

Հ. Բնչ տեսակ բերիք ունի :

Պ. Բերքն է առատ ոսկի , խնկեղէն , ջայ-

լաման փետուր , փղոսկր , պղպեղ , բամբակ և վագրի մորթ :

Հ. Գլխաւոր քաղաքները որո՞նք են :

Պ. Գլխաւոր քաղաքներն են Դինար . Ժողովուրդը վայրենի է : Այս երկրին քանի մը տեղերն Եւրոպացւոց կը վերաբերին :

Պահպատ . Ոսկւոյ մեծ հանք ունի :

Սէն-Լու (45,000) , Գաղիացւոց ձեռքը Սենեկալ գետին բերանը վորքը կղզի է :

Կօրէ (5,000) , Դալարի գլխոյ կղզիներէն մին է , որ Գաղիացւոց կը պատկանի :

Պանցըն է վորքը կղզի (6,000) Անդղիացւոց ձեռքը :

Ֆարէ՛ { Փորթոկալցւոց կը պատկանի :
Քաշչո } Վարչուանութիւն չկայ , բայց կը կարծուի թէ Սուտանի և Եթովլիոյ լերանց գոտիները մինչեւ հոն կը հասնին :

Հ. ՍԵՆԵԿԱՄՊԻԱ լերանց վրայ ընդարձակ ծանօթութիւն չկայ , բայց կը կարծուի թէ Սուտանի և Եթովլիոյ լերանց գոտիները մինչեւ հոն կը հասնին :

Հ. Գլխաւոր գետերը որո՞նք են :

Պ. Սէն-Էւլ , Սէն-Լուի քաղաքին մօտ Աղլանդեան Ովկիանոսը կը թափի և մեծ նաւեր ասոր վրայ կրնան երթեւեկել :

Լաճական . Աղլանդեան Ովկիանոսը կը թափի : Այս գետերուն աւազը ոսկեխառն է :



Շ. ՍՈՒՏԱՆ, ՆԻԿՐԻՏԻՑ. կամ Թ. ԳՐՈՒՐ

Հ. Սուտանի վրայ ինչ պատմական դիտելիք կայ :

Պ. Սուտան կը բաղկանայ քանի մը ինքնադլուխ ցեղերէ, որ կանոնաւոր կառավարութիւն ունին, ինչպէս Պօբու, Թօմուսուն և Սուտուն :

Նիկրիտիոյ բնակիչք քաղաքականութեան մէջ բաւական յառաջացած են, շատերը բարեբարոյ և աշխատասէր են : Կրօնքն է Մահմետականութիւն, բայց կայ նաև շատ կուտապաշտ :

Հ. Նիկրիտիա Սահարայի ո՞ր կողմն է :

Պ. Նիկրիտիա Սահարա անապատին հարաւային կողմը կ'իյնայ, հողը ընդհանրապէս բարեբեր է, բայց տեղ տեղ աւազուտե անբեր գաշտեր կան : Այս երկրին Հարաւային կողմը բարձր լերան մը գոտի գտնուած է :

Այս երկրին մէջ է Զառ մեծ լիճը, որոյ եղերքը բարեբեր տեղեր շատ կան :

Գլխաւոր բերքն է բրինձ, բամբակ, լեզակ, արմաւ, և աղնիւ փայտեր, կան նաև ոսկւոյ, արծաթոյ և երկաթի հանքեր, զորս տեղացիք արդիւնաւոր կերպիւ կը բանեցնեն: Զանազան տեսակ կենդանիներ կան, թէ ընտանի և թէ գիշատիչ :

Այս երկրին մէջէն կ'անցնի նէկը գետը 3000 մեդը երկայնութեամբ և հիւսիսյին կուինէա ճեղքելով կը թափի Աղլանդեան Ովկիանոսը :

Օդը շատ տաք է և տարւոյն մէջ միայն երկու եղանակ կը տիրէ :

Հ. Նիկրիտիայի գլխաւոր նահանդը ո՞րն է :

Պ. Նիկրիտիայի գլխաւոր նահանդն է .

Պահպարս կամ ձէննէ, Աենեկամպիոյ սահմանագլխին մօտ թագաւորութիւն :

Հ. Գլխաւոր քաղաքները որոնք են :

Պ. Գլխաւոր քաղաքներն են .

Ճէնն (10,000), Ճօլիպա գետին մէջ կը դւոյ մը վրայ շինուած . երկրին մայրաքաղաքն է, շէնքերը կանոնաւոր և բնակիչն աշխատասէր և արուեստագէտ :

Սէկ (30,000), Պամպարայի երկրին մէջ, շատ մղկիթներ և երկայարկ տուներ ունի :

Թօմուսուն (12,000), Նիկէր գետին մօտ Ավրիկէի անուանի քաղաքներէն մին է, իշխանի մը կառավարութեան ներքեւ, որ վաճառականութեամբ կ'ապրի և ժողովուրդէն տուրք չ'առնուր : Երկրին բնակիչք բարեբարոյ և աշխատասէր Մահմետականներ են :

Պօբուն . Զատ լճին հարաւակողմը բարեբեր և բաղմանարդ երկիր է . այս երկրին օդը շատ տաք է, սոսկալի փոթորիկներ կ'ըլլան հոս :

Գլխաւոր տեղն է Քուսաւան (10,000), Մայրաքաղաք Զատ լճին մօտ :

Սաւաննէ կամ Ջէլլաննէ . Այս նահանդին կ'իշխէ Սուլթան մը, որ Նիկրիտիայի գօրաւորագոյն իշխանն է :

Գլխաւոր քաղաքն է Սաւանն (20,000),

Մայրաքաղաք, ուր կը նստի երկրին Սուլ-
թանը:

Պէտրով	}	Նիկոլիտիայի մէջ ուրոյն կա-
Ռուսաց		
Տարբուր		
Քաջազգան		

ուալարութիւններ են:

Դ Ա Ա Կ.

Բ. ՀԱՐԱՀԱՅԻՆ ԿՈՒԽԵՎ

Ա. ԱՐԵՒԵԼԵԱՆ ՆՈՎԵԶՐ


Հ. Արևելեան ծովեղը անուամբ Ափրիկէի որ
մասը կը հասկցուի:

Գ. Արևելեան ծովեղը անուամբ կը հասկցուի Ափրիկէի այն մասը որ Ատենի ծովածոցէն կամ Հապէշի սահմանէն սկսելով կը հասնի մինչև ի Գլուխ Բարեյուսոյ: Այս երկրին հարաւային կողմը Բորթոկալցիք և Անդղիացիք գաղթականութիւններ ունին. հիւսիսային կողմն անձանօթ է:

Հ. Ափրիկէի այս մասն Բնէ երկիրներ կը պարունակէ:

Պ. Ափրիկէի այս մասը կը պարունակէ,

4. Սոճուկ: Այս երկիրը կիյնայ գրեթէ հասարակածին տակ Ափրիկէի արեւելեան կողմը Հնդկաց Ովկիանոսին վրայ. հին ատենը երեւելի էր: Ժողովուրդը Մահմետական է,



ԱՐԵՒԵԼ ԱՆԱՊԱՏԻ ՄԷՋ ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆ

աղեկ առուտուր ունի Արաբիոյ և Հնդկաստանի հետ: Այս երկիրն առաջ երկու մարաժնուած էր, Այս և Արեւ:

Գլխաւոր քաղաքներն են.

Զէյլ որ Պապ-իւլ-Մանտէպի նեղուցին մէջ կզզի է:

Պարտէր: Արաբիոյ հետ մեծ առուտուր ունի:

Առաջնուէլ. Ատենով Ատէլի մայրաքաղաքն էր:

2. Սեւանիք : Այս երկիրը Սոմալիի հարաւային կողմն է, շատ ծովակներ ունի, ժողովուրդը Մահմետական է : 1858 էն հետէ անկախ եղաւ :

3. Զանցուր : Այս երկրին իշխանը Սուլթան կը կոչուի, մայրաքաղաքն է Զանցուր (60,000), կղզւոյ մը վրայ : Այս երկիրն առաջ Զանցուր կը կոչուէր :

Բերբն է փղոսկը, ծարիր (բարեւան նաև) ու կապոյտ արջասպ (գեղակ) : Բնակչաց կէսը՝ Արաբացի, կէսը՝ տեղացի կուապաշտ :

Զանզիպարի գլխաւոր քաղաքներն են,

Պրաւ . Փոքր հանրապետութեան մը մայրաքաղաքն է . բնակիչը Արաբացի են :

Մելնար . Պտենով մեծ քաղաք էր :

Մօնտայ . Զանզիպարի գլխաւոր նաւահանգիստն է . ատենով կը վերաբերէր Բորթոկալի :

4. Մուլճուն : Սեւահիլիի հարաւային կողմը, Մատակասքարի դիմացը, Ափրիկէի արեւելեան ծովեղեր վրայ : Կը վերաբերի Բորդոկամի . բնակիչներն ինքնագլուխ են . երկիրը բարեբեր և շատ գետերէ ոռոգեալ . կլիման բարեխառն է, ներբին մասին օդն առողջ է, բայց ծովեղերաց օդը վնասակար : Բնակիչք Աւանդէնէն էն Քաջը ըսուած ցեղէն, և են ինքնագլուխ . գլխաւոր քաղաքն է Մուլճուն (10,000), ուր կը նստի Բորթոկալի կուսակալը :

Քելճանէ (3,000), Զանչուն գետին բերանը նաւահանգիստ է :

5. Սոֆոլ : Մողամլիքի հարաւային կողմն է, կը վերաբերի Բորթոկալի . և գլխաւոր քաղաքն է Սոֆոլ : Այս երկիրն առաջ Մահմադին կ'ըսուէր :

6. Քաֆրաստան . Սոփալայի հարաւային կողմն է : Բնակիչն է Քաջը կոչուած ժողովուրդը որ կուապաշտ է, բայց Ափրիկեցի Սև ցեղէն չէ : Քաֆրերու ցեղէն են Զուլուները որոց հետ 1879 ին եղաւ Անգղիացւոց նշանաւոր պատերազմը : Այս պատերազմին ժամանակ մեռաւ Նաբոլէն Գ. ի որդին :

Այս ծովեղեր վրայ է Անգղիացւոց 1°. Նորաւ կոչուած գաղթականութիւնը 15,000 բնակչօք . գլխաւոր քաղաքն է Փար-Նորաւ :

2°. Հանրապետութիւն Օրանժի (50,000) :

3°. Հանրապետութիւն Թրանսվայլի (140 հազար) : Հոլանդացիք հաստատեցին այս գաղթականութիւնը որ այժմ ինքնագլուխ է :

Զ. ԳԱԲ ԿԱՄ ԲԱՐԵՑՈՒՍՈՅ ԵՐԿԻՐ

Հ. Բարեյուսոյ երկիրն որ տէրութեան կը վերաբերի, բնակիչը որչափ է, գլխաւոր քաղաքը ո՞րն է :

Պ. Բարեյուսոյ երկիրը 1601 ին Հոլանդացիներէն հիմնուած գաղթականութիւն է որ 1806 ին Անգղիացւոց անցաւ : Բնակիչն է 570 հազար, գլխաւոր քաղաքն է Քաջը (30,000), Հնդկաստան գացող նաւերուն համար կարեւոր : Հոս կը նստի Անգղիացի կուսակալը :

Բարեյուսոյ Երկրին բնակիչներուն մի
մասն Հոլանտացի է, մեծ մասը Հունգարու կո-
չուած Ավրիկեցի ցեղէն : Բարեյուսոյ Երկրին
հիւսիսային կողմն են բուն Հոդենդոդներն որ
Ավրիկեցի վայրենի ժողովուրդ են, այլ և այլ
ցեղերու կը բաժնուին, և միշտ իրարու հետ
պատերազմի մէջ են : Հոդենդոդք բնակու-
թեան մասնաւոր քաղաք չ'ունին, տեղ տեղ
խմբովին կը բնակին . Երկիր չեն մշակեր .
այլ դրացեաց Երկիրը կ'արշաւեն և խունաւոր
նետ կը դործածեն : Հոդենդոդք կռապաշտ
են : Ասոնց մէջ քրիստոնէութիւն և կրթու-
թիւն տարածելու շատ կ'աշխատին Անդղիացի
և Ամերիկացի Միսիոնարի :

Կոստանդնուպոլիս . Փոքր գիւղ է, որոյ գինին
Անդղիոյ մէջ մեծ համբաւ ունի :

Բարե-Լիւապէն (10,000), Փոստկրի և բուր-
դի մեծ առուտուր ունի :

Հ. Գլխաւոր լեռներն որո՞նք են :

Պ. Պօտէլլուն, Ռուէ, Վէցն, Չուաբէյն և
որոնք շատ բարձր գագաթներ ունին :

Երեւելի է Փռէ գետն 240 հզմ. Երկայնու-
թեամբ :

Բարեյուսոյ գլխոյն օդը բարեխառն է .
Սեպտեմբերէ մինչեւ Մարտ սոսկալի փոթո-
րիկներ կը պատահին հոն : Բնակչաց $\frac{1}{3}$ մասը
սպիտակ է, մնացեալք սև են և Հոդենդոդ :



ԱՆԾԱՆՈԹ ԵՐԿԻՐ

Հ. Նիկրիտիոյ և Հոդենդոդներուն Երկրին
վրայ ինչ պատմական գիտելիք կայ :

Պ. Նիկրիտիոյ և Հոդենդոդներուն Երկրին
մէջ ընդարձակ մաս մը կայ, որ դեռ անծա-
նօթ է : Շատ վայրենի ու բարբարոս աղքեր
կան հոն, որոց վրայ շատ քիչ ծանօթութիւն
առնուած է :

Մէկ մասին մէջ (Կուխնէայի Արեւելեան
կողմը) Մանկան անուն զօրաւոր թագաւորու-
թիւն մը կայ, բայց ասոր վրայ տոսյդ տե-
ղեկութիւն չկայ :

Այս Երկրին բնակիչնք իրենց դրացի բնակ-
չաց վրայ կ'արշաւեն, ինչպէս, Կալանչ, որ
մինչեւ Եթովպիա մտած են :

Դ. Ա. Ա Կ. Ա.

3. ԱՐԵՒՄՏՏԵԱՆ ԾՈՎԵԶՐ

Հ. Արեւմտեան ծովեզր անուամբ Ավրիկէի
որ մասը կը հասկցուի, ինչ Երկիրներ կը պա-
րունակէ այս մասը, գլխաւոր քաղաքներն
որո՞նք են :

Պ. Արեւմտեան ծովեզր անուամբ կը հասկցուի
Ավրիկէի այն մասը որ Բարեյուսոյ արեւմտեան
սահմանէն սկսելով կը հասնի մինչև Սենեկամ-
պիա : Այս ծովեզրը կը կոչուի Կուխնէա, ժողո-
վուրդը սեւամորթ ավրիկեցի և շատ վայրենի
է : Երկիրը քանի մը ինքնիշխան տէրութիւն-

Ներու կը բաժնուի , որոց գլխաւորներն են Հանհոյ , Քանիս , Անհու և Պետքելո : Այս վերջին երկուքին վրայ Բորդոկալցիք մեծ աղղեցութիւն ունին :

Հ. Այս ծովեզեր վրայ յիշուելու արժանի ուրիշ ինչ տէրութիւն կայ :

Պ. Այս ծովեզեր վրայ յիշուելու արժանի են ,

1. Անդղիոյ գաղթականութիւնը Սէւրբ Լեռ որոյ բնակիչներն են գերութենէ աղատուած քրիստոնեայ սևեր : Գլխաւոր քաղաքն է Ֆրետան (10,000) : Ունի դպրոց , լրագիր և թատրոն , հոս կը նատի Անդղիացի կուսակալմը :

2. Լէպերտ . Ազատ հանրապետութիւն , զոր Ամերիկացիք հիմնեցին 1822 ին , և աղատուած սև քրիստոնեայ գերիներ զրկեցին հոն՝ Ավրիկէի մէջ Եւրոպական կրթութիւն տարածելու : Բնակիչն է 20 հազար կրթեալ և 700 հազար բնիկ սև Աֆրիկեցի : Գլխաւոր քաղաքն է Մանդի (2,000) , Ուսումնարաններ և բանուկ վաճառականութիւն ունի :

3. Աշնառ , բնիկ Ափրիկեցի տէրութիւն է , որոյ բնակիչք պատերազմասէր և զօրաւոր ըլլալով շատ անդամ Անդղիացւոց յաղթեցին : Մայրաքաղաքն է Քուանտան (70,000) : Այս մասին մէջ ևս Անդղիացիք և Հոլանտացիք գաղթականութիւններ ունին :

Առաջի . Այս երկրին մեծագոյն քաղաքն է . ունի իրը (200,000) բնակիչ :

4. Տահանքէ երկիրը . Հոս կան շատ իշխա-

նութիւններ , որոց գլուխները խստաբարոյ մարդիկ են :

Գլխաւոր քաղաքն է Ուէրտ (20,000) , որոյ բնակչաց մէջ վաճառական Եւրոպացիք կան :

5. Էյօէ երկիրը կուինէայի հիւսիսային կողմը :

Գլխաւոր քաղաքն է Քանուկ :

6. Պէնէէ . Բնակիչները բաւական քաղցրաբարոյ և աշխատասէր են : Ողն է վնասակար :

7. Էլին կամ Ս. Գէրէ (10,000) , Հոլանտացւոց ձեռքը :

8. Քէէ-Քօր (8,000) , Անդղիացւոց ձեռքն

է , հողը լաւ մշակուած :

9. Կրանք-Պասամ . Գաղիացւոց կը պատկանի:

Դ. Ա. Ա Կ Բ .

Աֆրիկէի ՀԱՐԱՒՅՑԻՆ ՏէՐՈՒԹԻՒՆՔ

ՀԱՐԱՒԱՅՑԻՆ ԿՈՒԻՆԵԱ կամ ԳՈՆԿՈ

Հ. Այս երկրին վրայ ինչ պատմական գիտելիք կայ :

Պ. Այս երկիրը Բորթոկալցիք գտան 1847 ին . ի սկզբան քրիստոնէութիւնը յառաջ գնաց հոս , բայց յետոյ վերստին կուապաշտութիւնն ընդհանրացաւ :

Երկրին մեծ մասը Բորթոկալցւոց ձեռքն է :

Հ. Հարաւային կուինէայի դիրքն թնչպէս է:
Պ. Հարաւային կուինէա, որ Ավրիկէի
հարաւային արեւմուեան կողմը կ'իյնայ, լեռ-
նոտ բայց բարեբեր երկիր է:

Ծովեղերաց կլիման տաք և շատ վնասա-
կար է:

Այս երկրին մէջ շատ վայրենի գաղաններ
կան, երեւելի է Պօս կոչուած ահագին օձը.
Հոս կը գտնուին նաև վնասակար ճճիներ և
տեսակ մը մթեղ, որոց խայթուածը մահացու-
է, նաև տեսակ մը մեծ միջիւն ինսնուէ ըս-
տած, որ փղին պատիճը (Խօթնում) մտնելով
կը կատղեցնէ զնա, և վերջապէս կ'աղաննէ,
նաև տեսակ մը որդ կայ, որ տմէն կահ և
կարասի փոշի կը գտրձնէ:

Կուինէայի բնակիչը վայրենի են. կըսուի
թէ մարդագոհ ևս կ'ընեն:

Հ. Երկրին գլխաւոր քաղաքները որո՞նք են:
Պ. Լուսնի երկրին գլխաւոր քաղաքն է Պո-
տէ (15,000), Աղլանդեան Ովկիանոսի վրայ:

Քանիչ որ բարեբեր երկիր է Բորբոկալ-
ցւոց ձեռքը, գլխաւոր քաղաքն է

Սա-Սուլասուր (20,000), Դիրքը և շենքերը
գեղեցիկ են. բնակչաց մէջ շատ Եւրոպացի
կայ:

Անհօնն որ Քօնկօյի հարաւակողմը անբեր
և լեռնոտ երկիր է, օդը վատառողջ, գլխա-
ւոր քաղաքն է

Լուսնա-Սան-Փաֆլ (8,000), Բորբոկալցւոց
ձեռքը, և

ԳԵԿ (3,000), Բորբոկալցւոց պաշտպա-
նութեան տակ: Օդը ամարուան ժամանակ
շատ տաք է:

4. ԱՓՐԻԿԻ ԿՂԶԻՔ

Հ. Ավրիկէի կղզիներն ուր են:

Պ. Ավրիկէի կղզիք են Հնդկաց ծովուն մէջ.
ոմանք ազատ են, այլք կը վերաբերին Եւրո-
պական հինգ մեծ տէրութեանց:

1. Ավրիկէի ազատ կղզիք

Հ. Ավրիկէի ազատ կղզիք որո՞նք են:

Պ. Ավրիկէի ազատ կղզեաց գլխաւորներն
են,

1. Մարտիստոր (3,000,000 բնակչօք), զոր
առաջին անգամ ճանչցաւ Քրիստիան տը կունա
նաւապետն 1506ին: Մասակասքար առանձին
թագաւորութիւն է, ժողովուրդը կէս քա-
ղաքակիրթ:

Հ. Երկիրը և կլիման թնչպէս են և ժողո-
վուրդն թնչ ցեղէ է:

Պ. Ծովեղը տափարակ է, օդը վատառողջ.
ներքին մասին օդը միայն առողջ է և հողը
լաւ մշակուած: Բնակիչք կը բաժնուին այլ և
այլ ցեղ. գլխաւորներն են Օվաս և Սեքլավ
կոչուած ցեղք:

Գլխաւոր քաղաքներն են,

Թանաւառէլքու, Մասակէ և Փամբէնէտ, որոց
վրայ քիչ ժանօթութիւն կայ:

2. զանովակար (25,000), Ծովելքերաց մօտ :

3. Առաջնության (100,000) Արաբացի բնակչությ

Մասկաթի Սուլթանին հպատակ։ օդը բարեխառն է։ Այս կղզւոյն բերքն է հալուէ, ծովեղին կը հանուի բուստ (մէրճան) և սալթ (քէհրիպար)։

Գյլսաւոր քաղաքներն են .

թաւաբէտու և դասնալիւաւա . վերոյիշեալ երեք
վիք Անդ-ղիական ազգեցութեան տակ են :
հստոննէութիւնն առաջ կ'երթայ անսնց մէջ :

4. Քաջարեն-կղզեւ (50,000), թուռութիւն 18. բնակչութեալ Արաբացի են :

2. Անգղիացւոց վերաբերեալ կողիք

Հ. Ավրիկէի որ կղզիները կը վերաբերին
լնգդիացւոց :

Պ. 4. Յեղանակ-Փ (30,000), որ կուինէայի
մօտ բարձր լեռներով ծածկուած կղզի է,
հողը բարեբեր և աղէկ մշակուած . ունի մե-
ծամեծ անտառներ որ նաւաշինութեան հա-
մար աղէկ փայտ կուտան :

Գյուղաւորքադարն է Գլաբան (1,000) :

2. Ասօնքակօն կամ վերափոխություն (7,000), Ապառաժ և անբեր կղզի է :

Աբով-Ելեն (Ա. Հեղինէ) (7,000), Հոս աքսոր-
ուեցաւ Կարօլէն Պօնափարթ 1815 ին և մր-
ռաւ 1821 ին :

3. Մարտ կամ Գույնը կղզի (300,000), Այս կղզին 1814 էն առաջ Գաղիացւոց ձեռքն էր:

Հողը բարերերէ է, կը հասցունէ շաքար և ըն-
տիր խահվէ:

Գլխաւոր քաղաքն է Փօթ-Լուկ (30,000), որ գեղեցիկ նաւահանդիստ է, ունի կանոնաւոր շէնքեր :

4. Ուսումնական (250), Գաղղացիք Անգղիոյ թռ. ղուցին այս կողմէն :

5. Արյուելքան կղզիք (10,000), որ երկու մաս
են և վաճառաշահ :

3. Գաղիացոց վերաբերեալ կղզիք

Հ. Ավրիկեն ո՞ր կղղիները կը վերաբերեն
Գաղիացւոց :

Պ. 1. Պարբռնեան հոգին (200,000), Հնդկաց ծովուն մէջ, բարձր գաղաթով հրաբղմային:

Գյուղաւոր բերքն է, խահվէ և շաքար :

Վիճաւոր քաղաքներն են

Առ-Տէնէ (20,000), Նաւահանգիստը վի-
թորկի դէմ նաւերը պաշտպանելու անյար-
մար է :

2. Առաջընթացի գոմորեան կղզեաց մէջ :

3. Առաջնական-Առաջին . Մատակասքարի հիւսիսային կողմբ :

4. Բորբուխալցող վերաբերեալ կղզիք

Հ. Ավրիկելի ո՞ր կղզիները կը վերաբերէն
Փորթուկայցոց :

Պ. 4. Աստվածականիք (250,000), "Ընդհանուր և բարեկարգ են,

Q. E. D., \square , \square . $U^k + \omega_k L$, $U^{k+1} - U^k L$ \in Φ^{k+1} :

Հ. Այս կղզեաց կլիման և երկիրն ի՞նչպէս է։
Պ. Օդը բարեխառն է և առողջ, հողը բարեբեր է և լաւ մշակուած։ գլխաւոր բերքն է ցորեն, եղիպտացորեն, դարի, կանեփ և աղնիւ դինի։

Հ. Գլխաւոր քաղաքները որո՞նք են։
Պ. Գլխաւոր քաղաքներն են,
Անկա (10,000), Թէրկէրա կղզւոյն մէջ,
Ժաղկեալ քաղաք է։

Փանա-Տէհ-Ին (20,000), Ս. Մէքայէլ կղզգ-
ւոյն մէջ, Եւրոպայի և Ամերիկայի հետ մեծ
առուտուր ունի։

Զ. Մարտէր (112,000), ժամանակաւ այս
կղզին անտառ էր, 1431 ին Բորթոկալցիք այ-
րեցին անտառները և այդի տնկեցին։ Գինին
անուանի է։ օդը բարեխառն և զուարճալի։
բայց երբեմն մեծ փոթորիկներ կ'ելեն հոս։
Գլխաւոր քաղաքն է Ֆանչ (25,000), կղզւոյն
հարաւակողմը փոքրիկ նաւահանգիստ է։ Դիրքը
գեղեցիկ, բայց քաղաքը գէշ շինուած։

Յ. Դաշտի գլուխ Կունեռ (85,000), որոց գլ-
խաւորներն են,

Ս. Յանիք, Ս. Անտօն և Առն կղզին։ հոս շատ
գետնաշարժ կ'ըլլայ, հողը տեղ տեղ բարե-
բեր է, բայց շատ տեղ աւաղով և քարով ծած-
կուած։ Գլխաւոր բերքն է աղ, որ մեծ բա-
նակութեամբ Պրաղիլիա կը տարուի։ Բնա-
կիչք սեւամորթ և աղքատ են։

Գ. Ս. Մարտէր, Աղլանտեան ովկիանոսին
մէջ անբնակ կղզի է։

5. Ս. Թէ-Հաս (14,000), Որոյ հողը շատ բա-
րեբեր է և կուտայ առատ շաքար։

Գլխաւոր քաղաքն է Սէ-Թօս (3,000), կա-
նոնաւոր նաւահանգիստ չունի։

6. Խը-Ռէ-Փրէն (Խշանաց կղզի) (4,000),
օդը բարեխառն և առողջ է։ Գլխաւոր բերքն
է շաքար։

5. Սպանիացւոց վերաբերեալ կղզիք

Հ. Ավրիկէի ո՞ր կղզիները կը վերաբերին
Սպանիացւոց։

Պ. Լ. Քանարեան Կուն (250,000), որոց գլ-
խաւորներն են,

Քանարեա, Թէներէֆա, Բալմ, Երկանի Կունն և
Գօրնակինադուրա : Ասոնց ամէնը լեռնային և հրա-
բլղիսային են։

Ծովեղերեայ մասն անբեր և քարուտ է,
բայց ներբին մասը՝ բարեբեր և լաւ մշակուած։

Այս կղզեաց մէջ կը բնակէր ժամանակաւ
կիւնալ կոչուած ցեղը, որ ջարդուեցաւ Սպա-
նիացիներէն և անհետացաւ։

Գլխաւոր քաղաքն է Սէ-Քաս (Ս. Խաչ)
(8,000), Թէներէֆա կղզւոյն մէջ. ունի կանո-
նաւոր փողոցներ, տուներ և քանի մը եկե-
ղեցի։

2. Անօպօն (1,200), կուինէայի ծոցին մէջ։



Դ Ա Ս Ա Կ Գ .

Ա Մ Ե Ր Ի Կ Ա

Հ. Ամերիկայի վրայ Բնչ պատմական դիտելիք կայ :

Պ. Ամերիկա անծանօթ էր Հին աշխարհին մինչև 1492, երբ Ճենովացի Քրիստափոր Կուլսովոսն Սպանիոյ թագաւորին օժանդակութեամբ Եւրոպայէ դէպ արեւմուտք նաւարկելով, դտաւ այն տարւոյն հոկտեմբերի 12ին Կուանայա կամ Սան-Սալվատօր կղղին, որ է մին Լուքայեան կղղեաց : Յետոյ Ամերիկոս վէսփուչչի Խտալային դտաւ բուն Ամերիկայի ցամաքը, որ յանուննորա կոչուեցաւ Ամերիկա :

Հ. Նախ ով հաստատեց գաղթականութիւն Ամերիկա :

Պ. Սպանիացիք, Բորթոկալցիք և ապա Անդղիացիք գրաւեցին այն Երկրէն Ընդարձակ մասեր : Դէպ ի վախճան Ժ. գարուն այն գաղթականութիւնք Եղան ինքնագլուխ :

Հ. Ամերիկա Երկրիս ո՞ր կողմը կիյնայ :

Պ. Ամերիկա Եւրոպայի արեւմուեան կողմն է՝ հիւսիսային բեւեռէն մինչեւ հարաւային բեւեռ :

Այս Երկիրն ունի բարձր լեռներ, մեծամեծ գետեր, Ընդարձակ ծովակներ, բարեբեր հովիտներ, անբեր և աւաղուտ անպատճեր, մեծ կղղիներ, և Հին աշխարհի ամէն աստիճանի կիման :

Հ. Ամերիկայի մէջ Բնչ տեսակ հանքեր կը գտնուին :

Պ. Ամերիկայի հանքային հարաստութիւնը շատ աւելի է քան հին աշխարհինը . ոսկոյ առատ հանքեր ունին Քալիֆօրնիա, Նոր Մեքսիկոյ, Քոլոմնիա, Պրազիլիա և Բէրու . արծաթի հանք՝ Զիլի և Բէրու . աղամանդ՝ Պրազիլիա . իսկ Երկաթ, հանքային ածուխ, պղինձ, կապար, անագ ևն. ևն. կը գտնուին առատութեամբ այն Երկրին գրեթէ ամէն մասին մէջ :

Հ. Ամերիկա Բնչ ծառեր ունի Հին աշխարհի ծառերէն տարբեր :

Պ. Ամերիկա ունի շատ տեսակ ծառեր որ չկան Հին աշխարհին մէջ, որպիսի են Պրազիլեան փայտ, քաքաղ, քինա (Քնա Քնա), համեմուկ (Համեմուկ), լեղակի ծառ, հացի ծառ, կաթի ծառ, ևն. ևն :

Հ. Ամերիկայի մէջ Բնչ տեսակ անասուններ կան Հին աշխարհի անասուններէն տարբեր :

Պ. Լամ ըսուած ոչխարի, նման անասունը զոր տեղացիք ընտանեցնելով՝ կը գործածեն բեռ կրելու . Բերուի մէջ այս անասունը շատէ :

Հ. Ամերիկայի կիման Բնչպէս է :

Պ. Ամերիկայի կիման այնչափ տաք չէ որ չափ Ափրիկէի և Ասիոյ կիման : Օդն ընդհանրապէս առողջ է, բաց ի Մէքսիկոյի ծովեղին, ուր Դեկին ջրէ ըսուած հիւանդութիւնը միշտ կայ :

Հ. Ամերիկայի գլխաւոր ծովերն որո՞նք են :
Պ. Ամերիկայի գլխաւոր ծովերն են Հիւսային կողմը՝ Սարսոցեալ Ոչիսնոս և Պաֆինէ ծովը :

Արեւելեան կողմը՝ Առլանդեան Ոչիսնոս և Անտիլեան կամ Քարակպեան ծովը . Արեւմտեան կողմը՝ Խաղաղական Ոչիսնոս և Պէհրինէայ ծովը :

Հ. Ամերիկայի գլխաւոր ծոցերն որո՞նք են :
Պ. Ամերիկայի գլխաւոր ծոցերն են Արեւելեան Եղերքը՝ Հուասոնի, Ս. Լաւրենտիոնի, Ջէֆինի . Մէծուստուս ծոցերը և Հոնդուրաս ծոցը . Արեւմտեան Եղերքը Քամբոջանիոյ ծովածոցը :

Հ. Ամերիկայի գլխաւոր նեղուցները որո՞նք են :

Պ. Ամերիկայի գլխաւոր նեղուցներն են՝ Պէհրընէա նեղուցն Ասիոյ և Ամերիկայի մէջտեղ . Լէսէտուրի, Տեւէսի, Գլանցէնի, Հուատոնի և Պէտենի նեղուցներն՝ Բրիտանական Ամերիկայի մէջ . Պահանայի ջրանցքը՝ Միացեալ Նահանգաց մէջ . Մակելլանի նեղուցը՝ Բադակոնիոյ հարաւային կողմը :

Հ. Ամերիկայի կղզիները որո՞նք են :

Պ. Ամերիկայի կղզիներն են Պաֆինէ ծոցուն կղզիները, Լաւրենտիոնի ծոցին կղզիները, Լանէայլանդ, Պէրմուտեան, Լուսայէան, և Մէծ ու Փուր Անտիլան կղզիք՝ Ադլանդեան Ովկիանոսի մէջ . Նոր Գեորգիա, Մալտիլէան, Մակելլանեան, Աստրուաժածուս կղզիք, Ջէլուն, Խոստանուշէլ, Կալաբրիան՝ Խաղաղականին մէջ, և Պէհրընէայ ծովուն կղզիները :

Հ. Ամերիկայի թերակղզիներն որո՞նք են :
Պ. Ամերիկայի թերակղզիներն են՝ Լապրուրը և Նոր Սկովիչ, Ֆլուէրա, Տէլէլլէր, Գալիքինէանի, Եռուսալիմ :

Հ. Ամերիկայի գլխաւոր հրուանդաններն որո՞նք են :

Պ. Ամերիկայի գլխաւոր հրուանդաններն են՝ Ֆէրուէ, Կրէօնլանտի, հարաւային կողմը . Ռուարէնհուր, Ջէրլ Լապրասորի Եղերքը .

Սէպու՝ Նոր Սկովիչոյ Եղերքը .

Դանիա՝ Ֆլորիտայի հարաւային կողմը . Բարոն՝ Եռուսալիմի Եղերքը .

Ս. Ռուսու՝ Պրազիլիոյ Եղերքը .

Ֆրուարտ՝ Ամերիկայի հարաւային ծայլը .

Հուան՝ Մակելլանու արքիպեղադոսին հարաւային կողմը .

Պլանտոն՝ Բերուի Եղերքը .

Սուրբ Ղուկաս՝ Բալիֆոռնիոյ Եղերքը, և Արտօնեան Քլունի՝ Ամերիկայի հիւսիսային արևմտեան ծայլը :

Հ. Ամերիկայի գլխաւոր լիճերը կամ ծովակներն որո՞նք են :

Պ. Ամերիկայի գլխաւոր լիճերը կամ ծովակներն են՝ Սարկաց լիճը և Ո-ինէբէն՝ Բրիտանական Ամերիկայի մէջ . Վէրէն լիճ, Մէրէն, Հուան, Իրէն, Օնտարիո՝ Միացեալ Նահանգաց մէջ :

Նէտարակուսու՝ միջին Ամերիկա :

Մարտանիպու՝ Բոլումպիոյ մէջ . Դէրէնտուի մէջ . Բարոն՝ Պրազիլիոյ մէջ :

- Հ. Ամերիկայի գլխաւոր գետերն որո՞նք են :
- Պ. Ամերիկայի գլխաւոր գետերն են ,
1. Մայենս . կը թափի Սառուցեալ ծովը .
2. Նելսոն . կը թափի Հուդասնի ծոցը .
3. Սուրբ Լաւրենտիոս կամ Սուրբ Լորենց ,
Օրբուտոյ , Այաղնաս Քերը , Դուանդէն , Սուրբ
Ֆրանչիստ և Լա Բլանտ , կը թափին Աղլանդեան
Ովկիանոսը .
4. Մայենս , Բէն Նորդէ , կը թափին Մեք-
սիկոյի ծոցը :
5. Մահամենս . կը թափի Քարախպեան ծովը .
6. Օրենս . կը թափի Խաղաղական Ովկիա-
նոսը .
7. Քաջրատոյ . կը թափի Քաղիֆունիոյ ծոցը :
- Հ. Ամերիկայի մէջ ինչ երեւելի պարանոց
կայ :
- Պ. Ամերիկայի նշանաւոր պարանոցն է Բա-
նանայի պարանոցը որ հիւսիսային Ամերիկա հա-
րաւայնոյն հետ կը կապէ : Այս պարանոցը
բանալու պատրաստութիւններ սկսած են :
Բանամայի պարանոցը եթէ բացուի , Խաղա-
ղական կամ Մեծ Ովկիանոսը պիտի միանայ
Աղլանդեանի հետ :



Դ Ա Ս Կ Դ .

- Հ. Ամերիկայի լեռներն և հրաբուխներն ո-
րո՞նք են :

Պ. Ամերիկայի լեռներն են՝ Ալէհանի գօտին
Միացեալ նահանգաց արևելեան կողմը , Ա-
պատաժուար լերանց գօտին , Քորդիլերան լերանց գօ-
տին որոյ բարձրագոյն լեռը Զիմորացայ կը
կոչուի , և Պրադիլեան լերինք :

Հրաբուխներն են Ս. Երես , հիւսիսային
կողմը . Բանանատունիւթէ Մեքսիկոյի մէջ , Քորդացաւուէ
և Բենանա՝ Քոլումբիոյ մէջ , Արեւելքա՝ Բէրուխ մէջ :

- Հ. Ամերիկայի բնակիչք ինչ ազգէ են :

Պ. Ամերիկայի այժմու բնակչաց մի մասը
բնիկ վայրիներէն է , որ պղնձագոյն են և մարմ-
նով զօրեղ , կը բնակին մանաւանդ անտառնե-
րու մէջ . գաղթականք են Եւրոպայի գրեթէ բո-
լոր ազգերէն . կան նաեւ Ավրիկեցի գերիներ :
Ուսումն , գիտութիւն , արուեստ կատարելու-
թեան հասած են , մանաւանդ Միացեալ նա-
չանդաց մէջ ; ուր շատ են նաեւ երկաթուղիք :

- Հ. Բնակչաց կրօնքն ինչ է :

Պ. Հարաւային մասին բնակիչք Հոռվմէա-
դաւան են . Միացեալ նահանգաց և Նոր
Բրիտանիոյ բնակիչք՝ բողոքական . իսկ ան-
տառաքնակ վայրենիք՝ կռապաշտ :

- Հ. Ամերիկայի ազգերուն կառավարու-
թիւնն ինչ է :

Պ. Ամերիկայի ազգաց մեծագոյն մասին
կառավարութիւնն է Հանրապետական :

Հ. Ամերիկայի բնակիչք որչափ են, երկիրն բնչպէս կը բաժնուի :

Պ. Ամերիկայի բնակիչք են 120 միլիոն. երկիրը կը բաժնուի Ա. Հետևային, Բ. Մէջն և Գ. Հարաւային :

Հ. Հիւսիսային Ամերիկայի մէջ բնչ երկիրներ կան :

Պ. Հիւսիսային Ամերիկայի երկիրներն են. 1. Ալսուտ, 2. Դանիան հետևային Ավրիլ, 3. Բրիտանիան հետևային Ավրիլ, 4. Հետևային Թունիանանդներն, և 5. Մէջութոյ :

Հ. Միջին Ամերիկա քանի մասէ կը բաղկանայ :

Պ. Միջին Ամերիկա կը բաղկանայ, 1. Ճամագոյն ճանէ, և 2. Արեւմուտան Հնդկաստանի Արեւուղաբուէ :

Հ. Հարաւային Ամերիկայի մէջ քանի տէրութիւն կայ :

Պ. Հարաւային Ամերիկայի մէջ առաջ տէրութիւն կայ. 1. Քաղաքացիութեան հանրապետութեան, 2. Բէրու, 3. Պուլէտ, 4. Ջէլէ, 5. Բարակուայ, 6. Ուրուկուայ, 7. Լա Բլանտ, 8. Պրայնիս, 9. Կույան, 10. Հարաւային աշտար Ավրիլ :



Դ Ա Ս Կ Ե .

1. Ալասքա կամ Ռուսիոյ Ամերիկա

Հ. Ալասքայի եր կրին վրայ ինչ գիտելիք կայ :

Պ. Այս երկիրը Ռուսաց ձեռքն էր, և կը կոչուէր Ռուսիոյ Ամերիկա. յետոյ Ռուսիա 1866ին վաճառեց զայն Միացեալ-Նահանդաց :

Այս երկրին բնակչաց մեծ մասն ինքնաշը լուսէ, հոս կայ ցեղ մը երկճիւղ շրթամք, բնութեամք անասնաբարոյ :

Ամերիկայի այս մասին կը վերաբերին Ալէ-ադեան կղզիք 50 հազար բնակչօք :

Ծովեղը շատ ընդարձակ է և գրեթէ միշտ ձեամք և սառուցով ծածկուած : Ներքին մասին մէջ կան բարձր լեռներ և մեծամեծ անտառներ . հոս է Ս. Եղիա կոչուած Քրաբուխը, որոյ բարձրութիւնն է 5440 մեթր: Գլխաւոր քաղաքն է

Նոր-Արտանիէլ (1,000), Սիթքա կղզւոյն մէջ :

2. Գանիական հիւսիսային Ամերիկա
կամ Կրեօնլանտ

Հ. Կրէօնլանտի վրայ ինչ գիտելիք կայ, և Ամերիկայի ո՞ր կողմն է այս երկիրը :

Պ. Ամերիկայի հիւսիսային ծայրը ձիւներու տակ ծածկուած երկիր է : Այս երկիրը 970 ին Տանիմարքացիք դտան և մինչեւ հիմա անոնց ձեռքն է : Երկրին ներքին մասն անծանօթ մնացած է : Կրէօնլանտ հիւսիսային բե-

Եռոխն մօտ ըլլալով ունի շատ ցուրտ կղիսա .
Երեք ամիս անդադար գիշեր է հօն և երեք
ամիս անդադար ցերեկ :




ՀԻՒՍԽՈՅԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵՆԴԱՆԻՔ

Գլխաւոր բերքն է ամիանդ, հանքային
ածուխ, կրանիդ (տեսակ մը քար), և քանի
մը տեսակ հանք :

Անասուններն են ճերմակ արջ, գայլ, ջըր-
աղուէս, շուն որ բալխիր (Քըլշէ) քաշելու կը
ծառայէ, փոկ և պալէնա որ բնակչաց գլխա-
ւոր սնունդն է :

Հ. կրէօնլանտի բնակիչք Բ'նչ կը կոչուին :
Պ. կրէօնլանտի բնակիչք կը կոչուին իւ+է-
տայք . կարճահասակ մարդիկ են և կապրին
որսորդութեամբ և ձկնորսութեամբ . կը բնա-
կին ձմեռը գետնափոր տեղեր և ամառը կաշ-
եայ վրանի տակ : Հոս դանիացիք դադիթա-



ԵՍՔԻՄԱՑԻՔ

կանութիւն հաստատած են : Միսիոնարաց
ջանքով էարիմացւոց մեծագոյն մասը Քրիս-
տոնեայ եղած է :


3. Քրիտանական հիւսիսային Ամերիկա
Հ. Քրիտանական Ամերիկայի վրայ Բ'նչ գե-
տելիք կայ :

Պ. Կըսուի թէ այս երկիրը 1497 ին վենե-
տացիք գտան և ֆրանսուա Ա., Գաղիոյ թա-
գաւորը, 1534 ին գրաւեց զայն . 1608 ին

շինուեցաւ Քիւպէք քաղաքը և ծաղկեցաւ :
1760 ին այս երկիրն անցաւ Անդղիացւոց և
կոչուեցաւ Նոր-Բրիտանիա :

Հ. Նոր-Բրիտանիոյ սահմաններն որո՞նք են :
Պ. Հիւսիսէն՝ Սառուցեալ ովկիանոս . Արե-
ւելքէն՝ Աղլանտեան ովկիանոս . Հարաւէն՝
Միացեալ-Նահանգները , և Արեւմուտքէն՝
Խաղաղական ովկիանոս :

Այս երկիրն հիւսիսակողմն դեռ անծա-
նօթ է . բայց կը կարծուի թէ հոն կան լայ-
նատարած դաշտեր , ծովակներ և գետեր .



ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԵՐԿԻՐՆԵՐՈՒՆ ՄԻԶ ՏԵՍԱՐԱՆ

օդը շատ ցուրտ է . Հիւսիսային ծովը տար-
ւոյն մեծ մասին մէջ սառած է :

Հարաւային մասին կիման բարեխառն է ,
երկիրը բարեբեր :

Լապրատորի ցամաքակղզին շատ ցուրտ է :
Քանատա ցամաքակղզին , Նոր-Ռուսիա ,
Նոր-Պրաւնսուիք և Նոր-Ֆառւնտլանտ կղզիք
ձմեռը ցուրտ և ամառը տաք են :

Հ. Այս երկիրն հանքերուն վրայ ի՞նչ գի-
տելիք կայ :

Պ. Այս երկիրը շատ հարուստ չէ հանքե-
րով , բայց և այնպէս ունի երկաթ , հանքային
ածուխ , տորփ , կուսզ (գոնդոլ) , մանկանէզ ,
ոսկի և արծաթ քիչ :

Հ. Նոր-Բրիտանիոյ բնակիչք ի՞նչ աղգերէ
և որչափ են :

Պ. Նոր-Բրիտանիոյ բնակչաց մէջ կայ Անդ-
ղիացի , Գաղիացի , Գերմանացի , բնիկ Ամե-
րիկացի . Հիւսիսային մասին մէջ կը բնակին
էսքիմացիք : Բնակչաց թիւն է 5 միլիոն :

Հ. Նոր-Բրիտանիոյ մէջ ի՞նչ շինութիւններ
կան :

Պ. Նոր-Բրիտանիոյ , մանաւանդ Քանա-
տայի մէջ շինուած են շատ ջրանցներ և եր-
կաթուղիներ որոց գլխաւոր գիծերն են , Քիւ-
պէքէ ի Մօնրէալ և Աղլանտեան ովկիանոս .
Մօնրէալէ ի Մէն-Լորան և Միացեալ Նահան-
գաց դաւառները :

Հ. Նոր-Բրիտանիոյ ընդհանուր երկրին վը-
րայ լինչ գիտելլիք կայ :

Պ. Երկրին արեւմտեան կողմը կայ գօտի մը
բարձր լեռանց որ Ռուսի-Ամերիկայէ սկսե-
լով կ'երթան մինչեւ Միացեալ-Նահանգները ,
և կը կոչուին Ապահառք լուն+ , մնացած տեղե-
րը դաշտային են :

Հ. Այս երկրին ծովակները որո՞նք են :

Պ. Այս երկրին ծովակներն են վենետիկի ,
Անդաման+ , Մեծ-արջ , Ռուս-Ռէն , Տէր , Գերեաց ծո-
վակ և Նորդլանդ :

Հ. Գլխաւոր գետերը որո՞նք են :

Պ. Գլխաւոր գետերն են ,

Հիւանձն որ կ'անցնի Նիւ-Եօրքէ .

Տէլ-Հար » » Ֆիլատէլֆիայէ .

Բանանա+ » » Ռւաշինկթընէ .

Ս. Ճօն » » Ֆլորիտայէ .

Ասոնք կը թափին Աղլանտեան ովկիանոս .

Մէրսիկայի ճոցը .
Մէրսիկայի ճոցը .

Մէրսիկ , 3,700 հզրմ. երկայն

Օհայո 2,400 » »

Կարմէ գետ 4,000 » »

Ասոնք կը թափին Միախիբբի գետը :

Քուլման+ 4,000 հզրմ. երկայն . և Քուլման+ ,
կը թափին Խաղաղական ովկիանոսը :

Մանչէնչ . որ կը թափի Սառուց . ովկիանոս :

Ս. Լաբրէնտիու կամ Մէն Լուսն , որ կը թա-
փի Աղլանտեան ովկիանոս , և է 2,000 հզրմ.
երկայն :

Այս գետը կը միացունէ Վէտէն ,
Հուարդն , իբէ և 0նդարէ ծովակներն Աղլան-
տեան ովկիանոսի հետ :

Բոլոր այս գետերը մեծ օգուտ ունին
երկրին վաճառականութեանը , վասն զի նա-
ւարկելի են . շատերը ջրանցներու միջոցաւ կը
կապուին իրարու հետ :

Հ. Նոր Բրիտանիա քանի մաս կը բաժնուի :

Պ. Նոր Բրիտանիա կը բաժնուի 9 մաս .

Բաժանմունք Գլխաւոր քաղաք

1°. Արևելեան Քանատա Մօնրէալ

2°. Արեւմտեան Քանատա Թօրօնմթօ

3°. Նոր-Պրունսուիք Ֆրէտէրիկթովս

4°. Նոր-Սկովիթա Հալիֆաքս

5°. Նոր-Ջառունտլանտ Մէյնդ-Ճօն

6°. Բրէնս-Լուտուարի Կղզի Շարլօթ-Թովին

7°. Հիւտսօնի Երկիր Հիւտսօն

8°. Քէյփ-Պրըմըն Սիւնի

9°. Հիւտսօն արեւմտ. Երկիր Չունի

Հ. Նոր Բրիտանիոյ գլխաւոր քաղաքները
որո՞նք են :

Պ. Գլխաւոր քաղաքներն են ,

Մէրտեւլ (190,000) , Քանատայի մէջ Մէն-
Լորան գետին վրայ գեղեցիկ և ծաղկեալ նա-
ւահանդիստ է . հասարակաց և մանաւորաց
շէնքերը շատ գեղեցիկ են . անուանի է Մայր
Եկեղեցին :

Քուլման+ (50,000) , Քանատայի մէջ Մէն-Լո-
րան գետին վրայ ամուր քաղաք է . ունի գե-
ղեցիկ շէնքեր և դպրոցներ :

Թոքնելու կամ իւր (5,000), 0նդարիոյ ծովակին վրայ արեւմտեան բանատայի առաջին վաճառաշահ քաղաքն է . ունի կանոնաւոր շենքեր և անուանի դպրոց :

Մրեստելինով . Հոս կը նստէր կուսակալը որ հիմա կը նստի Օթալ :

Համբեն (15,000), 0նդարիոյ ծովակին վրայ գեղեցիկ քաղաք է :

Պ. Հետին (3,500)	Արեւելեան բանատի-Ռէզէր (5,000)	Մար (3,500)
Մար (3,500)	Մար (3,500)	Մար (3,500)

Հալքուտ (35,000), Նոր Սկովտիոյ մէջ Արևանտեան ովկիանոսի վրայ մեծ նաւահանգիստ է . Հոս է Նոր-Բրիտանիոյ զինուորական նաւարանը : Այս քաղաքին մէջ գեղեցիկ շենքեր և ուսումնարաններ շատ կան :

Օթալ (15,000), Հոս կը բնակի կուսակալը քաղաքն ունի փայտի մեծ առուտուր :

Պէտք (5,000), Բրէնս-Խոռուարի կղզւոյն մէջ . բնակիչք Սկովտիացի են :

Սէնտ-Ճ'ռ (20,000), Նոր-Ֆառնմոլանտի մէջ նաւահանգիստ է . ձուկի մեծ առուտուր ունի :

Հուարածն . Հոս մուշտակի մեծ առուտուր կայ :

Դ Ա Ս Կ Զ .


4. Հիւսիսային Միացեալ նահանգներ

Հ. Ամերիկայի Միացեալ նահանգաց վրայ ինչ պատմական դիտելիք կայ :

Պ. Ամերիկայի Միացեալ նահանգաց արեւելեան մասը 1600 էն ետքը Անդ-դիական գաղթականութիւններով սկսաւ ծաղկել Անդ-դիոյ իշխանութեան տակ, բայց ի վերջ կոյսանցեալ դարուն այս նահանգներն ապստամբելով, 1773 էն մինչեւ 1783 Անդ-դիոյ դէմ շարունակ պատերազմեցան Գաղիացւոց և Սպանիացւոց օդնութեամբ, և եղան անկախ հանրապետութիւն : Լուիզիանա, Նոր Մէքսիկոյ, Գալիֆունիա և Ֆլորիտա նահանգներն եւս միացնելով՝ հետզետէ ընդարձակեցան :

Այս երկիրն հիմա կը բաղկանայ 39 նահանգներէ որոց իւրաքանչիւրն ունի իւր առանձին կառավարութիւնը, բայց ամէնքը մի տէրութիւն են, և ընդհանուր կառավարութիւն ունին : Օրէնսդիր իշխանութիւնը Քոնկրէս կոչուած ազգային ժողովին ձեռքն է որ կը բաղկանայ ծերակուտէն որոյ անդամներուն թիւն է 78, և նահանգաց կողմէն դըրկուած պատգամաւորաց կամ երեսփոխանաց ժողովն : Գործադիր իշխանութիւնը նախագահին ձեռքն է որ վը տարին անգամ մը կը փոխուի :

Գերի գործածող հարաւային նահանգները



ՄԻԱՑԵԱԼ, ՆԱՀԱՆԴԱՅ ԿԱՊԻՏՈԼ, ԿՈՉՈՒԱԾ ԱԶԴԱՅԻՆ ՇԽՆԳԲ

գերի չունեցող հիւսիսայիններէն 1861 ին ապրատամբելով յաղթուեցան, որով գերութիւնը ջնջուեցաւ 1865 ին :

Զօրքը խաղաղութեան ժամանակ 50,000 է, նաւատորմիզը կը բաղկանայ 50 նաւէ 450 թնդանօթով . առեւտրական նաւերն են 1900:


Միացեալ նահանդք այսօր աշխարհիս

վրայ բազմամարդ, հարստագոյն և հզօրագոյն հանրապետութիւնն է :

Հ. Միացեալ նահանդաց սահմանները ուրանք են :


Պ. Այս երկրին սահմաններն են Հիւսիսէն՝ Նոր Բրիտանիա, Արեւելքէն՝ Ատլանտիան ովկիանոս, Հարաւէն՝ Մեքսիկոյի ծոցը և Մեքսիկոյ, Արեւմուտքէն՝ Խաղաղական ովկիանոս :

Միացեալ նահանդաց մէջ երկու գլխաւոր լերանց գոտի կայ, մին՝ Արեւմուեան դին, Ապառաժ լերինք, որ կ'երթան Հիւսիսէն Հարաւ, և միւսն՝ Արեւելքան դին, Ավելկոմի



ՄԻԱՑԵԱԼ ԳԵՏԻՆ ՎՐԱՑ ՏԵՍԱՐԱՆ

լերինք, որ Քանատայէ սկսելով կ'երթան մինչեւ Միսիսիպի գետը : Այս երկու լեռանց մէջ երկիրը դրեթէ անբեր և աւազուտ է, իսկ երկու կողմերը շատ բարեբեր են . Ալէ-կանի լերանց Արեւելեան կողմը և Միսիսիպիի եզերը լաւ մշակուած և բազմամարդ են, նմանապէս Ապառաժ լերանց Արեւմտեան կողմը, շատ բարեբեր է և օր ըստ օրէ կը ծաղկի :



ԱՊԱՌԱԺ ԼԵՐՆԵՐԷՆ ԱՆՑԱՌՈՂ ԵՐԿԱԹՈՒՂԻՒՆ

Ունի երկաթուղի 1,774 մղոն երկայն, որ Միսիսիպի գետին վրայ 0մահա քաղաքէն ելնելով կ'անցնի ապառաժ լեռներէն մինչեւ Սան-Ֆրանչիսկոյ քաղաքը :

Հ. Ի՞նչ է երկրին բերքը :

Պ. Գլխաւոր բերքն է ծխախոտ, շպար, բամբակ, քաքաօ, լեղակ, ցորեն, պտուղ, շինութեան փայտ, եւ: Պիտանի անասունք շատ են . կան նաև դայլ, արջ, մեծամեծ օձեր, կոկորդիլոս և ուրիշ դաշտաններ :

Հ. Երկիրն ի՞նչ տեսակ հանքեր ունի :

Պ. Ասկւոյ, արծաթոյ, սնդկի հանքեր առատ են Քայլիֆոռնիա քան ուրիշ որ և իցէ երկիր : Վերին ծովակին քովերը մաքուր պղնձի, երկաթի, հանքային ածխոյ, կապարի և անագի հանքեր կան և լաւ կը գործուին :

Հ. Ի՞նչ է Միացեալ Նահանգաց կղիման :

Պ. Հիւսիսային մասին կղիման ամարուան մէջ տաք և ձմեռուան ժամանակ սաստիկ ցուրտ է . Հարաւակողմեան ծովեղերաց օդը վատառողջ, բայց ներքին մասին օդը մաքուր երարեխառն է :

Հ. Այս երկրին մշակութիւնը, երկաթուղիները, վաճառականութիւնը և դաստիարակութիւնն ի՞նչպէս են :

Պ. Այս երկրին մէջ մշակութեան մեծ հոգ կը տարուի : Շատ երկաթուղիք կան որոց մէջ յիշուելու արժանի է Նիւ-Եօրքէ Սան-Ֆրանչիսկօ դացող գիծը, որ երկու Ովկիանոսները կը կապէ իրարու, և ունի 7,400 հզմ. երկայնութիւն, երկրին բոլոր երկաթուղւոյ գծերուն երկայնութիւնն աւելի է քան 160,000 հազարամետր, այնպէս որ կրնայ աշխարհս չորս անգամ պատել :

Միացեալ Նահանգաց վաճառականութիւնը շատ ծաղկեալ է : Հասարակաց կրթութիւնն յառաջ կ'երթայ արագ . անուանի են Պօսդոնի և Ֆիլատէլֆիայի համալսարանները ,
Հ. Նիակարայի Ջրվէժն ինչ է :



ՆԻԱԿԱՐԱՅԻ ՋՐՎԵԺՆ

Պ. Աշխարհիս մեծագոյն ջրվէժն է . ահադին քանակութեամբ ջուր 160 սոտք բարձր ուղղահայեաց գահէ մը վար կը թափի :

Հ. Միացեալ Նահանգաց բնակիցը ո՞րչափ է . գլխաւոր նահանգներն և անոնց քաղաքները որո՞նք են :

Պ. Միացեալ Նահանգաց բնակիցն է 55 միլիոն , գլխաւոր նահանգներն և անոնց քաղաքներն են .

Հ. Մասսաշուս්ටර նահանգ , գլխաւոր քաղաքն է Պաստ (200,000) . Ունի գեղեցիկ և

վաճառաշահ նաւահանգիստ : Այս քաղաքին մէջ հրատարակութեցաւ Միացեալ Նահանգաց աղատութեան առաջին պատերազմը :

Հոս ծնած է Ֆրանքլին փիլիսոփիան :

2. Քանակութեալ նահանգ , գլխաւոր քաղաքներն են Նի-հելլ , Հարթինուր :

3. Նի-Եթու նահանգ , 4 միլիոն բնակչով . գլխաւոր քաղաքն է Նի-Եթու (1,500,000) , Հուստոն գետին բերանը . Ամերիկայի մեծագոյն վաճառաշահ նաւահանգիստն է . ունի մեծամեծ շէնքեր , գեղեցիկ փողոցներ , համալսարան և ուսմանց վերաբերեալ երեւելի հաստատութիւններ : Ալբան (60,000) . Պէտքէ (100,000) :

4. Բէնափիլման նահանգ , 2½ միլիոն բնակչոք . գլխաւոր քաղաքն է Ֆլուունչիտ Տէլէվար գետին վրայ (950,000) : Ամերիկայի մէջ շատ գործարաններ ունեցող քաղաքն է : Հոս է ազգային գրամատունը (Պանքա) , փողոցներն են լայն և մաքուր , շէնքերն հոյակապ . ունի վարժարաններ և համալսարան : Անուանի է Վուաշինկիթը անուն հրապարակը , ուր անուանի զօրտպետին վաշինկիթոնի անդրին կայձիու վրայ :

5. Մէքելբու նահանգ , բնակչաց հինգերորդը Սեւ է . գլխաւոր քաղաքն է Պալուէտ (350 հազար) , որ ունի համալսարան , բժշկութեան դպրոց , թանգարան և թատրոն :

6. Ֆլուէտ նահանգ , գլխաւոր քաղաքն է Դալլաս : Այս նահանգը բուստէ (Արքան) նեղ հալահաստ :

ցամաքակղղի է, որոյ համար երկրաբանք կ'ը-
սեն թէ 200 հազար տարուան մէջ գոյացած է:

7. Ալպառա նահանգ, գլխաւոր քաղաքն է
Մարտիրոս (35,000):

8. Լուսպանա նահանգ, գլխաւոր քաղաքն է
Նև-Օրբեն (200,000), Միսիսիպի գետին եղրը
շինուած. աշխարհիս վրայ բամբակի մեծա-

գոյն վաճառանոցն է: Նիւ-
եօլքէ ետքը այս է Միացեալ
նահանգաց երեւելի քաղա-
քը: Հոս կ'ըլլար գերեաց
սոսկալի առուտուրը որ դադ-
րեցաւ 1864 ի քաղաքական
պատերազմին ետքը:

9. Դէւսա, Ամերիկայի մե-
ծագոյն նահանգն է, բայց
բնակիչը քիչ:

ԲԱՄՊԱԿԻ ՏՈՒՆԻ 10. Բուր-Այլոն, Ամերիկա-
յի փոքրագոյն նահանգն է,
գլխաւոր քաղաքներն են Բուրչուրեն (55,000),
Սալտան (20,000), Փուր-Լան և այլք:


11. ԽԱՅՆԻ նահանգ, գլխաւոր քաղաքն է
Շէւան (200,000), Միչիկան ծովակին վրայ. 50
տարի առաջ վայրենիներու գեղ էր, հիմա
ցորենի մեծագոյն վաճառանոց է:

12. Թէւ, նահանգ, գլխաւոր քաղաքն է
Սէւնառարտ (150,000). Խոզի, կովի, ոչխարի և
ալեր մեծ առուտուր ունի. Հոս տարին կէս
միլիոն խոզ կը մորթուի, ուստի և խոզանուած
կը կոչուի:



13. Մէսորէ նահանգ, գլխաւոր քաղաքն
է Սէւ-Լու (200,000) Միսիսիպի գետին վրայ
շինուած վաճառաշահ քաղաք է. 1804 ին ու-
նէր իբր 1000 վայրենի բնակիչ, որ առեւ-
տուրի մէջ փոխանակ դրամի կը գործածէին
կաշոյ կտորներ:

14. Քալէֆորնի նահանգ, Խաղաղական ով-
կիանոսի եղերքը. ունի ոսկւոյ հանք, որմէ
1864 ին 84 միլիոն թալերի ոսկի հանուեցաւ:
Գլխաւոր քաղաքն է Սա-Ֆրանչէսկո (120,000),
գեղեցիկ և ընդարձակ է նաւահանդիսար:
Շողենաւք ասկէ կ'երթան ուղղակի ձաբոն և
ջին:



Հ. Ամերիկայի մէջ ամէն երկիր նահանգ է :
Պ. Կան երկիրներ որ գեռ նահանգ չեն ,
ինչպէս .

Գուլունպէս , Գլխաւոր քաղաք՝ Ռուբենին (100
հազար) , Փօթօմակ դետին վրայ , 1792 ին
շինուած . բոլոր երկրին մայրաքաղաքն է : Հոս
կը գումարուի Քանէէս կոչուած Ազգային ժո-
ղովը , հոս է նաև պալատ Միացեալ Նահան-
գաց ընդհանուր նախագահին և նաւարանը :

Հ. Միացեալ Նահանգաց մէջ ինչ կը պա-
հանջուի որ երկիր մը նահանգ համարուի :

Պ. Երկիր կամ գաւառ մը 900,000 բնակիչ
ունենալու է որ նահանգ համարուի :

Դ. Ա. Ա Կ Ե .

Տ. Մէքսիքոյ

Հ. Մէքսիքոյի վրայ ինչ պատմական գի-
տելիք կայ :

Պ. Երր Մէքսիքոյ անցաւ Սպանիացւոց
ձեռքը , ծաղկեալ տէրութիւն էր : Սպանիա-
ցիք 1521 ին տիրեցին այս հարուստ երկրին ,
բայց Երեք հարիւր տարի ետքը , 1821 ին
Մէքսիքոյ ապաստամբելով եղաւ հանրապետու-
թիւն , և այնուհետեւ խոռվութիւնք պակաս
չեղան : Իրեւ դարման այս խոռվութեանց ,
Գառիոյ բանակին զօրութեամբ Աւստրիոյ այժ-
մու կայսեր եղայրը Մաքսիմիլիանոս դուքս

1864 ին դրուեցաւ սահմանադրական կայսր
Մէքսիքոյի , բայց երկրին ժողովուրդը խոռվու-
թիւն հանեց , և Մաքսիմիլիան 1867 ին հան-
րապետականաց նախագահին ժուարէզի ձեռքն
ինալով սպանուեցաւ , և հանրապետութիւնը
դարձեալ հրատարակուեցաւ Մէքսիքոյի մէջ :

Հ. Մէքսիքոյի սահմաններն որո՞նք են :

Պ. Մէքսիքոյի սահմանք են , Հիւտիսէն՝
Միացեալ Նահանգները , Արեւելքէն՝ Մէքսի-
քոյի ծոցը , Հարաւէն՝ կուաթէմալա , Արեւ-
մուտքէն՝ Խաղաղական ովկիանոս :

Երկիրը լեռնոտ է և շատ հրաբուղիս ունի :
Ներքին մասին օդը բարեխառն է , բայց ծո-
վեզերաց օդը՝ տաք ու վնասակար :

Հ. Ի՞նչ է երկրին բերքը :

Պ. Երկրին բերքն է աղնիւ և ոլիտանի
բոյսեր . ինչպէս , խահուէ , նարինջ , թուզ ,
լեմն , ցորեն , հնդկացորեն , շաքար , քաքաօ ,
լեղակ , ծիսերդ , բամպակ և որդան կարմիր
(բլքնչւ) :

Ընտանի անասուններ եւս կան . կան նաև
տեսակ տեսակ գաղաններ , որոց մէջ նշանա-
ւոր են Ժակուտը և Քառուսը , գաղան նման
արջոյ :

Հ. Մէքսիքոյ ինչ տեսակ հանքեր ունի :

Պ. Մէքսիքոյի մէջ արծաթի , ոսկոյ ,
պղնձի , մնդկի , երկաթի և կապարի հանքերը
շատ հարուստ են :

Հ. Ուսմանց մէջ ինչ յառաջադիմութիւն
ունի Մէքսիքոյ :



ԽԱՀՈՒԵՒ ՏՈՒՆԿԲ

Գ. Ռւսմանց , գիտութեանց , արուեստից կողմանէ Մէքսիկայիք սոհէպ խոռվութեանց պատճառաւ շատ ետ մնացած են : Բամզակեղին , թուղթ և ապակեղին շինելու քանի մը գործարաններ միայն կան Մէքսիկոյ և Փուէպլա քաղաքաց մէջ :

Հ. Մէքսիկոյի բնակիչք ի՞նչ սերունդէ են :

Գ. Մէքսիկոյի բնակչաց մեծագոյն մասն ի բնէ Եւրոպացին , մնացեալ մասը՝ բնիկ Ամերիկացի . լեզուն Սպաններէն է , կրօնքն Հոռվմէական :

Հ. Երկիրը քանի՞ նահանգ կը բաժնուի :

Պ. Բոլոր երկիրը 22 նահանգ կը բաժնուի իրարու դաշնակից , և ամենուն վրայ ընդհանուր նախագահ մը կայ :

Հ. Մէքսիկոյի բնակչաց թիւն որչափէ է , գլխաւոր քաղաքները որո՞նք են :

Պ. Մէքսիկոյի բնակչաց թիւն է 9,500,000. գլխաւոր քաղաքներն են .

1. Մէտուն (250,000) , Ամերիկայի գեղեցիկ քաղաքներէն մին , անուանի են Եկեղեցիք , համալսարանը , թատրոնը , բժշկական գըպրոցն և ուրիշ ուսման վերաբերեալ տեղեր :

2. Բուենոս - առեւ - Լոս - Անկէս (80,000) , Արուեստներու կողմանէ աղնուագոյն քաղաքն է , 1863 ին Գաղիացիք տիրեցին այս քաղաքին :

3. Կուատալանդարտ (70,000) , Գեղեցիկ քաղաք է , վայելուչ շինքեր և ծաղկեալ վաճառականութիւն ունի :

4. Կուանա - Խուանիս (70,000) , Հոս է Մէքսիկոյի մեծագոյն արծաթահանքը :

5. Բուերէլլարտ (50,000) , Ունի ասուոյ (շունա) , կաշւոյ և ծխերդի գործարաններ : Հոս սպաննուեցաւ Մաքսիմիլիան :

6. Անա - Լուիս (35,000) , Ունի առատ հանքեր :

7. Բանուէլ (15,000) , Շինուած է Եուքաթան թերակղղոյն վրայ . ունի մոմեյ և ներկի մեծ առուտուր :

8. Վէրա - Բրուն (10,000) , Մէքսիկոյի ծոցին վրայ ամուր և ծաղկեալ նաւահանգիստ է . Եւրոպական վաճառականութեան գլխաւոր տեղն . օդը վատառողջ և ֆնասակար է :

9. Թամանկու (7,000) , Նաւահանգիստ է համանուն լճին վրայ շինուած :

Հ. Ք. օրոք էլլան հօտին ուստի՞ ուր կ'երթայ :

Պ. Ք. օրոք էլլան հօտին կ'անցնի Մէքսիքոյէ և Միացեալ նահանգներէն սկսելով կ'երթայ մինչեւ ի պարանոցն ֆանամայի :

Հ. Գլխաւոր գաղաթները որո՞նք են :

Պ. Գ. Փ. Ք. Ք. Ա. Բ. Է. Ե. Բ. (5,400 բարձր.) հրաբղխային:

Փէտ առ Օրէշչա (5,300 բարձր.) հրաբղխային:

Փէտ առ Փէրօդէ (4,090 բարձր.) հրաբղխային:

Հ. Գլխաւոր գետերը որո՞նք են :

Պ. ՈՒ. Կ. Կրանթ տէլ Նօրթ, Բիո-տի-թամբէքօ և Սան-Ճուան :

Հ. Գլխաւոր ծովակները որո՞նք են :

Պ. Մէծագոյն ծովակն է Չափալու որ ունի 2560 քառակուսի հզմ. տարածութիւն :

Դ Ա Ա Կ Ը.

Բ. Կ Ո Ւ Ռ Դ է Մ Ա Լ Ա.

ՄԻԶԻՆ ԱՄ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱ.

1. Ցամաքային մասն

Հ. Միջին Ամերիկա ի՞նչ տէրութիւններէ կը բաղկանայ :

Պ. Կը բաղկանայ հինգ փոքր Հանրապետութիւններէ և Անդղիացւոց երկիրներէն որ 1824ին հաստատուեցան : Այս երկիրներն են, Կուսաբէժալ, Ան-Ալբարան, Հանդուրաս, Նէ-

Դարակուս և Քանդա-Ռիֆիու : ասոնք երկար ատեն Սպանիացւոց ձեռք էին :

Հ. Կուաղէմալայի սահմանադլուխն ուստի ուր է :

Պ. Կուաղէմալա Մէքսիքոյի հարաւային կողմէն սկսելով կ'երթայ մինչեւ ի պարանոցն ֆանամայի : Այս երկիրն կ'անցնի (Հիւսիսէ ի Հարաւ) բարձր գօտի մը, ունի շատ հրաբուղիներ, գետնաշարժն յաճախ է :

Հ. Երկիրն ի՞նչ կը բերէ :

Պ. Հողը շատ բարեբեր ըլլալով՝ կը բերէ ցորեն, եղիպատացորեն, բամբակ, շաքար, լեղակ, աղնիւ փայտեր, խահուէ և քարաօ :

Կուաղէմալայի համքերն հարուստ են, բայց անդորձ թողուած են :

Հ. Կիման ի՞նչպէս է :

Պ. Օդը բարեխառն է, բայց վատառողջ: Արուեստը, գիտութիւնը և ուսմունք ետ մընացած են :

Հ. Միջին Ամերիկայի ցամաքային մասին բնակիչք ո՞րչափ են :

Պ. Միջին Ամերիկայի ցամաքային մասին բնակիչք են իրր երեք միլիոն, բնակչաց մեծ մասն Ամերիկայի է . կան նաեւ եւրոպացիներ: Երկրին լեզուն Սպաներէն է, կրօնը՝ Հոռվ-մէկականութիւն :

Հ. Գլխաւոր քաղաքները որո՞նք են :

Պ. Կուսաբէժալ, գլխաւոր քաղաք (40,000) այս քաղաքէն 16 հզմ. հեռու ուրիշ քաղաք մը կար նոյն անուամբ, որ 1777 ին գետնա-

շարժէ կործանեցաւ : Տուները միայարկ են :
Պ. լէն (30,000) , Երեւելի են չէնքերը և
ձեռագործները :

Քոմակուտ կամ վաւարօնէր (20,000) , Անուա-
նի են համալսարանը և հիւանդանոցը , ունի
հարուստ հանգեր :

Սան-Մալթուր (10,000) , Հրաբուղիսի մը մօտ
է , 1854 ին գետնաշարժէ քաղաքին մեծ մասը
կործանեցաւ . առաջ ունէր 30,000 բնակիչ ,
հիմա աննշան քաղաքաց կարգն է :

Սան-Ճողէ (20,000) , Նոր շինուած վաճա-
ռաշահ քաղաք է :

Քարբակո կամ Կարբադէնէ (15,000) . Քոմու-
Ռէտու նահանգին մէջ :

Վերափառ կամ Քոպան (12,000) , Երջակաները
շատ բարերեր են , բայց տարին 9 ամիս գրե-
թէ անդադար կ'անձրեւէ :

Հ. Անդղիացւոց երկիրները որո՞նք են :

Պ. Անդղիացւոց երկիրներն են Մասկուս և
Հանդուրսակ դաղթականութիւնը :

Հ. Գլխաւոր լեռները որո՞նք են :

Պ. Գլխաւոր լեռներն են , Թայունուլուս , Ա-
նդիրան , Ֆուրս և Անուս , որ հրաբուղին են , վեր-
ջինը 4500 մէթր բարձրութեամբ կ'արձակէ
ստէպ կրակ , ջուր և քար . Մասայա հրաբրդ-
խին խառնարանէն կը վազէ ոսկւոյ նման տաք
նիւթ մը , զոր Սպանիացիք ի սկզբան ոսկի
կարծեցին :

Հ. Գլխաւոր գետերը որո՞նք են :

Պ. Գլխաւոր գետերն են , Ուստունուէնիս և

Սան-Ճուռակ , որ կը թափին յԱղլանտեան ով-
կիանոս :

Հ. Գլխաւոր ծովակներն որո՞նք են :

Պ. Գլխաւոր ծովակներն են , Նիւտունուս ,
Մանակուտ և Լուստ-Տուլէ :

Դ Ա. Ա Կ Թ.

Գ. ՀԱՐՍԻԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ

1. Քոյոմպեան հանրապետութիւնք



ՀԱՐՍԻԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՆ ԼԵՐԱՆՑ Մէջ ՀԱՄԲՈՐՈՒԹԻՒՆ

Հ. Քոլոմակեան հանրապետութիւնք որո՞նք
են :

Պ. 1497ին երբ Քոլոմազոս դատաւ Ամերիկա ,
Քոլոմազիա ունէր շատ բնակիչ և եր բաւական
ծաղկեալ : Առաջին անգամ Սպանիացիք տի-
րեցին այս երկրին , բայց 1811 ին բնիկներն
ապստամբելով կազմեցին երեք հանրապետու-
թիւն . Ա. Նոր-Կրանտոս . Բ. Վէնեցուելա . Գ. Իտա-
ռի որ դաշնակից են իրարու :

Հ. Քոլոմազիոյ սահմանն ուստի՞ ուր է :

Պ. Քոլոմազիոյ սահմանն է , Հիւսիսէն՝ Ան-
դիլեան ծով կամ Մէքսիկոյի ծոցը , Արեւել-
քէն՝ Պրազիլիա , Հարաւէն՝ Փէրու , Արեւմուտ-
քէն՝ Խաղաղական կամ Մեծ ովկիանոս :

Հ. Քոլոմազիա ո՞ր կլիմայի տակ է :

Պ. Քոլոմազիոյ մի մասն է լեռնային , միւս
մասը դաշտային : Այս երկիրն է այրեցած
գօտոյն տակ , բայց բարձր լերանց պատճա-
ռաւ ամէն տեղ տաք չէ հոն . Ներքին մասին
օդն է առողջ , իսկ ծովեղերաց օդը վատա-
ռողջ է :

Հ. Երկրին պտղաբերութիւնն ինչպէս է :

Պ. Հողն ընդհանրապէս բարեբեր է . կան
ընդարձակ և անբեր դաշտեր , որոց իւնուա-
նունը կուտան : Երկիրն է հրաբղային և շատ
երկրաշարժ կըլլայ հոն . գլխաւոր բերքն է
քաքաօ , բամբակ , ծխերդ , լեղակ , քինա և
տաք երկիրներու ամէն տեսակ պտուղ : Վա-
ճառականութիւնը և արուեստք , ինչպէս նա-
և հասարակաց կրթութիւնը ետ մնացած է :




ԲԱՄԲՈՒԿԻ ԳՈՂ

Հ. Հարաւային Ամերիկայի մէջ ո՞ր վայրէ
անասունք կան :

Պ. Կոկորդիլոս , դաբիր (խոզի նման անա-
սուն մը) , եակուար կամ Հարաւային Ամե-
րիկայի վագր , ալպագա՝ որուն բուրդը շատ
ազնիւ է , կապիկ , անդղ և ուրիշ շատ թըռ-
չուններ և վիթխարի օձեր :

Հ. Հարաւային Ամերիկայի մէջ ինչ տեսակ
պիտանի ծառ գտնուեցաւ :

Պ. Տեսակ մը ծառ որուն հիւթէն առա-
ձըգական խէժ (լաստիկ) կը շինուի :



ՀԱՐՍԻԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՆԱՍՈՒՆՔ

Հ. Երկրին բնակչաց մեծ մասն Բնչ ցեղէ է:
Պ. Բնակչաց մեծ մասն է սպիտակ և Եւրո-
պացի, մնացածը՝ պղնձագոյն բնիկ Ամերիկա-
ցի: Գլխաւոր լեզուն է Սպաներէն, բայց
ուրիշ լեզուներ եւս կը խօսուին: Կրօնքն է
Հռովմէականութիւն:

Հ. Նոր-կրանատայի գլխաւոր քաղաքը ո՞րն
է և բնակիչը ո՞րչափ է:
Պ. Նոր-կրանատայի բնակիչն է 2,750,000,
գլխաւոր քաղաքն է,

Պահուած կամ Առանս-ֆե-ու-Պահուած (40,000),
ծովէն 2250 մէթր վեր է քաղաքը, ուստի և
է օդը միշտ բարեխառն: Քաղաքը տգեղ է և
աղտեղի, բայց ունի նշանաւոր շենքեր և ու-
սումնարաններ:

Վէնէղուէլայի բնակիչն է (1,500,000),
գլխաւոր քաղաքն է.

Քարտաս (40,000), Ծովէն 20 հզմ. հեռա-
ւորութեամբ: Առաջական համանուն ծովակին
քով գեղեցիկ քաղաք է: ունի համալսարան.
օդը շատ տաք է: Այս քաղաքը մեծ վսաս կրած
է երկրաշարժէ:

Էքուադորի բնակիչն է (1,100,000), գլխ-
աւոր քաղաքն է,

Քուէն (80,000), Երկրագնակիս վրայ բարձ-
րագոյն քաղաքն է, 2900 մէթր բարձրութեամբ.
ունի համալսարան: օդը բարեխառն և ա-
ռողջարար, բայց երկրաշարժն անզակաս:

Կաբիւգին (27,500): Ունի ապահով և ծաղ-
կեալ նաւահանգիստ:

Բանան (10,000): Համանուն պարանոցին
վրայ ծաղկեալ նաւահանգիստ է: ասկէ մին-
չեւ Առէնուալ քաղաքը, որ Անդիլեան ծովուն
վրայ է՝ կայ երկաթուղի մը, որ կարճագոյն
ճամբան է Ադլանտեանէ ի Խաղաղական, և
Խաղաղականէ յԱդլանտեան ովկիանոսներն
անցնելու:

Փեէց (7,500), Վերջի խոռովութիւններէն
առաջ ունէր 20,000 բնակիչ և մեծ առու-
տուր: Հիմա շատ ինկած է:

Անուանի են նաեւ Մարտայիո (15,000) , Վալենցիա (15,000) , և Կոռանս (20,000) . այս վերջինն ունի շաքարի մեծամեծ գործարաններ :

Կալաֆակու կղզիները Խաղաղական ովկիանոսի մէջ էքուաթորի եղերը 1874 էն հետէ կը վերաբերին Միացեալ Խահանդաց . ասոնց մէջ շատ հրաբուղիս կայ և սոէպ երկրաշարժ կը լլայ :

2. Բէրու

Հ. Բէրուի վրայ Բնչ պատմական գիտելիք կայ :

Պ. Երբ Ամերիկա գտնուեցաւ , Բէրու հարուստ և զօրաւոր թագաւորութիւն էր , որոյ թագաւորք կը կոչուէին ինչ : Բէրուցիք ուկին առ ոչինչ կը համարէին . կըսուի թէ թագաւորին պալատան մէջ կային ոսկիէ շինուած ծառեր :

Սպանիացիք 1524 ին տիրեցին այս հարուստ երկրին , բայց 297 տարի ետքը , 1821 ին , Բէրուցիք ապստամբելով եղան անկախ հանրապետութիւն ,

Հ. Բէրուի սահմանները որո՞նք են :

Պ. Բէրուի սահմանն է , Հիւսիսէն՝ Քողովրդիա , Արեւելքէն՝ Պրաղիլիա , Հարաւէն՝ Պօլիկիա և Արեւմուտքէն՝ Խաղաղական ովկիանոս :

Այս երկրին ծովեղերեայ մասն անբեր , ա-

ւազուտ և անմարդաբնակ է . Անտեան գօտին ծածկած է ներքին մասն Հիւսիսէն ի Հարաւ . այս լերանց ստորոտը կան գեղեցիկ գաշտեր և բարեբեր հովիտներ , ուր կը տիրէ միշտ գարուն կամ աշուն :

Հ. Ի՞նչ տեսակ բերք ունի :

Պ. Բէրուի բերքն է գինի , օղի , շաքար , քինա , բամբակ և բարեխառն գօտւոյ ամէն տեսակ բերք :

Վայրի անասնոց մէջ կայ լուս , ոչխարի նման անասուն : Յած և խոնաւ տեղերը կան ահագին օձեր և անթիւ ճճիներ . տեսակ մը ճճի կայ Սուսնէլց անուն , որ թղթի նման բոյն կը լինէ :

Հ. Բէրուի մէջ Բնչ տեսակ հանքեր կը գտնուին :

Պ. Բէրուի մէջ շատ տեսակ հանք կայ , ոսկւոյ , արծաթի , սնդկի , պղնձի , կապարի և աղնիւ քարերու . 1868ի գետնաշարժը շատ քաղաքներ հիմնայատակ ըրաւ : Կուանօ կոչուած թռչնոյ աղբը որ երկիրը կը պարարտացունէ՝ Բէրուէ մեծ քանակութեամբ կը դրկուի յԵւրոպա : 1855 ին 70,000,000 Փրանքի կուանօ վաճառուեցաւ Եւրոպացւոց :

Արուեստք , վաճառականութիւն և ուսմունք ետ մնացած են :

Հ. Բէրու Բնչ տէրութիւն է , և բնակիչներն Բնչ աղգէ են :


Պ. Բէրու Հանրապետութիւն է . բնակչաց թիւն է 2,750,000 , որոց մեծ մասն Ամերի-

կացի է , մնացեալն՝ Սպանիացի և սեւամորթ :
Կրօնքն Հռովմէական է :

Հ. Գլխաւոր քաղաքները որո՞նք են :

Պ. Գլխաւոր քաղաքներն են , լիս (120,000),
զոր Սպանիացիք շինեցին 1524ին . ունի քանի
մը նշանաւոր շինքեր . հոս շատ գետնաշարժ
կ'ըլլայ :

Քաղաք , Լիսայի նաւահանգիստն է :



ՔԱՂԱՔ ՆԱԽԱՀԱՆԳԻՍՏ :

Քաղաք (40,000) , Բէրուի հին բնիկ թա-
գաւորութեան մայրաքաղաքն էր . ունի ի
հնուց մնացած երեւելի շինքեր :

Արեւէբա (20,000) , Դիլքը շատ գեղեցիկ ,
բայց մեծ հրաբուխի մը մօտ գտնուելով նշա-
ւակ է սոսկալի գետնաշարժերու :

Կուանաւուէլէտ (5000) , Այս քաղաքին մօտ են
բերուի ոսկւոյ , արծաթի և մնդկի հարուստ
հանքերն :

Հ. Բէրուի մէջ բարձր լերինք որո՞նք են :

Պ. Բէրուի մէջ Անդեան գօտոյն բարձ-
րագոյն գագաթներն են Փիչու-Փիչու (5670
մեթր բարձր) . Կուանաւուէլէտ (4137 մեթր
բարձր) . Արեւէբա (20,000) , որ ունի սոսկալի հրաբուղին :

Հ. Գլխաւոր գետերը որո՞նք են :

Պ. Գլխաւոր գետերն են Մարան , Հուալա-
եստայակ , որ իրարու խառնուելով կը թափին
Ամազոնաց գետը :

Հ. Գլխաւոր ծովակները որո՞նք են :

Պ. Գլխաւոր ծովակներն են , Լա-բէտուա-
Զէւստասուա :

Յ. Պօլիվիա կամ Վերին Բերու

Հ. Պօլիվիա ինչ տէրութիւն է :

Պ. Պօլիվիա 1825 էն հետէ աղատ հանրա-
պետութիւն է . բնակիչը երկու միլիոն որոց
մեծ մասն է բնիկ Ամերիկացի , մնացածն
եւրոպացի . կան նաև վայրենի ցեղեր : Կրօնքն
է Հռովմէական :

Հ. Որո՞ւ անուամբ Պօլիվիա կոչուեցաւ :

Պ. Պօլիվիա զօրապետին անուամբ , որ այն
երկրին աղատիչը և առաջին նախադահն էր :

Հ. Պօլիվիոյ սահմանն ուստի ուր կ'երթայ: Պ. Պօլիվիոյ սահմանն է, հիւսիսէն և արեւելքէն՝ Պրազիլիա, հարաւէն՝ լա Բլադա, արեւմուտքէն՝ Բէրու և Խաղաղական Ովկիանոս:

Միջին մասն է լեռնոտ, արեւելքան մասը՝ պտղաբեր, արեւմուեան մասն՝ անբնակ:

Հ. Պօլիվիա Բ'նչ տեսակ բերք ունի:

Պ. Պօլիվիոյ բերքն է գինի, ձեթ, շաքար, քինա և աղնիւ փայտ:

Հ. Ի՞նչ տեսակ հանք ունի:

Պ. Պօլիվիոյ լեռներն ունին արծաթի, պղղնձի և անագի հանք: Արծաթի հանքն առատադղն է. Քօրօքօրօյի պղնձի հանքերն եւս շատ հարուստ են:

Հ. Պօլիվիոյ կլիման Բ'նչպէս է:

Պ. Օդը տաք է և խոնաւ, բայց առողջարար:

Որովհետեւ Պօլիվիա Խաղաղական Ովկիանոսի վրայ նաւահանգիստ չունի. բերքը կ'անցնի Բէրուէ, թէպէտ ճամբաներն անհարժ են:

Հ. Պօլիվիոյ գլխաւոր քաղաքները որո՞նք են:

Պ. Զու+էստ+ա կամ Լաբադա (25,000). Սպանիացիք շինեցին 1529ին այս քաղաքը, որ ունի հոյակապ եկեղեցիներ, համալսարան, թանգարան և արծաթի մեծ հանք:

Լաբադ (75,000), գեղեցիկ քաղաք է. ասոր մօտ արծաթի հարուստ հանք կայ:


Շօշանդառ կամ Օրէբէլ (40,000), Այս քաղաքին հողերը լաւ մշակուած են:

Բօթօն (25,000), ունի առաստ արծաթի հանք:

Օբուր (8,000), մայրաքաղաք Պօլիվիոյ կառավարութեան:

Հ. Գլխաւոր լերինք որո՞նք են:

Պ. Այս երկրին մէջ Անտեան գօտուղն լեռ-



ԱՆՏԵԱՆ ԼԵՐԻՆՔ

ՆԵՐՆ են Թօւրու (7500 մեթր բարձր), Զէմբէտունք և Շահնամա:

Հ. Գլխաւոր գետերը որո՞նք են :

Պ. Գլխաւոր գետերն են, Պէսի, Մարմօնի,

Ուսուկը և Փարտիստ :

Հ. Գլխաւոր ծովակները որո՞նք են :

Պ. Գլխաւոր ծովակներն են, Թէ՛նիւստու:

Ելաւկնուստու:

4. Քիլի համար Զիլի

Հ. Զիլի Բնչ տէրութիւն է :

Պ. Սպանիացիք գտան Զիլի 1540ին. բայց բնակիչք 1818ին ապստամբելով եղան աղաս չանրապետութիւն, որ այժմ շատ ծաղկեալ է, և յառաջադիմութեան մասին կը համարուի երկրորդ՝ Ամերիկայի մէջ :

Հ. Զիլի Ամերիկայի ո՞ր կողմն է :

Պ. Զիլի կիյնայ բէրուի չարաւային կողմը, Անդեան լեռանց և Խաղաղական Ովկիանոսի մէջ :

Երկիրը լեռնային, բայց ջրարբի և պտղաբեր է :

Հ. Երկրին մշակութիւնն Բնչպէս է :

Պ. Հողը լաւ մշակուած է, գլխաւոր բերքն է ցորեն, գինի և ազնիւ պտուղ :

Պիտանի անասունք բազմացած են, և անպիտանք օր ըստ օրէ կը նուազին :

Հ. Զիլիի կլիման Բնչպէս է :

Պ. Օդը բարեխառն է և առողջարար. Սեպտեմբերէ մինչ Դեկտեմբեր կը տիրէ գարուն.

անձրեւն անօսր է. կ'անձրեւէ միայն Ապրիլ և

Օգոստոս ամիսներուն :

Հ. Բերու Բնչ հանք ունի :

Պ. Այս երկրին մէջ առատ են պղնձի, ոսկւոյ, արծաթի, անագի և բորակի (Կ-Ա-Շ-Ե-Շ-Ե) հանքեր. տարին կը վաճառուի 80 միլիոն ֆրանքի պղինձ :

Թէպէտ յառաջադէմ չեն արուեստք, հողագործութիւնը բաւական յառաջացած է: Ունի ծաղկեալ վաճառականնութիւն և օր ըստ օրէ կը յառաջանայ: Այս երկրին երկաթուղեաց գծերը շատ են:

Հ. Երկրին բնակիչք Բնչ սերնդէ են :

Պ. Երկրին բնակիչք երրորդական սերնդէ են, ընդհանրապէս Հոռվիմէական, բայց կրօնքն աղաս է :

Հ. Զիլիի գլխաւոր քաղաքները որո՞նք են :

Պ. Զիլիի գլխաւոր քաղաքներն են. Սանհան (120,000), մեծ և գեղեցիկ քաղաք. ունի ընտիր շէնքեր. անուանի համալսարան մը և բարձրագոյն դպրոցներ :

Վ. Ա-Ա-Բ-Ր-Ջ-Ի-Ց (70,000), Ունի գեղեցիկ նաւահանգիստ: Հարաւային Ամերիկայի վաճառաշահ քաղաքներէն մին է. և երկաթուղեաց գծով կապուած է մայրաքաղաքին հետ:

Գ. Շ-Ի-Ց (15,000), Համանուն գետին վրայ նաւահանգիստ է. ունի պղնձի մեծ առուտուր:

Ջ. Հ-Ջ-Ի (60,000), Պտղաբեր և լամակուած են: Կլիման ցուրտ և խոնաւ է, բայց առողջարար:

Հ. Անդեան գօտուցին վրայ ի՞նչ տեղեկութիւն կայ :

Պ. Անդեան գօտին Զիլիի ծովեղերաց մօտէն կ'անցնի , և այս պատճառաւ գետերը կարճ և շատ են : Փոքր ծովակներ եւս լի են :

Հ. Զիլիի լերինք որո՞նք են :

Պ. Զիլիի լերինք են , Ա. + Օ. Կ. Ի. Ռ. (7,000 մեջր բարձր) . Թ. Ա. Հ. Խ. Վ. (6400 մեջր բարձր) և այլք :

Զիլիի ծովեղերը ընդհանրապէս ժայռոտ և բարձր է :

Յ. Բարակուայ

Հ. Բարակուայի վրայ ի՞նչ գիտելիք կայ և ի՞նչ սերութիւն է :

Պ. Բարակուայ ժամանակաւ Սպանիացւց ձեռքն էր . բնակչաց մի մասը որ կուտանէ կը կոչուէր , Յիսուսեան կրօնաւորաց ձեռամբ կրթուեցաւ . բայց 1767 ին , Երբ այս կրօնաւորք երկրէն արտաքսուեցան , Բարակուայ եղաւ աղատ չանրապետութիւն : Բնակիչն է (1,500,000) :

Հ. Բարակուայի սահմանն ուստի ուր է :

Պ. Բարակուայի սահմանն է , Հիւսիսէն և Արեւելքէն՝ Պրաղիլիա , Հարաւէն և Արեւմուտքէն՝ Լա-Բլադա :

Հ. Երկրն ի՞նչպէս է :

Պ. Երկրն մեծ մասն է դաշտային , ջրարրի և շատ պտղաբեր . կը հասցունէ Ամերիկայի

բուսոց ընտիրները , ինչպէս՝ թէյ , ծխերդ , բամբակ և շաքար . չունի հարուստ հանք , միայն աղ և երկաթ կը հանուին :

Հ. Երկրին կլիման ի՞նչպէս է :

Պ. Օդը տաք է , չոր և առողջարար :

Հ. Երկրին յառաջադիմութիւնն ի՞նչպէս է :

Պ. Գիտութիւնք և արուեստք շատ ետ են . վաճառականութիւնը միայն կը ծաղկի օր ըստ օրէ :

Հ. Բնակիչք ի՞նչ սերնդէ են :

Պ. Բնակչաց մեծ մասը Ամերիկացի է . կրօնիւ չուովմէական , բայց կան կրապաշտներ :

Հ. Բարակուայի դլխաւոր քաղաքները որո՞նք են :

Պ. Բարակուայի դլխաւոր քաղաքներն են , Ա. + Օ. Կ. Ի. Ռ. (Վերաբերեան) (80,000) , Բարակուայ գետին վրայ անկանոն կերպիւ շինուած փոքր քաղաք է . հոս կը նստին Երկրին կառավարիչը և ազգեպիսկոպոսը :

Հ. Բարակուայ ուրիշ ի՞նչ յիշատակութեան արժանի քաղաք ունի :

Պ. Բարակուայի Երկրին յիշատակութեան արժանի ուրիշ քաղաք չունի , քանզի մնացեալ տեղերէն շատերը դիւդ են մանաւանդ քան քաղաք :

Հ. Բարակուայի լերինք որո՞նք են , և ի՞նչ գետ ունի :

Պ. Բարակուայի մէջ բարձր լեռ չկայ . դլխաւոր գետերն են Փաբակուան և Փաբանան , որոց վրայ շողենաւ չկրնար երթալ :

6. Ուրուկուայ

Հ. Ուրուկուայ Բնչ տէրութիւն է :

Պ. Ուրուկուայ յառաջ քան 1821 Սպանիացոց ձեռքն էր . Պրազիլիացիք 1821ին տիրեցին այս Երկրին , բայց քանի մը տարի Ետքը կորուսին զայն : Ուրուկուայ հիմա ազատ Հանրապետութիւն է , բնակչաց թիւն է 450,000 :

Հ. Ուրուկայի սահմանն ուստի ուր է :

Պ. Ուրուկուայի սահմանն է , Հիւսիսէն և Արեւելքէն՝ Պրազիլիա , Հարաւէն՝ Ովկիանոս , Արեւմուտքէն՝ Լավիլամա : Երկրին մեծ մասը դաշտային , անմշակ և անմարդաբնակ է :

Հ. Երկրին կլիման Բնչպէս է , և ինչ տեսակ անասուններ ունի :

Պ. Երկրին օդը խոնաւ է , բայց վնասակար չէ . անասնոց մեծագոյն մասն է ընտանի , և կը զրկուին մեծ քանակութեամբ օտար Երկիր :

Հ. Բնակիչք Բնչ ցեղէ են :

Պ. Բնակչաց մէջ շատ Գաղիացի կայ . կը րոնքն է Հոռվմէականութիւն :

Կառավարութիւնը մեծ խնամք ունի հասարակաց կրթութեան , արուեստից և վաճառականութեան , մանաւանդ քանի մը տարիէ հետէ :

Հ. Ուրուկուայի գլխաւոր քաղաքը ո՞րն է :

Պ. Ուրուկուայի գլխաւոր քաղաքն է ,

Մարե Վէրե (45,000) , Լա-Բլաթայի վրայ : Երկրին մայրաքաղաքն է , և ունի ծաղկեալ նաւահանգիստ :

Հ. Կլիման Բնչպէս է :

Պ. Կլիման խոնաւ է , ձմեռը շատ ցուրտ , և ամառը՝ շատ տաք . հոս մեծ փոթորիկներ կ'ըլլան ստէպ :

Հ. Երկրին գլխաւոր գետը ո՞րն է :

Պ. Երկրին գլխաւոր գետն է Ուխ Նէկր :

7. Լա-Բլադա կամ Արծարեայ
Հանրապետութիւն

Հ. Լա-Բլադա Բնչ տէրութիւն է :

Պ. Սպանիացիք 1515 ին գրաւեցին Լա-Բլադա . 1810 ին Երկրին բնակիչք ապստամբելով վանեցին Սպանիացիները , և զլա-Բլադա հրատարակեցին աղատ Հանրապետութիւն , որ կը կոչուի նաեւ Արծարեայ Հանրապետութիւն . բնակիչն է 4,900,000 :

Հ. Լա-Բլադայի սահմանն ուստի ուր է :

Պ. Լա-Բլադայի սահմանն է , Հիւսիսէն՝ Պուլիա , Արեւելքէն՝ Պրազիլիա և Ուրուկուայ , Արեւմուտքէն՝ Ջիլի :

Հ. Լա-Բլադայի Երկիրն Բնչպէս է :

Պ. Արեւելքան մասն է դաշտային , Արեւմրտեանը՝ լեռնային . իսկ Հարաւային մասն ունի ընդարձակ և անբեր դաշտեր :

Հողն ընդհանրապէս լաւ մշակուած չէ :

Հ. Լա-Բլադա Բնչ տեսակ բերք ունի :

Պ. Լա-Բլադայի գլխաւոր բերքն է գինի , ձեխ , բամբակ , շաքար և լուսակ աղնիւ բուրդ . ընտանիւ անասունք շատ են , ուստի և տեղա-

ցեր շատ մորթ կը վաճառեն : Վայրի անասնոց
մէջ կան կոկորդ Ելու և ջայլամն :

Հ. Լա-Բլադ-ա բնչ տեսակ հանքեր ունի :

Պ. Լա-Բլադ-այի մէջ կան շատ հանքեր ,
բայց չեն գործուիր , ոսկւոյ և արծաթի հան-
քերը միայն կը գործուին քիչ :

Հ. Լա-Բլադ-ա բնչ տեսակ կիմայ ունի :

Պ. Լա-Բլադ-այի օդը շատ տաք է . ժողո-
վուրդը շատ ետ մնացած է քաղաքակրթու-
թեան մէջ հակառակ ջանից կառավարու-
թեան , որ հիմա մեծ հոգ կը տանի յառա-
ջացնել երկիրը :

Վաճառականութիւնը Լա-Բլադ-ա գետոյն
միջոցաւ կըլլայ և օր ըստ օրէ կը ծաղկի :

Հ. Բնակիչք բնչ սերունդէ են :

Պ. Բնակչաց մեծ մասը բնիկ Ամերիկայի է ,
մնացածն՝ Եւրոպացի (Սպանիայէ) . կան նաև
Ավրիկեցի սեւ գերիք . կրօնքն է Հռովմէական :

Հ. Լա-Բլադ-այի գլխաւոր քաղաքները ո-
րո՞նք են :

Պ. Լա-Բլադ-այի գլխաւոր քաղաքներն են ,
Պաէնսո-Այէն (200,000) . Լա-Բլադ-ա գե-
տին վրայ վաճառաշահ քաղաք է . օդը մաքուր ,
փողոցները կանոնաւոր . ունի մեծ շնչքեր և
քանի մը ուտումնարան . մեծ նաւերն ստիպ-
ուած են քաղաքէն 12 հզմէր . հեռու կենալ ,
քանզի Լա-Բլադ-այի բերանն աւաղով լց-
ուած է :

Գ. Յառաջ (25,000) , Լա-Բլադ-այի ներքէն կող-
մը վաճառաշահ քաղաք է :

Մէնագլ (10,000) , Անտեան գօտույն ստո-
րուն է : Անուանի է ասոր գինին :

Փարանա կամ Պատուան (8,000) , Ժամանակաւ
էր Լա-Բլադ-այի հանրապետութեան գլխաւոր
քաղաքը :

Հ. Անտեան գօտին երկրին ո՞ր կողմն է :

Պ. Անտեան գօտին երկրին Արեւմտեան
կողմէն կանցնի :

Հ. Որո՞նք են գլխաւոր գետերը :

Պ. Գլխաւոր գետերն են՝ Լա-Բլադ-ա (2800
հզմ. երկայն) . աշխարհիս մեծ գետերէն մին
է : Փարանա և Ուրուկուա որ կը թափին Լա-Բլա-
դ-ա գետը : Ուչ-Սալանոս (1400 հզմ. երկ.) , որ
կը թափի Փարանա գետը :

8. Պրազիլիա

Հ. Պրազիլիա բնչ տեսակ կառավարութիւն է :

Պ. Պրազիլիա մինչեւ 1822 Բորթուկալցւոց
կը վերաբերէր . յետոյ Տօն-Բէդրօս Բորթո-
ւուկալի թագաւորին որդին եղաւ ինքնագլուխ
կայսր Պրազիլիոյ : 1835 էն հետէ Պրազիլիա
ծերակուտէ և երեսփոխանական ժողովէ
բաղկացեալ սահմանադրական կառավարու-
թիւն է : Բնակիչն է 11,000,000 :

Հ. Պրազիլիա Ամերիկայի ո՞ր կողմն է :

Պ. Պրազիլիա հարաւային Ամերիկայի Արե-
ւելեան կողմը ընդարձակ երկիր է . Հիւսի-
սային մասը դաշտային , տաք և վատառողջ .
Հարաւային մասը՝ լեռնային և պտղաբեր :

Հ. Պրազիլիա Բ'նչ տեսակ կլիմա ունի :

Պ. Պրազիլիա այրեցած գօտւոյ տակ է ,
ուստի և կլիման շատ տաք է . երբեմն եւս
ամիսներով կ'անձրեւէ :

Հ. Ի՞նչ տեսակ բերք ունի :

Պ. Հողը բերրի է , ուրեք ուրեք լաւ մշակ-
ուած .

Գլխաւոր բերքն է որիդ , խահուէ , շաքար ,
բամբակ , ծխերդ , քաքաօյ , լեղակ և Պրա-
զիլեան փայտ : Ընտանի անասունք շատ են .
վայրենիներն են , կապիկ , կոկորդիլոս , ջայ-
լամն և օձ :

Հ. Ի՞նչ տեսակ հանք ունի :

Պ. Պրազիլիոյ հանքերը շատ հարուստ են ,
մանաւանդ ոսկեոյ , աղամանդի և պղնձի
հանքերը : Անտառները կու տան շինուածոց
համար լաւ փայտ :

Հ. Երկիրն Բ'նչ յառաջադիմութիւն կ'ընէ :

Պ. Արուեստք և ճարտարագործութիւնք օր
ըստ օրէ յառաջ կ'երժան , ճանապարհաց և
երկաթուղեաց մեծ հոգ կը տարուի . երկա-
թուղեոյ երեք դիմ մայրաքաղաքէն կ'երթայ
մինչեւ ներքին քաղաքները : Ուսմանց և գի-
տութեանց մեծ հոգ կը տարուի , մեծ քա-
ղաքներու մէջ կան համալսարան , գովրոյներ
և ուսմանց վերաբերեալ հաստատութիւններ :

Հ. Բնակիչք Բ'նչ ցեղէ են :

Պ. Բնակչաց կէսը սեւ , մնացածէն մաս մը
եւրոպացի սերնդեամբ , մաս մը եւս բ'նիկ
վայրենի : Լեղուն է Բորթոկալերէն , կրօնից

ազատութիւն կայ , թէպէտ Պրազիլիացիք
ընդհանրապէս Հռովմէական են :

Հ. Պրազիլիոյ գլխաւոր քաղաքները որո՞նք
են :

Պ. Գլխաւոր քաղաքներն են , Ռիո-Շանէյրո
կամ Ռիո-Խանէյրո կամ Սան-Պետրուպէլան (300,000):
Աշխարհիս վրայ ապահովագոյն և մեծագոյն
նաւահանգիստներէն մին է . ունի գեղեցիկ
շնչեր , ուսումնարաններ և հարուստ թան-
գարան . վաճառականութիւնը ծաղկեալ է :

Պահէս կամ Սան-Պաւլու (120,000) . Ունի
գեղեցիկ նաւարան ուր մեծ առևտուր կը լիայ :

Փերնանդուս (30,000) . Երկու քաղաք միա-
ցած են . ունի ուսումնարաններ , գեղեցիկ
շնչեր և ծաղկեալ վաճառականութիւն :

Սան-Բատաւ (20,000) , Ունի ոսկեոյ մեծ հանք :

Վելւ-Ռիու (15,000) Պրազիլիոյ ներսն է .
ունի հարուստ արծաթահանք :

Փերնանդուս (15,000) , Լակապա-Ջու-Բատաւ ծո-
վակին վրայ մեծ և գեղեցիկ քաղաք է . ան-
ուանի են ուսման վերաբերեալ տեղերը , մա-
նաւանդ թատրոնը և նաւարանը :

Հ. Որո՞նք են Պրազիլիոյ գլխաւոր լերինք :

Պ. Պրազիլիոյ գլխաւոր լեռներն Ուրուկայի
սահմաններէն սկսելով կը տարածին դէպ ի
հիւսիս . գլխաւոր գաղաթներն են Փերնան-
(2900 մեթր բարձր) . Թաքօլումի (1850 մեթր
բարձր) :

Աշխարհիս մեծագոյն գետերն այս երկրէն
կ'անցնին : Ամազոնաց գետն (7500 կղմ. եր-

կայն) Անդեան գօտիէն բղխելով կը թափի Ալանտեան ովկիանոս երկու մեծ բերաններով, որ 100 էն 200 հզմ. լայնութիւն ունին. այս գետին վրայ դիւրութեամբ կը նաւարկուի : Ամազոնաց գետին մէջ կը թափին թագուհու (1280 հզմ. երկ.), Սնկու (1440 հզմ. երկ.) Ուէ-Նէկո (1500 հզմ. երկ.), Մառէարա-Սան-Ջրանչսի (1500 հզմ. երկ.) Ուէ-Ղրանդէ և Փառայիլու : Այս վերջինները կ'թափին Աղլանտեան ովկիանոս :

9. Կույանա

Հ. Կույանա Բնէ երկիր է :

Պ. Կույանա կը կոչուի երկիրը որ է ի մէջ Օրէնօքօյի և Ամազոնաց գետոյն : Այս երկիրին ներբին մասը վայրենի Ամերիկացւոց ձեռքն է, ծովեղը միայն կը վերաբերի երեք Եւրոպական տէրութեանց, Անդզիոյ, Հոլանտայի և Գաղիոյ : Բոլոր Կույանայի բնակչաց թիւն է 1/2 միլիոն :

Տարին ուժ ամիս գրեթէ անդադար կ'անձրեւէ, մնացած չորս ամիսը շատ տաք է, այնպէս որ անասունը կը մեռնին անօթութենէ և ծարաւէ :

Հ. Երկիրն Բնչպէս է :

Պ. Ծովեղը ցած է, ճախնային և անտառներով ծածկուած . կ'երեւի թէ ներբին մասն ունի անբեր դաշտեր, ծովակներ և շատ անտառներ . տաքութեան և խոնաւու-

թեան պատճառաւ այս երկրին մէջ բոյսերը շատ կ'աճին :

Հ. Ի՞նչ տեսակ բերք ունի :

Պ. Գլխաւոր բերքն է խահուէ, շաքար, խէժ, բարաօ, բամբակ և պղպեղ :

Հ. Երեք տէրութեանց կալուածներուն բընակիչը ո՞չչափ է և գլխաւոր քաղաքը ո՞ն է :

Պ. Անդզիական կալուածոց բնակիչն է 160, հազար, գլխաւոր քաղաքը՝ ձորչ-թառ 25,000 բնակչով մեծ և վաճառաշահ քաղաք :

Գաղիացւոց կալուածոց բնակիչն է 60,000, գլխաւոր քաղաքը՝ Փարամբէն 20,000 բնակչօք : Սուրինամ գետին վրայ վաճառաշահ քաղաք :

Հոլանտացւոց կալուածոց բնակիչն է 30, հազար, գլխաւոր քաղաքը՝ Քայն 5000 բընակիչօք . համանուն կղզւոյն վրայ առեւտրական քաղաք է : Նաբուշոն Գ. ի ժամանակ Գաղիոյ մէջ ապստամբ կարծուած դատապարտեալներն հոս կ'աքսորուէին . այժմ եւս քաղաքական յանցանօք մահապարտք կը դրկուին հոս :

10. Հարաւային ազատ Ամերիկա հարակոնիա

Հ. Հարաւային ազատ Ամերիկա Բնէ երկիրներէ կը բաղկանայ :

Պ. Հարաւային ազատ Ամերիկա կը բաղկանայ 1. Բարականիոյէ և 2. Հրու Երևէն :

4. Բաթակոնիա Ամերիկայի ցամաքին հարաւային ծայրը շատ ցուր-ո երկիր է : Արեւ-

մըտեան կողմը լեռնային, Արեւելեան կողմը
դաշտային :

Արեւելեան ծովեզը տաք և աւաղուտ
չունի քաղցր ջուր :

Բնակիչք են երկայնտհասակ, ձագկահեր,
շատ տգեղ և վայրենի, և բարեան կը կոչ-
ուին .

2. Հրց Երևել Բաթակոնիոյ հարաւային ծայ-
րը մեծ կղզի է, որ ուրիշ մանր մանր կղզինե-
րով կը կաղմէ Մակելանայ Արքիպեղագոսը,
ուր սոսկալի փոթորիկներ կը պատահին ատէալ,
կիման շատ ցուրտ է, բնակիչք վայրենի, ո-
րոց սնունդն է միայն ձուկ, փոկ և ջրաղուէս
կամ ջրշուն : Այս կղզիներուն մօտ են Մալա-
նան կամ Յալ-լառ կոչուած անբնակ կղզինե-
րը, Բաթակոնիոյ Արեւելեան դին, Ադլան-
տեան ովկիանոսի մէջ : Այս կղզիք երկու մաս
բաժնուած են Արեւելան և Արեւադրեան, կը կոչ-
ուին նաև Արքիպեղագոս . հոս Անդրիացիք
700 հոգւով գաղթականութիւն մը հաստա-
տած են : Այս երկիրն ունի գեղեցիկ նաւա-
հանգիստներ և շատ հանքեր : Կիման բարե-
խառն է . վայրի աղնիւ սագեր, փոկ և ուրիշ
անասունք շատ են :

Արեւմտեան Հնիկաստանի Արքիպեղագոսը
կամ Անդիլեան կղզիք

Հ. Անդելէան հրայ ինչ պատմական դի-
տելիք կայ :

Պ. Անդելէան կը կոչուին կղզիք որ են ի մէջ
Հիւսիսային և Հարաւային Ամերիկայի :

Հ. Անդելէան հրայ ուրիշ ինչ անուն կը տըր-
ուի :

Պ. Անդելէան հրայ կը կոչուին նաև Արեւմր-
